«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գեւորգ Խուդինյան

# ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2002

Աշխատանքն իրականացվել է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետազոտական ծրագրերի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհի միջոցներով:
Աշխատանքը երաշխավորվել է հրատարակության ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության եւ իրավունքի ինստիտուտ ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի կողմից:

# ԱՌԱՋԱԲԱՆ

Ղարաբաղյան շարժման եւ ԽՍՀՄ փլուզման արդյունքում հայ ժողովուրդը կրկին ձեռք բերեց պետականորեն ինքնակազմակերպվելու հնարավորություն, որի իրացման ավելի քան տասնամյա գործընթացում նա անխուսափելիորեն կանգնեց ոչ միայն նոր քաղաքական կառույցներ ու տնտեսական հարաբերություններ, այլև պետական կեցությանն անցնելու համար անհրաժեշտ գաղափարաքաղաքական ուղենիշեր մշակելու հրամայականի առաջ: Այդ խնդիրը որպես գաղափարախոսություն ունենալու պահանջմունք այս կամ այն կերպ գիտակցվում և արծարծվում էր ինչպես նախորդ, այնպես էլ ներկա իշխանությունների կողմից: Սակայն, սկզբնական շրջանում ամփոփվելով «պետական, թե՞ ազգային գաղափարախոսություն» պարզունակ հակաթեզի մեջ, այն վերածվում էր առկա իրողությունների անտեսման կեղծ-պետական /նախորդ իշխանությունների օրոք/ և զուտ ազգային-գաղափարախոսական /ներկա իշխանությունների ձևավորման շրջանում/ մոտեցումների փակուղային երկընտրանքի՝ մեր հանրությանը կանգնեցնելով երկու ցավալի ու տարօրինակ եզրահանգումների առաջ. **մենք պետական գաղափարախոսություն, իհարկե, դեռևս չունենք, իսկ ազգային գաղափարախոսության մասին մեկնաբանությունների քանակը գրեթե համընկնում է մեկնաբանների թվի հետ:**

Ուսումնասիրողների ու մեկնաբանների ճնշող մեծամասնության մոտ դեռևս չի ձևավորվել «գաղափարախոսություն» եզրույթի շատ թե քիչ միասնական ընկալում, որը հաճախ շփոթվում է ինքնություն, ինքնագիտակցություն, աշխարհայացք, հոգեկերտվածք և ոչ պակաս կարևոր այլ հասկացությունների հետ: Հետազոտողների մոտ նկատվում է նաև իրականության ընկալումը ոչ թե հենց իրենից, այլ պատկերացումից բխեցնելու և դրա հիման վրա ազգային գաղափարախոսությունը ոչ թե կոնկրետ դարաշրջանի պայմանների ու միջավայրի արտացոլում, այլ հավերժական, ի վերուստ տրված ինչ-որ արժեքային

համակարգ ներկայացնելու ձգտումը: Դա «գաղափարախոսություն» հասկացությունը «քաղաքականություն» կոչվող երևույթից կտրելու, այսինքն՝ աշխարհում մեր տեղի ու դերի որոնման գործնական եվ տեսական աշխատանքները միմյանցից բաժանելու, իսկ հաճախ էլ իրար հակադրելու անօգուտ ու անիմաստ փորձերի հետևանք է[1]:

Առաջնորդվելով այն ելակետային գաղափարով, որ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր մեզ՝ հայերիս, հարկավոր է ոչ թե գաղափարախոսություն ընդհանրապես /կամ զուտ գաղափարախոսություն/, այլ գաղափարախոսություն, որ բխում է մեր գործից և միաժամանակ հիմնավորում և առաջ է մղում այն, ներկա հետազոտության նպատակն ենք համարում հետևյալ խնդիրների քննությունը.

ա/ բացահայտել ազգային գաղափարախոսության տեղն ու դերը հայ ազգային-քաղաքական մտքի պատմության մեջ՝ համառոտ ակնարկի միջոցով ներկայացնելով ազգային գաղափարախոսության ձևավորման հանգրվանները,19-րդ և 20-րդ դարերում նրա դրսևորման ասպարեզները, ձևերն ու եղանակները, Հայաստանի վերանկախացման վերջին 10-12 տարիներին այս հասկացության նենգափոխման փորձերն ու ձևախեղման աշխատակարգերը,

բ/ սահմանել ազգային գաղափարախոսության էությունը պայմանավորող և նրա բովանդակության բաղկացուցիչ տարրերը հանդիսացող հիմնական,առանցքային գաղափարները,

գ/ հայ ժողովրդի բուն էությունից բխող հայկականության արժեքային համակարգի բացահայտման հիման վրա շարադրել Հայաստանի ու հայության քաղաքակրթական առաքելության մասին մեր պատկերացումները և հիմնավորել արդիականության պայմաններում այդ առաքելությունը վերստանձնելու համար նոր՝ ազգային-պետական գաղափարախոսություն[2] ստեղծելու անհրաժեշտությունը,

դ/ ազգային պետական գաղափարախոսության էությունն ու բովանդակությունը բացահայտելու միջոցով ներկայացնել արդիականության պայմաններում ազգային իդեալ, ազգային նպատակ, ազգային շահ, ազգային առաքելություն հասկացությունների մեր ընկալումը,

ե/ սահմանել ազգային պետական գաղափարախոսության կողմից առաջադրվող ազգային պետականության գաղափարախոսական մոդելը՝ դինամիկ հավասարակշռության բանաձևը և հստակեցնել նրա հիմնական բաղկացուցիչ տարրերը

զ/ եզրակացություններից ու շարադրանքի ամփոփումից հետո ներկայացնել կոնկրետ առաջարկություններ՝ ազգային-պետական գաղափարախոսության հիմնադրույթների հետագա կատարելագործման ու ամբողջացման, ինչպես նաև մեր կյանքի առանձին՝ քաղաքական,տնտեսական և հոգևոր-մշակութային բնագավառներում դրանց կիրառումն ապահովելու աշխատակարգերի մասին:

Նշված հիմնահարցերի ուսումնասիրության ընթացքում առաջնորդվելու ենք անցյալ դարասկզբի հայ փիլիսոփա Ե. Ֆրանգյանի կողմից առաջ քաշված փիլիսոփայական-աշխարհայացքային այն ելակետով,

---

[1] Թեմայի վերաբերյալ մինչև այժմ ստեղծված առավել ուշագրավ աշխատությունների բովանդակության քննական վերլուծությունը կիրականացնենք շարադրանքի առաջին՝ «Հայոց ազգային և պետական մտքի զարգացման ընթացքը» ենթագլխում, ուր ամենևին էլ չենք փորձելու մանրամասնել հայ քաղաքական մտքի կամ ազատագրական շարժումների պատմությունը, որոնց ուսումնասիրությունը չի մտնում ներկա հետազոտության նպատակների մեջ, այլ ձգտելու ենք խիստ համառոտ ակնարկի միջոցով ներկայացնել նոր ու նորագույն ժամանակներում հայության համար առավել բնորոշ գաղափարաքաղաքական արժեքների մեջ առկա ընդհանուր, տիպական դրսևորումները և դրանք խորհրդանշող անհատ-գաղափարախոսների հիմնական, ամփոփիչ բանաձևերը:

[2] «Ազգային-պետական գաղափարախոսություն» տերմինով մենք բնորոշում ենք վերջին տարիներին մեր քաղաքական շրջանակներում շրջանառվող «պետական գաղափարախոսություն» հասկացությունը,քանզի համոզված ենք,որ միայն պետական գաղափարախոսություն ձևավորելու նախկին իշխանությունների ձախողված փորձը և արդեն առկա՝ ազգային գաղափարախոսությունը «կանոնակարգման» ենթարկելու ուղղությամբ ներկա իշխանության օրոք ձեռնարկված քայլերը որևէ արդյունք չեն տվել և չեն տալու: Ազգային գաղափարախոսությունը պետք է մնա այնպիսին, ինչպիսին եղել է ու կա,իսկ ահա պետությանն անհրաժեշտ նոր գաղափարախոսությունը պետք է ելնի այն իրողությունից,որ մեր ազգի 2/3-ը ապրում է պետությունից դուրս: Սակայն,նոր՝ ազգային-պետական գաղափարախոսությունը հանդիսանալու է ոչ թե ազգային և պետական գաղափարախոսությունների բովանդակության պարզ համադրությունը,այլ նրանցից միայն երկրորդի գործառույթների իրականացնողը՝ արդիականության պայմաններում դիասպորալ ազգի և անկախ պետականության զուգահեռ գոյակցության փաստերի հաշվառումով:

որը հայտնի է համադրական մոնիզմ կամ պատմական ռեալիզմ անվամբ և հիմնվում է մարդու և միջավայրի, իսկ ավելի կոնկրետ՝ ազգի ու հայրենիքի միասնության և անբաժանելիության սկզբունքի վրա: Համաձայն այդ ելակետի, որը մեր ուսումնասիրության մեթոդաբանական հիմքն է, մարդ ու միջավայր շարքերի միասնությունը և միաժամանակ նրանց գործառույթային /ֆունկցիոնալ/ կախումը հնարավոր չէ ո՛չ լիովին տարանջատել և ո՛չ էլ մեխանիկորեն նույնացնել մեկը մյուսի հետ, քանզի «նրանց հիմքը մէկն է, հետեւապէս՝ հիմքի մասին տեսությունն էլ մէկ պէտք է լինի»[3]: Նման մեթոդը հիմնվում է ոչ միայն ազգ ու հայրենիք հասկացությունների միասնության ու անբաժանելիության սկզբունքով պայմանավորված՝ առաջինի անվտանգ գոյատևման ու երկրորդի անկաշկանդ զարգացման համար անհրաժեշտ աշխարհայացքային ելակետի, այլև այն համոզմունքի վրա, որ հայկական քաղաքակրթությունը ներքնապես ի սկզբանե ունեցել է համադրական բնույթ՝ իր մեջ ներառելով և միաժամանակ նաև իր ներսում հաշտեցնելով ու հավասարակշռելով առաջադիմության ու մարդու, ռացիոնալիզմի ու իռացիոնալիզմի, պայմանականորեն՝ Եվրոպայի ու Ասիայի հավերժական հակադրությունը: Ուստի համադրական մոնիզմը կամ պատմական ռեալիզմը հնարավորություն է տալիս ուսումնասիրության օբյեկտը քննել նրան բնորոշ ու հարազատ արժեչափերով՝ խուսափելով ինչպես «պատմության իմաստի» բացարձակացվող մեկնաբանություններից, որոնք ի վերջո հանգում են «պատմության ավարտի» մասին չարագուշակ կանխատեսումներին, այնպես էլ իռացիոնալ-ցեղային նախասկզբի ֆետիշացման վրա հիմնված արդի տեսություններից:

Ուսումնասիրության համար ընտրված այս փիլիսոփայական-աշխարհայացքային ելակետը թերի և ոչ ամբողջական կլիներ առանց հետազոտության ենթարկվող գաղափարախոսական ու քաղաքական երևույթների, մասնավորապես «ազգային գաղափարախոսություն» հասկացության ընկալման ու գնահատման պատմա-համեմատական

[3] Ե. Ֆրանգեան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը, Փարիզ, 1929, էջ 159:



մեթոդի: Տվյալ մեթոդը ի վերջո խարսխվում է այն ելակետային գաղափարի վրա, որ ի տարբերություն ազգային ինքնության ազգային գաղափարախոսությունը ոչ թե ազգին ի սկզբանե բնորոշ և անփոփոխ արժեք է, այլ կոնկրետ պատմափիլիսոփայական կատեգորիա, որը հատկանշական է միջնադարյան կրոնական ընկալումներից ձերբազատված, բայց դեռևս որպես լիարժեք ազգ-պետություն չամբողջացած ազգերին: Ուստի, պատմահամեմատական մեթոդը հնարավորություն է տալիս խուսափել ազգային գաղափարախոսությունը մի նոր՝ անփոփոխ դոգմայի վերածելու գայթակղությունից, բացահայտել վերջինիս ֆունկցիոնալ-կիրառական նշանակությունը՝ հիմնվելով գործի ու գաղափարի միասնության ու անբաժանելիության սկզբունքի վրա:

Չնայած ներկա հետազոտության նպատակը և՛ ազգային, և՛ ազգային պետական գաղափարախոսության ուսումնասիրությունն է, նրանում առկա հիմնական նորույթը ոչ թե ազգային գաղափարախոսության իրական բովանդակությունը բացահայտելու փորձն է, այլ առաջին հերթին հայոց նորանկախ պետականության համար խիստ անհրաժեշտ, ազգային-պետական՝ սկզբունքորեն նոր գաղափարախոսության հիմնական ուրվագծերի հստակեցումը: Մեր կարծիքով՝ հենց սրանով է պայմանավորված ոչ միայն ուսումնասիրության գիտական նորույթը, այլև նրա արդիական, այդ թվում նաև՝ կիրառական նշանակությունը: Այն կարող է նպաստել պետական շինարարությամբ և քաղաքական գործունեությամբ զբաղվող պաշտոնյաների ու քաղաքական գործիչների մոտ հայոց պետականության նպատակների և մեր ժողովրդի քաղաքակրթական առաքելության անխզելի կապի մասին աշխարհայացքային մոտեցումների ձևավորմանը, ինչպես նաև գաղափարական-քաղաքական առումով նոր սերնդի հասունացմանը միտված տարբեր կրթական ծրագրերի բովանդակության հարստացմանը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# Հայոց ազգային եվ պետական մտքի զարգացման ընթացքը

### *1. Ե՞րբ է ձևավորվել ազգային գաղափարախոսությունը*

Յուրաքանչյուր գաղափարախոսություն որոշակի իրականությունից և նրանից բխող արժեչափերի գաղափարական ընկալման և իմաստավորման համակարգ է, ուստի չկան ու չեն կարող լինել հավերժ գոյություն ունեցող, անփոփոխ գաղափարախոսություններ, որոնք արտացոլում են որոշակի հանրույթին մաս կազմող անհատների ու մարդկանց խմբերի հարաբերությունները՝ մեկմեկու և արտաքին աշխարհի հանդեպ, քանզի այդ հարաբերությունները ձևավորվում են կոնկրետ դարաշրջանի պահանջմունքների և նրանցից բխող խնդիրների հիման վրա: Բայց դրա հետ միասին ակնհայտ է նաև, որ յուրաքանչյուր հանրույթ իր ինքնության բյուրեղացման ամենավաղ շրջաններից սկսած, ձևավորում է պատկերացումների և արժեքների որոշակի համակարգ՝ որպես տվյալ ցեղի, ժողովրդի, իսկ հետագայում նաև ազգի ինքնագիտակցություն:

Նման գաղափարական համակարգերը հիմնվում են սեփականի և օտարի տարանջատման և առաջինի հիմնական, բնորոշ գծերի բացահայտման աշխատակարգերի վրա: Սակայն ինքն իրեն և շրջապատող աշխարհը ճանաչելու և արժեւորելու այդ նախնական փորձերը, ի տարբերության գաղափարախոսական բնույթ ունեցող համակարգերի, գերազանցապես հիմնվում են իրականության ստատիկ, անփոփոխ արժեչափերի գնահատման վրա և ավելի շատ հանդիսանում են ոչ թե կոնկրետ հարաբերությունների, այլ արդեն իսկ կայացած իրողությունների արտացոլումը: Ուստի նրանք ի վերջո դառնում են սեփական *ինքնության և նրանից բխող ինքնագիտակցության բաղադրիչները, որոնք կարող են վերածվել որոշակի գաղափարախոսության բաղկացուցիչների, եթե վերջիններիս մեջ ներառվի տվյալ ինքնությունից բխող նպատակի, նրա վրա հիմնված գործողությունների և այդ նպատակից ու գործողություններից բխող հարաբերությունների տարրը:*



Հայոց ինքնության բյուրեղացման վաղ շրջանին նույնպես բնորոշ են սեփականի, առանձնահատուկի և օտարի տարանջատման որոշակի գաղափարական պատկերացումներ՝ Հայկի ու Բելի առասպելից սկսած մինչև կոնկրետ պատմիչների դատողությունները շրջապատող աշխարհում միջնադարյան Հայաստանի զբաղեցրած տեղի ու դերի մասին:

Անշուշտ, դրանք որպես հայոց ինքնության և ինքնագիտակցության տարրեր, թափանցել են հետագայում ձևավորված ազգային գաղափարախոսության մեջ: Սակայն նման թափանցումների փաստը դեռևս չի վկայում, որ հայոց ազգային գաղափարախոսությունը ձևավորվել է արդեն տոհմա-ցեղային հարաբերությունների շրջանում:

Ավելին, կոնկրետ մեր պարագայում, պատմական ճակատագրի բերումով, հայոց ինքնության բյուրեղացման տոհմա-ցեղային, անտիկ և միջնադարյան շրջաններին բնորոշ պատկերացումներն ու արժեքները ազգային գաղափարախոսության մեջ են թափանցել ոչ թե իրենց բնականոն հոլովույթի արդյունքում, այլ նոր ժամանակների մեր լուսավորյալ-եվրոպա-կենտրոն մտածողության պրիզմայի մեջ բեկվելու հետևանքով: Պետականության կորստի և օտարի տիրապետության հետևանքով ձևավորվել է խոր և անթափանցելի անդունդ միջնադարի և լուսավորության դարաշրջանի հայի գաղափարական ընկալումների ու պատկերացումների միջև: Եվ այդ «հազարամյա մենության» ողջ ժամանակահատվածում գոյատևած հայ կրոնական համայնքը առաջնորդվել է Հայաստանյայց եկեղեցու ավանդական գաղափարախոսությամբ ու նրանից բխող՝ Մեծ Հայքի որպես քրիստոնեական հավատի նահատակների աճյունների հանգստավայր հանդիսացող սրբազնացված տարածքի և ողջ քրիստոնեական աշխարհում նրա զբաղեցրած առանձնահատուկ տեղի ու դերի /Երկիր Դրախտավայր/ մասին պատկերացումներով: Նորագույն ժամանակներում միայն, հայ մտածողների գրչի տակ, այդ սրբազնացվող տարածքը վերածվեց եվրոպական իմաստով ու ըմբռնումով հող-հայրենիքի:

Ուստի ակնհայտ է, որ ի սկզբանե ունեցել ենք ոչ թե ազգային գաղափարախոսություն, այլ մեր ինքնության ընկալման յուրահատուկ, սպեցիֆիկ արժեքային համակարգեր, որոնք քողարկվել են տոհմացեղային հարաբերությունների դարաշրջանից բխող առասպելների և միջնադարի կրոնա-միստիկական ընկալումների շղարշով:

Նոր ժամանակներում, աշխարհում սեփական տեղի ու դերի որոնման

ու հստակեցման ֆիզիկական և մտավոր ջանքերի, այսինքն՝ գիտակից ազգի նպատակամղված գործողությունների արդյունքում են միայն ստեղծվել անհրաժեշտ պայմաններ՝ սեփական ինքնության ընկալման նախորդ մտակաղապարների և գոյություն ունեցող իրականության՝ իրական Հայաստանի, իրական հայության և նրանց շրջապատող աշխարհի գաղափարախոսական ընկալման, այսինքն՝ միմյանց և արտաքին աշխարհի հանդեպ մեր քաղաքական հարաբերությունների գաղափարական արտացոլման համար: Դրա հետևանքով ազգային գաղափարախոսության ձևավորումն ընթացել է հայ կրոնական համայնքի ավանդական կենսաձևի և նրան բնորոշ ինքնագիտակցության հաղթահարման ճանապարհով: Այս հեղաբեկման գործընթացն սկսվել է XVII-XVIII դարերում, բայց հիմնականում ծավալվել է XIX դարում, որի արդյունքում փոխվել է նաև հայության քաղաքական կյանքի ղեկավար, առաջնորդող ուժը: Հայաստանյայց առաքելական եկեղեցին իր ավանդական գաղափարաբանությամբ հանդերձ, սեփական տեղը հարկադրաբար զիջել է ազգային կուսակցություններին, որոնք XIX դ. վերջից դարձան ոչ միայն հայ քաղաքական կյանքի հիմնական դերակատարները, այլև այն իմաստավորող գաղափարախոսության՝ ազգային գաղափարախոսության կրողները:

Այսպիսով, թեև ակնհայտ է, որ մեր քաղաքական մտքի մեջ «ազգային գաղափարախոսություն» եզրույթը հանդես է եկել փաստորեն 20-րդ դարի վերջերին, բայց որպես երևույթ այն ձևավորվել է ոչ թե հնագույն կամ միջնադարյան շրջանում, այլ նոր ժամանակներում, իսկ իր հիմնական գծերով՝ կոնկրետ հենց XIX դարում: Այն ունեցել է իր ձևավորման հանգրվանները, դրանք խորհրդանշող ազգի գաղափարական հայրերը և հանդես է եկել զուգահեռ ընթացող գաղափարական որոնումների և քաղաքական գործողությունների տեսքով: Նրա հիմքում ընկած է եղել նոր ժամանակներում հայ կրոնական համայնքի քայքայման գործընթացի անշրջելիության և արդիական–քաղաքական առումով ազգ, իսկ հետագայում էլ՝ ազգ-պետություն դառնալու անխուսափելիության գիտակցումը: Ազգի գոյատևման հին հենարանների փլուզման փաստի արձանագրումը և նոր հենասյուների որոնման փորձերը մեզանում ծավալվել են որպես ազգային և համամարդկային արժեքների համադրության նոր բանաձևերի որոնման՝ միմյանց հաջորդող փորձերի միասնական շղթա:



## *2. Ազգային գաղափարախոսության բյուրեղացման գործընթացը*

Հայաստանյայց առաքելական եկեղեցու ավանդական գաղափարաբանության կողմից առաջ քաշվող հիմնական բանաձևը շատ պարզ էր՝ «ազգ=եկեղեցի», ուրեմն՝ եկեղեցին հայության տունն է և «արտաքոյ եկեղեցւոյ Հայաստանեայց չիք ազգութիւն»:

Այդ հիմնական բանաձևի և նոր իրողությունների միջև առկա հակասության հաղթահարման գաղափարա-քաղաքական լուծումները մեզանում հետևյալ տեսքն են ընդունել:

Ժամանակակից հայ ազգի գաղափարական հայրերը նրանց նպատակները իրականացման ուղիներն ու միջոցները Մխիթարյան հայրեր հայագիտություն հայոց պատմության, լեզվի և Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրություն Խաչատուր Աբովյան կրթություն և լուսավորություն կրթության ու մշակույթի աշխարհականացում՝ աշխարհաբարի տարածումով Ստեփանոս Նազարյանց ժամանակակից ազգ դառնալու անհրաժեշտություն հայության վերածումը նոր՝ աշխարհիկ մշակույթ ունեցող ամբողջության Միքայել Նալբանդյան հող-հայրենիքի և ժամանակակից ազգի քաղաքական միասնության ապահովում զինված պայքար և հեղափոխություն Ղևոնդ Ալիշան Հայրենիքի գաղափարի արմատավորում պատմական անցյալի և հայրենի բնության պաշտամունք Մկրտիչ Խրիմյան Արևմտյան Հայաստանի որպես հայրենիքի և արևմտահայության որպես ճնշված, հարստահարվող ժողովրդի ազատագրություն Հայկական հարցի բարձրացում՝ սկզբում սուլթանական կառավարության, իսկ հետո նաև մեծ տերությունների առջև և «երկաթե շերեփի» քարոզ Գրիգոր Արծրունի Արևմտյան Հայաստանի ազատագրում՝ ռուսական զենքի միջոցով և արևելահայության բարգավաճում խնդրագրեր ռուսական կառավարությանը, լուսավորության տարածում, հայ բուրժուազիայի հարստացում ու հզորացում Րաֆֆի Արևմտյան Հայաստանի ազատագրում և պայքար ռուսականացման քաղաքականության դեմ՝ Արևելյան Հայաստանում զինված պայքար՝ հայդուկային մարտավարության կիրառումով՝ հույսը դնելով սեփական ուժերի վրա. նպատակը՝ ազգի ու հայրենիքի միասնականացում

Ազգային կուսակցությունները ամբողջացրին ժամանակակից հայ ազ-

| Ժամանակակից հայ ազգի գաղափարական հայրերը | Նրանց նպատակները | Իրականացման ուղիներն ու միջոցները |
|---|---|---|
| Մխիթարյան հայրեր | հայագիտություն | հայոց պատմության, լեզվի և Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրություն |
| Խաչատուր Աբովյան | կրթություն և լուսավորություն | կրթության ու մշակույթի աշխարհականացում՝ աշխարհաբարի տարածումով |
| Ստեփանոս Նազարյանց | ժամանակակից ազգ դառնալու անհրաժեշտություն | հայության վերածումը նոր՝ աշխարհիկ մշակույթ ունեցող ամբողջության |
| Միքայել Նալբանդյան | հող-հայրենիքի և ժամանակակից ազգի քաղաքական միասնության ապահովում | զինված պայքար և հեղափոխություն |
| Ղևոնդ Ալիշան | Հայրենիքի գաղափարի արմատավորում | պատմական անցյալի և հայրենի բնության պաշտամունք |
| Մկրտիչ Խրիմյան | Արևմտյան Հայաստանի որպես հայրենիքի և արևմտահայության որպես ճնշված, հարստահարվող ժողովրդի ազատագրություն | Հայկական հարցի բարձրացում՝ սկզբում սուլթանական կառավարության, իսկ հետո նաև մեծ տերությունների առջև և «երկաթե շերեփի» քարոզ |
| Գրիգոր Արծրունի | Արևմտյան Հայաստանի ազատագրում՝ ռուսական զենքի միջոցով և արևելահայության բարգավաճում | խնդրագրեր ռուսական կառավարությանը, լուսավորության տարածում, հայ բուրժուազիայի հարստացում ու հզորացում |
| Ռաֆֆի | Արևմտյան Հայաստանի ազատագրում և պայքար ռուսականացման քաղաքականության դեմ՝ Արևելյան Հայաստանում | զինված պայքար՝ հայդուկային մարտավարության կիրառումով՝ հույսը դնելով սեփական ուժերի վրա. նպատակը՝ ազգի ու հայրենիքիմիասնականացում |



գի գաղափարական հայրերի որոնումները և բանաձևեցին հայրենիքի քաղաքական և տնտեսական ազատագրության զույգ նպատակները, որոնց հատվածական /արմենականություն/ և միմյանց հակադրվող ու մեկմեկու չեզոքացնող /հնչակյաններ/ ընկալման անհաջող փորձերից հետո, գտնվեց նոր ժամանակներում հայության ազգային ու համամարդկային նպատակների ու արժեքների համադրության հստակ բանաձևը՝ ի դեմս ազգային գաղափարախոսության ամբողջացման առաջին, ամենատիպական օրինակը հանդիսացող Հ.Յ.Դաշնակցության գաղափարախոսության: ՀՅԴ-ն իր «Հայկական հարց+սոցիալիզմ» համադրական, այսինքն՝ զուտ հայկական բանաձևով, շարունակությունն ու զարգացումն էր ի սկզբանե հայկական քաղաքակրթության հիմքում առկա և նրա ծաղկման ու բարգավաճման դարաշրջաններում /հելլենիզմ, ոսկեդարյան մշակույթ և այլն/ հստակորեն դրսևորված քաղաքակրթական ավանդույթների՝ դարաշրջանի արժեքների ու նվաճումների և սեփական ազգային նպատակների միաձուլման:

Դրանով փորձ էր արվում ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ հայկական քաղաքակրթությունն իր բնականոն վիճակին վերադարձնելու, այսինքն. մի կողմից՝ որպես ազգ պետականորեն կազմակերպվելու, մյուս կողմից՝ ողջ առաջադեմ մարդկության մեկ մասնիկը դառնալու համար: Շնորհիվ այդ նոր համադրության բանաձևի և առաջին հերթին՝ նրա կիրարկմանն ուղղված գործնական-քաղաքական պայքարի, ՀՅԴ-ն և մյուս ազգային կուսակցությունները ստանձնեցին հայ ժողովրդի քաղաքական առաջնորդի դերը, որը հայոց պետականության կորստից հետո Հայաստանյայց առաքելական եկեղեցու մենաշնորհն էր:

XIX դարի երկրորդ կեսից սկսած, ազգային գաղափարախոսությունը դուրս մղեց հայ կյանքից կրոնական-մեսիանական բնույթի պատկերացումները՝ հարկադրելով անգամ Հայաստանյայց եկեղեցու արժեքային համակարգի հիման վրա ձևավորված պահպանողական հոսանքին վերածվել ազգային պահպանողականության, որի համար ազգն ավելի բարձր արժեք էր, քան եկեղեցին և բաղկացած էր մշակույթ + եկեղեցի բաղադրիչներից:

Նույն երևույթը տեղի ունեցավ լիբերալ հոսանքի հետ, որը XIX դարի վերջին մտնելով խոր ճգնաժամի մեջ, XX դարի սկզբին նույնպես որդեգրեց համադրական բնույթ ունեցող՝ հայկական հարց+ ազատական-ժո-

ղովրդավարական կարգեր բանաձևը, որը հետագայում հստակորեն ձևակերպվեց ու ամփոփվեց Ռամկավար-ազատական կուսակցության ծրագրում:

Այսպիսով, արդեն XX դարի սկզբին ազգային գաղափարախոսությունը վերածվեց տիրաբար իշխող արժեքային համակարգի, որը բխելով տարբեր սոցիալ-քաղաքական ելակետերից /սոցիալիստական, լիբերալ, պահպանողական/, միաժամանակ հստակորեն ընդհանուր ու միասնական էր իր ազգային-քաղաքական նպատակների գաղափարախոսական ընկալման տիրույթում, հանգելով Հայկական հարցի լուծման՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության և հայոց պետականության վերականգնման գաղափարներին: Այդ ընդհանրությունն արտացոլում էր պետականազուրկ, ազգային-ազատագրական պայքար մղող ազգի միասնությունը, որը հանդես էր գալիս ոչ թե որպես գաղափարախոսական պարտադրանք, այլ միանգամայն կամավոր ու գիտակցված ընտրություն: Փաստորեն, բացի բոլշևիկյան ոչ մեծ խմբակներից, ողջ հայ ժողովրդի գիտակից մասը XX դարասկզբին առաջնորդվում էր հենց այդ գաղափարախոսությամբ: Դա ըստ էության «գաղափարախոսական մենատիրություն» էր՝ առանց որևէ կոնկրետ ուժից բխող պարտադրանքի[4]:

Իր բնույթով և ազգային-քաղաքական արժեքների համակարգով միասնական ու ամբողջական ազգային գաղափարախոսությունը XX դարի սկզբին ներառնում էր հետևյալ հիմնական ենթահարցերը.

ա/ հայ ազգային-ազատագրական շարժման պատմական օրինաչափության և անխուսափելիության խնդիրը,

բ/ արևմտահայության ազատագրության ուղիների ու մեթոդների հարցը /զինված պայքար, թե՞ խաղաղ տնտեսա-մշակութային առաջադիմություն/,

գ/ հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման /օրիենտացիայի/ խնդիրը,

դ/ Անդրկովկասի հայության ազգային դիմագծի պահպանման անհրաժեշտությունը,

ե/ ճնշված ժողովուրդների հետ դաշինքի հաստատման և հայ-թաթարական ու հայ-վրացական հարաբերությունների բարելավման խնդիրներն Անդրկովկասում,

զ/ ազատագրական շարժման սոցիալական բովանդակությունը և այլն:

Ընդ որում, այդ և բազմաթիվ այլ հիմնահարցերի ընդհանուր ու միասնական գնահատականներից բխող առանձին, կոնկրետ լուծումների՝ նպատակի իրականացման մեթոդների տարբերությունը, որը նկատվում էր առանձին քաղաքական կուսակցությունների, ուղղությունների կամ անհատ-գաղափարախոսների մոտ, ամենևին էլ չէր կարող սքողել այն փաստը, որ իրենց բնույթով գերազանցաբար համազգային, համահայկական խնդիրների ընկալման ու արժեւորման տիրույթում նրանք փաստորեն միասնական էին, եթե ոչ նույնական: Դրանով ամբողջացող ազգային գաղափարախոսության ընդերքում հասունանում էր անկախության ձեռքբերման և ազգային պետականության վերականգման խնդիրը՝ հիմնված ազգային նպատակ /Հայկական հարց/ +համամարդկային նպատակ+իրականացման մեթոդ՝ եռանկյունաձև համակարգի վրա:

### *3. Հայ գաղափարախոսական մտքի արհեստական երկփեղկումը*

Մեծ Եղեռնը, Հայաստանի կարճատև անկախացումը և ապա խորհրդայնացումը խաթարեցին ազգային գաղափարախոսության բնականոն զարգացման ընթացքը: Տեղի ունեցավ նրա ծավալման համար անհրաժեշտ ենթահողի և այնտեղ բնակվող ժողովրդի ոչնչացումն ու դուրսմղումը, իսկ 1918-ին մի փոքրիկ հողակտորի վրա անկախություն հռչակած Հայաստանին իր վերքերը բուժելու և պետական շինարարությանն անցնելու ժամանակ չտրվեց: Ազգի նշանակալի մասի ոչնչացումով, նրա հայրենիքի մեծ մասի բռնազավթումով և մյուս մասի վրա՝ ազգերի գոյության անհրաժեշտությունը կասկածի տակ դնող բոլշևիկյան ինտերնացիոնալիզմի տիրապետության հաստատումով ազգային գաղափարախոսությունը ժամանակավորապես զրկվեց Հայրենիքում ծավալվելու հնարա-

[4] Ազգային իղձերի ու ձգտումների միասնության վրա հիմնված այս երևույթը, որը բնորոշ է ազգային-ազատագրական պայքարի կուլմինացիոն պահերն ապրող ժողովուրդների համար, ցույց է տալիս, թե որքան սխալ ու մակերեսային էր ժամանակին հնչած՝ ՀՀ առաջին նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի այն գնահատականը, համաձայն որի «Գաղափարախոսության մենատիրությունը հնարավոր է միայն բռնապետության կամ ամբողջատիրության պայմաններում, որ ապացուցվում է թե հայ ժողովրդի, թե համայն մարդկության պատմական փորձով», տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 26 ապրիլի, 1994թ., թիվ 77:

վորությունից: Ավելին, տեղի ունեցավ հայ քաղաքական կյանքի ու մտքի երկփեղկում, որը բացառում էր սեփական արմատներին, էությանը, քաղաքակրթական տիպին մոտենալու և որպես պետականություն նրան բնորոշ ու հոգեհարազատ որևէ մոդել մշակելու հնարավորությունը: Նման պայմաններում, ազգային և համամարդկային խնդիրների համադրության միջոցով՝ ողջ 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին 20-ամյակի ընթացքում տեղի ունեցող գաղափարախոսական սինթեզի պրոցեսը, որը հայ ժողովրդին մոտեցնում էր սեփական քաղաքակրթության ակունքներին և պայմաններ ստեղծում ազգային պետականության և նրան բնորոշ՝ ազգային-պետական գաղափարախոսության ձևավորման համար, մղվեց հետին պլան և սկսեցին ծավալվել ճիշտ հակառակ բնույթ ունեցող գործընթացներ: Սկիզբ առավ ազգային արժեքների և նրանց կրող ուժերի գաղափարական կոշտ հակադրությունը Հայաստանում հաստատված և այդ արժեքները մերժող բոլշևիզմի և նրա ապազգային-ինտերնացիոնալիստական գաղափարախոսության հետ: Կտրվելով հայրենի միջավայրից, ազգային կուսակցությունները հնարավորություն չունեին զարգացնել ազգային գաղափարախոսության դրույթները, առավել ևս՝ ձևավորել ազգային-պետական գաղափարախոսություն՝ մի երկրի համար, որը չէր ճանաչում իրենց գոյությունը: Իսկ հայրենի հողի վրա, բոլշևիզմի կողմից հայ ժողովրդին պարտադրվող գաղափարախոսությունը մերժում էր այն ամենը, ինչը ազգային էր: Խորհրդահայ իրականության մեջ սկսվեց «հայ ազգայնականների» գաղափարական քարկոծումը, իսկ Սփյուռքում՝ պայքարը բոլշևիզմի դեմ, որի նպատակն է «...ազգերի և հայրենիքների իսպառ ՉՈՒԼՈՒՄՆ ու ԱՆՀԵՏԱՑՈՒՄԸ»[5]: Նման պայմաններում համադրության և սինթեզի գաղափարը մղվեց հետին պլան և երկփեղկված հայ գաղափարախոսական միտքը սկսեց տեղավորվել ազգային-ապազգային պարզ հակաթեզի շրջանակներում: Չնայած հայրենի իրականությունից իրենց կտրվածությանը, Սփյուռքում գործելու տարիներին, մանավանդ 1920-60-ական թվականներին, ազգային կուսակցությունների տեսաբաններն ու գործիչներն ավելի ամբողջացրին, համակարգեցին ու հստակեցրին ազգային գաղափարախոսության դրույթները: Սակայն դրանք աստիճանաբար վերածվում էին փակ-համայնքային միջավայրում սրբազնագործվող պատկերացումների մի համակարգի՝ իրենց առանցքում ունենալով Հայ Դատի գաղափարը, որը միավորում էր փաստորեն ողջ Սփյուռքը: Սփյուռքում ձևավորվեց ազգային գաղափարախոսության է՛լ ավելի կանոնակարգված ու հստակ ըմբռնում, որի առանցքն էին կազմում ազգ, հայրենիք, անկախություն, Հայ Դատ, պահանջատիրություն հասկացությունները: Սփյուռքում ազգային գաղափարախոսության զուտ ազգային բաղադրիչի առաջնության ընդգծումը պայմանավորված էր ոչ միայն օտար միջավայրերի ամենակուլ ազդեցությունից պաշտպանվելու՝ հայ համայնքների ձգտումներով, այլև ավանդական ազգային կուսակցություններին զուգահեռ հանդես եկող ազգայնական նոր ուղղությունների ձևավորումով /Ցեղակրոնություն, Տարոնականություն/, որոնք ազգային գաղափարախոսությանը բնորոշ «ժողովուրդ» և «ազգ» հասկացություններից ավելի բարձր ու կարևոր տեղ հատկացրին «ցեղ» եզրույթին: Նույնը տեղի ունեցավ նաև «հայրենիք» հասկացության հետ: Հայրենիքի իրավա-քաղաքական հստակ ըմբռնմանը, որը հիմնավորվում էր ցեղասպանության ենթարկված ժողովրդի իրավունքների վերականգման և այդ իրավունքները ճանաչող պայմանագրերի, մասնավորապես Սևրի դաշնագրի դրույթների իրականացման անհրաժեշտությամբ, սկսեց փոխարինել «բնական հայրենիքի» գաղափարը, որը հիմված էր Հայկական բարձրավանդակի աշխարհագրական-ռելիեֆային առանձնահատկությունների և նրա վրա դարեր շարունակ բնակվող հայ ժողովրդի մարդաբանական տիպի անխզելի կապի ու փոխպայմանավորվածության ելակետի վրա: Փորձելով քննադատորեն վերանայել ազգային գաղափարախոսության դրույթները և նրա առանցքը կազմող ազգային արժեքների ու համամարդկային իդեալների համադրության գաղափարը և գտնել նոր՝ զուտ «...հայկական աշխարհայեցողութիւն, ազգային ընդհանուր դաւանանք»[6], նոր ազգայնականները փորձեցին «ազգայնացնել» անգամ ամենաազգային ուժի համարում ունեցող ՀՅԴ-ն, որի «Ծրագրի մէջ, - նրանց կարծիքով, - լեզու առած է եվրոպական-ռուսական դասակարգային մտածումը, պատմութիւնը՝ յայտնութիւնն է հայկական ցաւի եւ հերոսա-

[5] Վ. Նաւասարդեան, Հ. Յ. Դ. Գաղափարաբանութիւնը /Դաշնակցութեան 60-ամյակի առիթով/, «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950, Բոստոն, «Հայրենիքի» տպարան, 1950, էջ 213:

[6] Հայկ Ասատրյան, Տարոնական աշխարհայեցողություն, «Արթնացի՛ր հայ մարդ», Երևան, 1998թ., էջ 90:

կան ոգիի»[7]: Հարստացնելով ու ամրապնդելով ազգային գաղափարախոսության նժարներից մեկը, ազգայնական բնույթ ունեցող այս տեսությունները, անշուշտ, որոշակի դրական դեր խաղացին Սփյուռքի կյանքում: Սակայն, դրան զուգահեռ, ակնհայտ դարձավ, որ նրանք ի վիճակի չեն Սփյուռքում խաղալ այն առանցքային դերը, որն ունեցան ՀՅԴ-ն և մյուս կուսակցությունները, մի կողմից՝ ազգային գաղափարախոսության ամբողջացման, իսկ մյուս կողմից՝ համամարդկային արժեքների հետ նրա կապը պահպանելու առումով: Այդ պատճառով ամենևին էլ պատահական չէր, որ Ցեղակրոնության ու Տարոնականության գաղափարական հայրերը շարունակում էին գիտակցել ու կարևորել ավանդական կուսակցությունների գաղափարաքաղաքական դերը՝ իրենց դիտելով որպես ազգային գաղափարախոսության ընդհանուր «ծառի» ճյուղերից մեկը: Հատկանշական է, որ ազգային գաղափարախոսության և նրա կրողներից մեկը հանդիսացող ՀՅԴ-ի համադրական աշխարհայեցողության ամենատիպական գնահատականները ևս տվել են ցեղակրոնության գաղափարախոսները և անձամբ՝ Գարեգին Նժդեհը. «Դաշնակցութիւնը հսկայ մի փորձ էր՝ կանգնեցնելու հայութեան անկման անիւը. մի փորձ՝ ի մի ձուլելու հայ էութեան միմեանց լրացնող բեւեռները՝ Մամիկոնեան ռազմունակութիւնը եւ Բագրատունեաց կուլտուրական ոգին/ ընդգծումը մերն է. Գ. Խ./: Նա մի վճռական ճիգ էր՝ համադրելու մեր ժողովրդի կամքն ու ստեղծագործ հանճարը. մի ճիգ կրօնական համայնքը, որին, բռնութեան քմահաճոյքով, վերածուած էր հայութիւնը, վերստին դարձնելու պետութիւն եւ պատմութիւն կերտող մի ազգ»[8]:

Այսպիսով, հայապահպանության և Հայ Դատի պայքարին ուժականություն հաղորդելու համար փորձելով հասնել ազգային գաղափարախոսության զուտ ազգային բաղադրիչի ուժեղացմանն ու խորացմանը, Ցեղակրոնության հայրերը և մանավանդ՝ Գարեգին Նժդեհը, միաժամանակ հստակորեն մատնանշում էին հայոց ազգային գաղափարախոսության համադրական բնույթը՝ բացահայտելով նրա պատմական ակունքները և հայկական քաղաքակրթության ներսում ի սկզբանե առկա՝ հայի էությունը կազմող տարերքների ներքին երկվությունը: Սա իր բնական գոյավիճակից շեղված ժողովրդին ցնցելու, արթնացնելու համար հարկադրաբար ծայրահեղորեն ազգայնական դարձած, բայց սեփական էությանն ու հայկական քաղաքակրթության ստեղծագործ առաքելությանը հավատարիմ Մեծ հայի պատգամն էր իր գաղափարակիցներին եւ ապագա՝ ավելի բարվոք վիճակում ապրելու ու ստեղծագործելու հնարավորություն ունեցող սերունդներին:

[7] Հայկ Ասատրյան, Տարօնականութիւն, ցեղակրօնութիւն, Դաշնակցութիւն, նույն տեղում, էջ 84:

[8] Գարեգին Նժդեհ, Ցեղի ոգու շարժը, «Հատընտիր», Երևան, «Հայաստան», 2001, էջ 146:



### *4. Ազգային գաղափարախոսությունը որպես Հայրենիք-Սփյուռք գաղափարական կամրջի հիմք*

Քանի որ ԽՍՀՄ գոյության 70 տարիների ընթացքում ազգային գաղափարախոսությունը կրող ուժերը զրկված էին հայրենի հողի վրա ծավալվելու հնարավորությունից, նրանք իրենց հայապահպան գործառույթները իրականացնում էին նախ և առաջ Հայ Դատի պայքարը գաղափարապես հիմնավորելու միջոցով: Հայ Դատի գաղափարաբանությունը, որը ընդհանուր էր Սփյուռքի բոլոր քաղաքական ուժերի մոտ և կազմում էր նրանց ազգային-քաղաքական ընկալումների միջուկը, ազգային գաղափարախոսության դրսևորման կոնկրետ ձևն էր՝ սփյուռքյան-համայնքային միջավայրում: Նա պաշտպանում էր իրավազրկված հայության՝ իր հայրենիքին վերատիրանալու իրավունքները՝ հիմնվելով ազգի ու հայրենիքի միասնության ու անբաժանելիության կանխադրույթի վրա: «Ազգը՝ շարժուն /ու ոգեղինացած/ հայրենիքն է, մինչ հայրենիքը՝ անշարժ /ու նիւթականացած/ ազգը»[9],- գրում է Վահան Նավասարդյանը: Գաղափարաքաղաքական նույն ելակետի վրա էր կանգնում մյուս խոշոր կուսակցության՝ ՌԱԿ-ի գաղափարական առաջամարտիկ Գերսամ Ահարոնյանը՝ առաջ քաշելով **«Բռնագրաւեալ հողերու ազատագրումով ամբողջացած հայկական հարազատ պետութեան սահմաններուն մէջ՝ համախմբեալ մէ՛կ ժողովուրդ եւ մէ՛կ մշակոյթ եւ մէ՛կ քաղաքակրթութիւն»**[10] նշանաբանը:

[9] Վ. Նաւասարդեան, Հ.Յ.Դ. գաղափարաբանութիւնը /Դաշնակցութեան 60-ամեակի առիթով/, «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան», Բոստոն, «Հայրենիքի» տպարան, 1950, էջ 203:

[10] Գերսամ Ահարոնեան, Մեծ երազի ճամբուն վրայ, գ. տպագր., Լոս-Անճելէս, 1986, էջ 222:

Խորհրդային Հայաստանում այս ընդհանուր արժեքային համակարգը մերժելու և դատապարտելու բոլշևիկյան մտածելակերպը 1950-ական թվականներից՝ սառը պատերազմի խորացման և Թուրքիայի ՆԱՏՕ-ի անդամ դառնալու ժամանակներից սկսած, ներքնապես ճեղքվում էր ու տարամիտվում՝ հին, ուղղափառ, ստալինյան տիպի բոլշևիկների մերժողական կեցվածքների և նոր սերնդի հայ կոմունիստ-տեսաբանների՝ մարքսիզմ-լենինիզմի և ազգային պատմության ու ավանդույթների միջև կամուրջ ձգելու փորձերի միջև: Նման երևույթը հանգեցնում էր նրան, որ Խորհրդային Հայաստանում ևս սկիզբ էր առնում որոշ չափով վերևից թույլատրված, իսկ որոշ չափով էլ՝ ինքնաբուխ ձևով հասունացող ազգային-քաղաքական զարթոնքի ալիք, որը դառնում էր արհեստականորեն երկատված ազգի երկու հատվածների միջև գաղափարախոսական կամուրջների որոնման սկիզբը: Ընդ որում, ի տարբերություն Սփյուռքի, Խորհրդային Հայաստանում ազգային գաղափարախոսությունը թափանցում էր ժողովրդի գիտակցության մեջ առաջին հերթին բեկվելով քարոզչության ավելի լայն հնարավորություններ ստեղծող արվեստի ու մանավանդ՝ գրականության մեջ: Հովհաննես Շիրազի և Պարույր Սևակի բանաստեղծություններն այդ առումով ավելի մեծ ու անմիջական ազդեցություն էին ունենում, քան ամենալուրջ գիտական ուսումնասիրությունները: Դրա հետևանքով, Խորհրդային Հայաստանում ևս 1960-ականների կեսերից սկիզբ էր առնում ազգային իրավունքների վերականգնման՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և բռնագրավված հողերի վերադարձի նպատակներին ուղղված մի գաղափարաքաղաքական շարժում, որը սկսում էր առաջնորդվել ազգային գաղափարախոսության՝ աստիճանաբար հայաստանյան պայմաններին ու միջավայրին համապատասխանեցնող դրույթներով:

Ազգային գաղափարախոսությունը խորհրդահայ իրականության մեջ փորձում էր հարմարվել ազգային-ազատագրական շարժումների պատմականորեն օրինաչափ ու առաջադիմական լինելու մասին մարքսիզմ-լենինիզմի դրույթներին և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման, հակաթուրք պայքարում անդրկովկասյան ու բալկանյան ժողովուրդների ձեռք բերած պատմական հարուստ փորձի ու ավանդույթների վերաիմաստավորման և անգամ՝ Հայոց ցեղասպանության իրականացման գործում ոչ միայն Թուրքիայի ու պանթուրքիզմի, այլև Գերմանիայի ու Իսրայել պետությունը հիմնադրած սիոնիզմի պատմական պատասխանատվության մասին դրույթներով: Նման գաղափարախոսության և այն հիմնավորող պատմագրության /Մկրտիչ Ներսիսյան, Աշոտ Հովհաննիսյան, Ջոն Կիրակոսյան և այլք/ ու հասարակական-քաղաքական մտքի /Սիլվա Կապուտիկյան, Զորի Բալայան և այլք/ քողի տակ հստակորեն ուրվագծվում էին Սփյուռք-Հայրենիք գաղափարաքաղաքական կապերի ամրապնդման և միաժամանակ՝ խորհրդային կենտրոնի աջակցությունը ստանալու քաղաքական նպատակները: Միաժամանակ, ակնհայտ էր դառնում նաև, որ ինչպես Սփյուռքում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում տեղի է ունենում ազգային գաղափարախոսության դանդաղ, բայց հետևողական դեֆորմացում: Սփյուռքում այն դրսևորվում էր մի կողմից՝ ավանդական ազգային կուսակցությունների ու հոսանքների մոտ դարասկզբին բնորոշ սոցիալիստական /ՀՅԴ/, սոցիալ-դեմոկրատական /Ս. Դ. Հնչակյան կուսակցություն/ և լիբերալ /ՌԱԿ/ աշխարհընկալումների անփոփոխ պահպանման ու կոնսերվացման տեսքով, իսկ մյուս կողմից՝ Հայ Դատին ու ազգային գաղափարախոսությանը հավատարիմ նոր՝ 1970-1980-ական թվականների սերնդի մոտ ազգայնական տրամադրությունների ուժեղացման և դրա հիման վրա՝ զինյալ պայքար մղելու և նրան համապատասխանող զուտ ազգային գաղափարախոսություն որդեգրելու /ԱՍԱԼԱ/ փորձերի ձևով: Նման գործընթացները հանգեցնում էին հայոց ազգային գաղափարախոսության վերածմանը փակ- համայնքային միջավայրի գաղափարական պահանջմունքների սպասարկողի: Իսկ Խորհրդային Հայաստանում ազգային գաղափարախոսության դեֆորմացումը ընթանում էր ոչ թե նրա համամարդկային բաղադրիչի դուրսմղման կամ կոնսերվացման, այլ ազգային բաղադրիչի կարևորագույն մասը հանդիսացող՝ անկախության ու անկախ պետականության գաղափարի ձևախեղման տեսքով, որն ընդունում էր «հայերն ուզում են ոչ թե անկախություն, այլ հող» միակողմանի բանաձևի տեսք: ԽՍՀՄ-ի հզորության և թվացյալ անխորտակելիության պատրանքի պայմաններում մարտավարական նպատակներով միանգամայն հասկանալի այս ձևակերպումը հետագայում Պերեստրոյկայի և ԽՍՀՄ փլուզման դարաշրջանում դառնում էր հայ ազգային-գաղափարախոսական մտքի մեջ նոր ճեղքվածք ստեղծած «անկախություն, թե՞ պահանջատիրություն» փակուղային բանաձևի հիմքը:

## *5. «Ազգային գաղափարախոսություն» հասկացության ծագումը. նրա նենգափոխման փորձերն ու ձևախեղման աշխատակարգերը*

Հայ ժողովրդի երկու՝ հայաստանյան և սփյուռքյան հատվածների գաղափարա-քաղաքական որոնումների աստիճանաբար միմյանց մոտեցող կորագծերը հատվեցին իրար՝ ԽՍՀՄ փլուզման և Հայաստանի անկախացման դարաշրջանում: Այդ օրերին ժողովրդավարության ու խոսքի ազատության և միաժամանակ ոտնահարված ազգային իրավունքների վերականգնման համար պայքարը սկզբում հանդես էր գալիս որպես մեկ ամբողջություն: Բայց քիչ անց, նա աստիճանաբար տարամիտվում ու դեֆորմացվում է՝ վերածվելով Նոր մտածողության և ազգային գաղափարախոսության հակաթեզին: Նման հակաթեզի ձևավորման դարաշրջանում էլ տեղի ունեցավ վաղուց արդեն գոյություն ունեցող երևույթի՝ ազգային գաղափարախոսության «անվանակոչման» գործընթացը:

«Ազգային գաղափարախոսություն» հասկացությունը չի օգտագործվել ո՛չ նախախորհրդային և ո՛չ էլ Սփյուռքի հայ ավանդական քաղաքական մտքի մեջ, քանզի և՛ մեկը, և՛ մյուսը խորապես ազգային բնույթ ունեին: Բոլշևիզմի պարտադրանքն էր, որ ստեղծեց ազգային-ապազգային հակաթեզը: Խորհրդահայ իրականության մեջ «ազգայնական գաղափարախոսություն», իսկ հետագայում էլ՝ «ազգային գաղափարախոսություն» հասկացությամբ բնորոշում էին Սփյուռքում գոյություն ունեցող բոլոր քաղաքական ուժերի և առաջին հերթին ՀՅԴ-ի գաղափարաքաղաքական արժեքների ընդհանուր՝ համահայկական շերտը, որի առանցքում ընկած էր Հայ Դատի գաղափարը: Կոմունիստական գաղափարախոսության կապանքներից դեպի ազգայնականություն գաղափարական անցում կատարող խորհրդահայ մտավորականությունն այդ արժեքային համակարգն ընկալում էր որպես մեկ ամբողջություն, այն հակադրելով կոմունիստական ինտերնացիոնալիզմին, իսկ հետագայում էլ՝ Նոր մտածողությանը բնորոշ աշխարհաքաղաքացիական հովերին: Հենց այդ մտավորականությունն էլ ԽՍՀՄ կործանման և Հայաստանի անկախացման դարաշրջանում ասպարեզ նետեց դեռևս ժամանակակից հայ ազգի ձևավորման ու ազգային-ազատագրական շարժման վերելքի դարաշրջանում ի հայտ եկած, վաղուց արդեն գոյություն ունեցող երևույթի նոր, ամբողջական



բնորոշումը՝ «ազգային գաղափարախոսություն» հասկացությունը: Ի տարբերություն Սփյուռքի գոյության 70-ամյա ժամանակահատվածի, երբ ազգային գաղափարախոսությունը հանդես էր գալիս որպես տարբեր մտածողների, հոսանքների և կուսակցությունների՝ իր էության մեջ միասնական, բայց ձևով տարանջատված ազգային-քաղաքական ընկալումների համահայկական շերտ, 1980-90-ական թվականների սահմանագծին, երբ օրակարգի էր դրված պետական անկախության վերականգնման խնդիրը, անխուսափելի էր դառնում նաև այդ էության ու ձևի միաձուլումը՝ որպես Հայաստանի ոչ վաղ անցյալի ու ներկայի միասնական ընկալում՝ ազգային գաղափարախոսություն: Արդեն իսկ գոյություն ունեցող երևույթին տրվող այս բնորոշումը դառնում էր Ղարաբաղյան շարժման, իսկ քիչ անց նրան Հայաստանի անկախացման դարաշրջանում գոյություն ունեցող երկու գաղափարաքաղաքական հոսանքներից մեկի դրոշը, սեփական պատմությանն ու ճակատագրին հավատարմության խորհրդանիշը՝ ի հակադրություն այն Նոր մտածողության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ Ղարաբաղյան շարժման մյուս թևի կողմից գործադրվող ջանքերի: Նման պայմաններում բնական էր և օրինաչափ, որ Շարժման այդ երկրորդ թևը և հետագայում նրա հիմքի վրա ձևավորված քաղաքական ուժը՝ ՀՀՇ-ն, անհաշտ պայքար էին ծավալում տվյալ հասկացության ու նրա կողմնակիցների դեմ և պնդում, որ «ազգային գաղափարախոսություն» տերմինը սոսկ շղարշ է՝ քողարկելու համար ռեալ կերպով գոյություն ունեցող իրենց քաղաքական հակառակորդի՝ ՀՅԴ-ի գաղափարախոսությունը:

Հաշվի չէր առնվում այն հանգամանքը, որ այդ նույն արժեքային համակարգը բնորոշ էր պատմական մի ամբողջ դարաշրջանում՝ XIX և XX դարերում հայրենիքի ազատագրման, նրա հողերի ամբողջացման ու պետականության վերականգնման համար պայքարող հայության բոլոր գաղափարական հոսանքներին՝ բացառությամբ նրան արհեստականորեն պարտադրված կոմունիստական ինտերնացիոնալիզմի:

Ուստի պայքարը «ազգային գաղափարախոսություն» հասկացողության արմատավորման փորձերի դեմ վերածվում էր պատմական մի ամբողջ դարաշրջանի և նրան բնորոշ արժեքների մերժման: Իրենց հերթին, ձևավորվող լիբերալ-աշխարհաքաղաքացիական հոսանքին հակադրվող ազգային գաղափարախոսության կողմնակիցների մի մասը, յուրացնելով

Սփյուռքում գոյություն ունեցող ՀՅԴ-ի, ՌԱԿ-ի և այլ կուսակցությունների ու հոսանքների ազգային-քաղաքական ընդհանուր դավանանքը /որի առանցքում Հայ Դատի գաղափարն էր/ և այն կտրելով վերջինիս հետ անխզելիորեն կապված սոցիալ-քաղաքական բնույթի պատկերացումներից, «ազգային գաղափարախոսություն» հասկացությունը հաճախ ընկալում էին որպես համամարդկային արժեքներից կտրված, զուտ ազգայնական գաղափարախոսություն, մոռանալով, որ հայկական ազգային գաղափարախոսությունն իր հիմքում միշտ էլ համադրական բնույթ է ունեցել: Ազգային-ավանդական արժեքների նման մեխանիկական ընկալման և «կանոնակարգման» փորձերը գաղափարը կտրում էին իրականությունից, այն դարձնում կոսմոպոլիտներին հակադրվող մարգինալ ազգայնականության դրոշ:

Այսպիսով, Սփյուռքում ու Խորհրդային Հայաստանում 70 տարի շարունակ արձանագրված ազգային-գաղափարախոսական մտքի ձևախեղումները Ղարաբաղյան շարժման ու Հայաստանի անկախացման դարաշրջանում բառացիորեն հորդում էին քաղաքական ասպարեզ: Այդ հավասարապես «պղտորված հոսանքները» մեկ տասնամյակ շարունակ խոչընդոտում էին հայ ազգային-գաղափարախոսական մտքի բյուրեղացմանը, որովհետև նրանց մեջ զուտ հայկական գաղափարախոսական ավանդույթի հետ միասին խառնվել էին նաև արտաքին ազդեցությունները և նրանցով պայմանավորված՝ գաղափարախոսական թափանցումները: Դրանք հիմնականում երկուսն էին՝ արևմտյան և խորհրդային-կայսերական: Առաջինը ձգտում էր լիբերա-աշխարհաքաղաքացիական, իսկ երկրորդը՝ մարգինալ-ազգայնական բնույթ հաղորդել հայոց ազգային գաղափարախոսությանը: Լիբերալ-կոսմոպոլիտների և մարգինալ-ազգայնականների այս բանավեճը նենգափոխում ու ձևախեղում էր իր էությամբ ու բնույթով խորապես համադրական, այսինքն՝ հայկական ազգային գաղափարախոսությունը:

Արտաքին ազդեցություններով պայմանավորված գաղափարախոսական թափանցումները Հայաստանի անկախացման ժամանակաշրջանի ազգային գաղափարախոսական միտքը շեղեցին իր բուն առաքելությունից՝ ազգային գաղափարախոսության ամբողջական ընկալման և նրա հիման վրա նոր՝ ազգային-պետական գաղափարախոսության ձևավորման խնդրից: Արդյունքում Հայաստանի նախկին իշխանությունները՝



նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, ձեռնամուխ եղան ոչ թե ազգային գաղափարախոսության ձևախեղումները, այլ ընդհանրապես՝ ազգային գաղափարախոսությունը արմատախիլ անելու գործին: Նրանց նպատակը ազգային արմատներից կտրված «մաքուր» պետական գաղափարախոսության ստեղծումն էր՝ Հայաստանի անկախության փաստի և աշխարհում ստեղծված նոր իրողությունների հաշվառման հիման վրա, որն ինքնին անհիրականանալի և անիմաստ զբաղմունք էր՝ այն պարզ պատճառով, որ նախ.

ա/ հայ ժողովրդի միայն մի փոքր հարվածը /մոտ 1/3-ն/ էր իր հայրենի հողի վրա անցել պետական կեցության, իսկ մեծ մասը շարունակում էր ապրել ազգային –համայնքային կյանքով և նրան բնորոշ՝ ազգային գաղափարախոսությամբ,

բ/ Հայաստանը դեռևս չէր լուծել իր ազգային խնդիրները /առաջին հերթին Ղարաբաղի հարցը/, ուստի եվրոպական տիպի պետության և նրան բնորոշ գաղափարախոսության ձևավորումն անհնարին գործ էր. առկա էին անհաղթահարելի արտաքին /աշխարհաքաղաքական միջավայր/ և ներքին /ժողովրդի հոգեբանություն և կենսակերպ/ խոչընդոտներ,

գ/ ազգային գաղափարախոսությունն ինչպես իր դասական, այնպես էլ ձևախեղված՝ նացիոնալ-կոմունիստական ընբռնումներով իշխում էր մտավորականության հիմնական զանգվածի վրա,

դ/ իշխանությունների մոտ առկա էր ոչ թե ազգային գաղափարախոսության խորապես հայկական, համադրական բնույթն ընկալելու և նրա հիման վրա՝ ազգային-պետական գաղափարախոսություն ձևավորելու ցանկություն, այլ ազգային գաղափարախոսությունը մերժելու միջոցով՝ սեփական քաղաքական հակառակորդներին և առաջին հերթին ՀՅԴ-ին քաղաքական ասպարեզից դուրս մղելու ձգտում:

Դրա վկայությունն էր նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի՝ իր բնույթով ոչ թե գիտական, այլ ըստ էության կոնյունկտուրային-քաղաքական ելույթը ՀՀ Գերագույն խորհրդի 1994թ. ապրիլի 25-ի նիստում: «Կեղծ քաղաքական կատեգորիա է նաև ազգային գաղափարախոսություն» հասկացությունը, - հայտարարեց ՀՀ առաջին նախագահը,- որովհետև ժողովրդավարության պայմաններում անհնար է ողջ ազգին համախմբել մեկ միասնական գաղափարախոսության շուրջ: Միշտ էլ կլինեն մարդիկ կամ մարդկանց խմբեր, և դա նրանց լիակատար իրավունքն է, որոնք

երբևիցե չեն ընդունի այդ գաղափարախոսությունը»[11]:

Միաժամանակ, ՀՀ նախկին իշխանությունները ձեռնամուխ եղան նոր, պետական գաղափարախոսության ձևավորման առաջին փորձին՝ այդ գործի մեջ ներգրավելով որոշակի թվով մտավորականների: Սակայն նրանց նման մտադրության փաստորեն միակ վկայությունը՝ 1995 թվականին Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի հրատարակած «Ինքնություն»[12] ժողովածուն, թեև իր մեջ ընդգրկում էր առանձին, բավականին ուշագրավ հոդվածներ, բայց որպես իշխանության կողմից առաջադրվող քաղաքական խնդրի լուծում, բացարձակապես չէր հասել իր բուն նպատակին :

Մինչդեռ, նախկին նախագահի անպատասխանատու և ինչ-որ առումով նաև հակասական հայտարարությունն այնպիսի աղմուկ առաջացրեց Հայաստանի և Սփյուռքի քաղաքական շրջանակներում ու մտավորականության ներսում, որ նորանկախ Հայաստանին անհրաժեշտ պետական գաղափարախոսության հոնքը շինելու փոխարեն, նրա աչքն էլ հանվեց ու դեն նետվեց: Պատճառն ակնհայտ էր. ա/նախկին նախագահը ազգային գաղափարախոսությունը շփոթում էր տոտալիտար վարչակարգերին բնորոշ՝ մենատիրության ձգտող գաղափարախոսությունների /կոմունիզմ, ֆաշիզմ/ հետ, հանգամանք, որը ոչ միայն իր մեջ վարկաբեկման տարր էր պարունակում, այլև արդյունք էր հայ հասարակական-քաղաքական շարժումների ու մտքի պատմության թերիմացություն: Ազգային-ազատագրական շարժումների դարաշրջանը, երբ ի հայտ են գալիս ազգային իդեալը սրբազնագործող ու հիմնավորող մեկ գաղափարախոսություն ունենալու անկեղծ ձգտումներ, ՀՀ նախկին նախագահը շփոթում էր ժողովրդավարական պետության գոյության խաղաղ ու ապահով կյանքի հետ, որից դեռևս շատ հեռու էր օրվան Հայաստանը, բ/ Տեր-Պետրոսյանը չէր ցանկանում ընդունել այն ակնհայտ փաստը, որ անկախացած Հայաստանում «ազգային գաղափարախոսություն» հասկացությունը հիմնականում կիրառվում է ոչ թե նրա պատկանելությունը /բոլորի համար պարտադիր լինելը/, այլ բնույթը՝ պետականության շրջանակներում հետապնդվող նպատակների ազգային-քաղաքական ուղղվածությունը մատնանշելու համար և այդ բնագավառում առկա առանձին՝ նացիոնալ-կոմունիստական շեղումները որևէ կապ չունեն հայոց ազգային գաղափարախոսության խորապես ժողովրդավարական էության հետ, գ/ չէր նկատում այն իրողությունը, որ մերժելով ազգային-ազատագրական շարժումների դարաշրջանի համար օրինաչափ և ինչ-որ առումով նաև՝ կամավոր-պարտադիր «մեկ ազգ- մեկ գաղափարախոսություն» բանաձևը, ինքը հայ ազգային-ազատագրական շարժման անավարտ լինելու, բայց միաժամանակ պետական կեցությանն անցնելու անժխտելի փաստերի առկայության պայմաններում փորձում է հանրությանը պարտադրել իր կողմից որպես «հայ ժողովրդի ներկա ազգային խնդիրը, եթե կուզեք՝ ազգային ծրագիրը...»[13], որակվող դասական-եվրոպական տիպի բաց-ժողովրդավարական երկրի մոդելը, այսինքն՝ առկա իրողություններին չհամապատասխանող մեկ այլ ծայրահեղություն:

Ուստի Լ.Տեր-Պետրոսյանը իր կամքից անկախ նպաստեց ոչ թե Հայաստանին անհրաժեշտ պետական գաղափարախոսության ձևավորմանը, այլ ազգային-գաղափարախոսությունն արհեստականորեն ֆետիշացնելու միջոցով՝ լիովին ձևախեղելու և մի յուրահատուկ դոգմայի վերածելու փորձերի ծավալմանը, որոնք հանդես եկան որպես հակազդեցություն՝ նրա անպատասխանատու հայտարարության: Այդ առումով, Լ.Տեր-Պետրոսյանի հարցադրումները մերժելու հիմնավորված փորձերին զուգահեռ, հետագայում, մանավանդ՝ 1998-ի իշխանափոխությանը հաջորդած շրջանում, տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ ու առանձին ուսումնասիրություններ, որոնք ոչ թե նախկին նախագահի նման նենգափոխում, այլ հաճախ ձևախեղում էին ազգային գաղափարախոսության էությունը, նրա համադրական բնույթը, անտեսում էին ազգային ինքնություն և ազգային գաղափարախոսություն հասկացությունների միջև առկա տարբերությունները և ազգային գաղափարախոսությունը դիտարկում որպես մի յուրահատուկ՝ գաղափարախոսությունների գաղափարախոսություն, այսինքն փաստորեն մի նոր, բայց այս անգամ՝ «ազգային» գիտկոմ: Նման աշխարհընկալումն իր առավել ամբողջական ու համակարգված տեսքով տեղ է գտել ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանի մենագրության մեջ[14]: Ի սկզ-

[11] Լևոն Տեր-Պետրոսյան, «Սահմանադրության ընդունման լավագույն եղանակը հանրաքվեն է», «Հայաստանի Հանրապետություն», 26 ապրիլի, 1994թ., թիվ 77:

[12] Տե՛ս «Ինքնություն» /խմբ. մարմ. Աբրահամյան Լ., Բարխուդարյան Վ., Բախչինյան Ա., Գրիգորյան Ա. և ուրիշներ/, Եր., «Կամար», 1995:

[13] «Հայաստանի Հանրապետություն», 26 ապրիլի, 1994թ., թիվ 77:

[14] Տե՛ս Լենդրուշ Խուրշուդյան, Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր. 1999:

բանե յուրաքանչյուր ժողովրդին և անգամ ցեղին բնորոշ ինքնություն և ինքնագիտակցություն հասկացությունները շփոթելով կոնկրետ պատմա-փիլիսոփայական կատեգորիա հանդիսացող հայոց ազգային գաղափարախոսության հետ, հեղինակը վերջինս ծնունդը սկզբնավորում է նախնադարյան ցեղերի գոյության շրջանից[15]: Նա ակնհայտորեն միմյանց հետ շփոթում է նաև ազգային գաղափարախոսություն ու պետական գաղափարախոսություն հասկացությունների հարաբերակցությունը՝ երկրորդը համարելով որպես մարտավարություն կամ էլ ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ մաս[16]: Դրանով իսկ ազգային գաղափարախոսությունը դիտարկվում է որպես հավերժական կերպով գոյություն ունեցող, համապարփակ մի երևույթ՝ գաղափարախոսությունների գաղափարախոսություն:

Նման մոտեցումը ոչ թե նպաստում է ազգային գաղափարախոսության դերի ու նշանակության բարձրացմանը, այլ ընդհակառակը՝ այն դարձնում է գաղափարախոսական պարտադրանքի պես մի բան՝ ակամայից հիմնավորելով և արդարացնելով նախկին նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի ազգային գաղափարախոսության դեմ ուղղված անհիմն մեղադրանքները: Անընդունելի և բացարձակապես անհիմն է նաև հեղինակի կողմից ազգային արժեքների ողջ համակարգի դիտարկումը որպես ազգային գաղափարախոսության հիմնադրույթներ, քանզի վերջիններս ստատիկ երևույթ են, մինչդեռ գաղափարախոսությունը գործի, նպատակի և նրա իրականացման համար տեղի ունեցող շարժման, փոփոխության պրոցեսում՝ միմյանց և արտաքին աշխարհի հետ տեղի ունեցող հարաբերությունների գաղափարական արտացոլում է և ոչ թե ազգային արժեքների «թանգարանի» նկարագրություն:

Միաժամանակ, չի կարելի չընդունել նաև, որ հեղինակը ճիշտ է մատնանշել Հայկական հարցի՝ հայոց ազգային գաղափարախոսության հիմքը լինելու փաստը, հանգամանք, որը Լ.Խուրշուդյանի կողմից չգիտես ինչու որակվում է որպես «հայոց ազգային գաղափարախոսության նոր մարտավարության առանցքային հիմնախնդիր»[17], հիմնավորելու համար ազգային գաղափարախոսությունն արհեստականորեն «հնացնելու» ուղղությամբ գործադրվող փորձերը:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 7-8:
16 Տե՛ս նույն տեղում, էջ 39-40:
17 Նույն տեղում, էջ 117:



## *6. Հաստատումներ և նախնական եզրակացություններ*

Անցնելով վերջին 10-ամյակի քաղաքական նենգափոխումների ու գիտական ձևախեղումների մամլիչի տակով և առանձին գիտնականների կողմից «զարդարվելով» ազգային հոգեկերտվածքի /մենտալիտետի/, կենցաղի և ինքնության այլ բաղադրիչների վերաբերյալ ուսումնասիրությունների թերմացքով ու վերածվելով մի յուրահատուկ «գաղափարախոսական տոնածառի», ազգային գաղափարախոսությունն՝ ըստ էության, իր արժեքային համակարգի խորքում որևէ նոր և լուրջ ձեռքբերում չունեցավ: Պատճառն ակնհայտ է. մինչև պետական անկախության դարաշրջանը ստեղծված ազգային գաղափարախոսությունը չէր կարող կատարելագործվել ու հստակեցվել որպես զուտ գաղափարախոսություն կամ գաղափարախոսություն իր համար՝ հաշվի չառնելով նոր իրողությունները, որոնց առանցքում «պտտվում էր» պետական կեցությանն անցնելու նոր մոդելի ընտրության խնդիրը: Բայց միաժամանակ անհնար էր նաև ստեղծել «մաքուր» պետական գաղափարախոսություն՝ մասամբ միայն պետական կեցությամբ և գրեթե ամբողջովին ազգային գաղափարախոսության հիմքի վրա ձևավորված մտակաղապարներով ապրող ազգի համար: Ուրեմն վերջին տասնամյակում ոչ թե մեր գաղափարախոսական միտքն էր ամլացել այս ոլորտներից և՛ առաջինում, և՛ երկրորդում, այլ քաղաքական կոնյունկտուրայի ու գաղափարախոսական թափանցումների ազդեցության արդյունքում իրականում զբաղվում էր ո՛չ իր բուն գործով, այլ անօգուտ ու անպտուղ կրկնություններով. ազգային գաղափարախոսության պարագայում՝ սեփական, իսկ պետական գաղափարախոսության պարագայում՝ հիմնականում օտար ավանդույթն ու ձեռքբերումները փորփրելով:

Ուստի, հայոց ազգային և պետական մտքի անցած բարդ ու հակասական ճանապարհի և մանավանդ վերջին տասնամյակում տեղի ունեցած գաղափարական որոնումների ամփոփումը մեզ կանգնեցնում է հետևյալ հաստատումների ու եզրահանգումների առաջ.

- հայոց ազգային գաղափարախոսությունը, որը սաղմնավորվել է նոր ժամանակներում՝ հայության ազգային զարթոնքի արդյունքում, ձևակերպվել XIX դարի հայոց գաղափարական հայրերի փաղանգի ջանքերով, քաղաքական գետնի վրա է տեղափոխվել հայ ազգային կուսակ-

ցությունների կողմից, կա՛ և կլինի այնքան ժամանակ, քանի դեռ հայ ժողովուրդը չի լուծել իր ազգային-ազատագրական շարժման կիսատ մնացած խնդիրները, չի հավաքվել իր ամբողջական հայրենիքի հողերի վրա և չի դարձել դասական՝ եվրոպական առումով ազգ-պետություն,

- իր հիմքում Հայ Դատի խնդիրների լուծման քաղաքական նպատակադրումն ունեցող այդ գաղափարախոսության կատարելագործման, ամբողջացման, մեկ սիստեմի բերելու, արդիականացման կամ նրա փոխարեն նորը ստեղծելու բոլոր փորձերը ներկա իրողությունների՝ ազգի մասնակի պետական կեցության և արդիականության նոր մարտահրավերների գոյության պայմաններում անպտուղ, իսկ հաճախ նաև վնասակար զբաղմունք են, քանի որ պետականության ձևավորմամբ Հայ Դատը չի «հեռանում» քաղաքական ասպարեզից, չեն անհետացել ու չեն անհետանալու նաև այն հետապնդող ուժերը, բայց պետությունն էլ դեռևս ի վիճակի չէ ամբողջովին տեր կանգնել այդ խնդրին:

Այստեղից էլ կարելի է եզրակացնել. ազգային գաղափարախոսությունը մեր հավատամքն է, հավատո հանգանակը՝ Կրեդոն, ուստի այն ոչ թե ամբողջացման կամ արդիականացման կամ նորով փոխարինելու, այլ սոսկ իր նախկին ֆունկցիոնալ նշանակության փոփոխության կարիք ունի:

-ազգային և պետական խնդիրների պարզունակ նույնացման կամ նրանց հակադրման վրա հիմնված ազգային, թե՞ պետական գաղափարախոսություն հակաթեզը հաղթահարելու միակ լուծումը առաջինը անփոփոխ թողնելու, բայց միաժամանակ, երկրորդի ստեղծման զուտ պետական՝ «ստերիլ» հայեցակետից հրաժարվելու և հայ ժողովրդի քաղաքակրթական առաքելության, ներկա պետական կեցության առանձնահատկությունների ու արդիականության մարտահրավերների հաշվառման հիման վրա նոր՝ ազգային-պետական գաղափարախոսության ձևավորման մեջ է, որը հնարավորություն կտա մրցակցային նոր միջավայրում լուծել Հայաստանի գոյատևման ու զարգացման խնդիրները,

- այդ պատճառով, «ազգային» կամ «պետական» մոտեցումներին նախապատվություն տալու գործելակերպը հարկավոր է փոխարինել երկուսին ընդհանուր գաղափարական պրոցեսի մեջ ներգրավելու, ներքաշելու՝ ազգային-պետական միասնական հայեցակարգով,

- այդ ներգրավման գործընթացի առանցքը հանդիսացող պետությունը պետք է ապահովի անհրաժեշտ գաղափարախոսական պլյուրալիզմ՝ ոչ միայն ներքաղաքական, այլև ներազգային գետնի վրա, որի պարտադիր պայմանը դինամիկ հավասարակշռության հաստատումն է՝ մի կողմից իր արտաքին ու ներքին, իսկ մյուս կողմից՝ ազգային և պետական քաղաքականության միջև,

- ներգրավման աշխատակարգերի և դինամիկ հավասարակշռության ապահովման բանաձևի հիմքում պարտավոր ենք դնել ոչ թե պետության օրախնդիր հարցերի լուծման կամ էլ ազգային-ազատագրական պայքարի անմիջական խնդիրների սպասարկման առաջադրանքները, այլ ազգի քաղաքակրթական առաքելության գաղափարը և նրա իրականացման պոզիտիվ խնդիրը՝ փորձելով ստեղծել համադրություն՝ դինամիկ կերպով զարգացող աշխարհի և մեր միջև, որը հնարավորություն կտա նոր՝ ավելի բարձր մակարդակի վրա տեր կանգնել թե՛ պետականության կառուցմանը և թե՛ ազգային-ազատագրական շարժման անավարտ մնացած խնդիրների լուծմանը:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# Ազգային գաղափարախոսություն

Ազգային գաղափարախոսությունը պետականազուրկ հայ ազգի գոյատևման խնդիրների լուծման համար՝ անհատների ու խմբերի /կուսակցությունների/ միմյանց և արտաքին աշխարհի հանդեպ հարաբերությունների գաղափարախոսական արտացոլումն ու հիմնավորումն է:

Հանդիսանալով ժամանակակից հայ ազգի ինքնության ընկալման և ինքնագիտակցության ձևավորման բարձրագույն մակարդակը, ազգային գաղափարախոսությունը տեսականորեն հիմնավորում է նրա առջև կանգնած և լուծման կարոտ այն խնդիրները, որոնք բնորոշ են ազգակազմավորման, ազգային- ազատագրական շարժումների ծավալման, անկախ պետականության վերականգնման փորձերի, նրա սահմանների ամբողջացման ու բյուրեղացման դարաշրջանին:

Ազգային գաղափարախոսության նպատակը ազգի և հայրենիքի միասնության ապահովման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է՝ որպես միջոց օգտագործելով անհատների, խմբերի /կուսակցությունների/, իսկ հնարավորության դեպքում՝ նաև պետության նպատակամղված ջանքերը:

### *1. Հայոց ազգային գաղափարախոսության առանձնահատկությունները*

Որպես հայ ժողովրդին բաժին ընկած ճակատագրի հաղթահարման համառ փորձերի գաղափարական հիմնավորում, հայոց ազգային գաղափարախոսությունն ունի իր առանձնահատուկ տեղն ու դերը այլ ժողովուրդներին բնորոշ ազգային գաղափարախոսությունների շարքում: Գոյություն ունեն ազգային գաղափարախոսության երկու խոշոր պատմական տիպեր, որոնք բխում են այս կամ այն ազգի քաղաքակրթական առաքելության ընկալման արևմտյան /ռացիոնալիստական/ և արևելյան /տրադիցիոնալիստական/ նախահիմքերից: Առաջին տիպը բնորոշ է արևմտյան, մասամբ էլ նրանց ազդեցության տակ ձևավորված՝ արևելաեվրոպական և առաջավոր-ասիական ազգերին: Երկրորդ տիպը որպես Արևելքի մի շարք խոշորագույն պետություններում /Իրան, Չինաստան և այլն/ ձևավորված գաղափախոսությունների խումբ, խարսխվում է առաջիններին սկզբունքորեն հակադիր գաղափարական ելակետի վրա, որի հիմքը երկնայինի՝ Աստծո և նրանով չափվող արժեքների գերակայությունն է՝ երկրայինի և այնտեղ տեղի ունեցող ամեն ինչի հանդեպ:

Առաջին պատմական տիպը՝ կապված այս կամ այն ազգի պետա-քաղաքական կարգավիճակի, տնտեսական ու հոգևոր-մշակութային հզորության հետ, իր հերթին տարանջատվում է երկու խոշոր խմբերի.

ա/ մեծապետական ազգերին բնորոշ գաղափարախոսություններ, որոնց առանցքում պտտվում է նրանց առանձնահատուկ, հաճախ էլ համաշխարհային առաքելության գաղափարը, որը երբեմն հիմնվում է նաև սեփական բացառիկության ընկալման տարբեր դիտանկյունների վրա,

բ/ պետականազուրկ, ուրեմն և ազգային-ազատագրական պայքարի ճանապարհով սեփական ինքնությունը պահպանող, հայրենիքի ազատագրությանը, ազգի ու հայրենիքի միասնությանը ձգտող ժողովուրդների ազգային գաղափարախոսություններ[18]:

Հայոց ազգային գաղափարախոսությունը տարբերվում է մեծապետական ազգերին բնորոշ գաղափախոսություններից նրանով, որ այն լինելով ավանդաբար՝ հնագույն ժամանակներից սկսած, սեփական, խիստ յուրահատուկ քաղաքակրթական առաքելություն ունեցող ազգի գաղափարախոսություն, միաժամանակ անմիջականորեն արտացոլում ու հիմնավորում է ոչ թե այդ առաքելության բովանդակությունը, այլ տվյալ խնդրի իրականացումից հարկադրաբար շեղված ու կոտորակված հանրույթի գոյատևման ճիգերը:

[18] Այս երկու խմբերից սկզբունքորեն տարբերվող ազգային գաղափարախոսություն է հրեական սիոնիզմը, որը մի կողմից մեծապետական ազգերից ոչ պակաս անհանդուրժողական է՝ իր էության մեջ, բայց մյուս կողմից՝ ձևավորվել է որպես դեռևս պետություն չունեցող ու նրա վերականգնմանը ձգտող ազգի գաղափարախոսություն: Հայոց ազգային գաղափարախոսությունը ևս մեխանիկորեն չի տեղավորվում վերը նշված խմբերի մեջ: Հրեաների ազգային գաղափարախոսության նման նա նույնպես ունի ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ խմբերին բնորոշ գծեր: Սակայն, իր հերթին, հայոց ազգային գաղափարախոսությունը սկզբունքորեն տարբերվում է նաև ճակատագրով իրեն նման ժողովրդի՝ հրեաների ազգային գաղափարախոսությունից, քանի որ մերժում է օտարի վրա իշխելու, իր կամքը պարտադրելու նպատակադրումը:

Հայոց ազգային գաղափարախոսությունը տարբերվում է նաև պետականազուրկ ազգերին բնորոշ գաղափարախոսություններից, որոնք սեփական ինքնության պահպանման համար անհրաժեշտ անոթի՝ պետականության վերականգման ձգտումներից այն կողմ չեն անցնում, քանզի չբարձրացնելով սեփական առաքելության հարցը՝ որպես հիմնական խնդիր, հայոց ազգային գաղափարախոսությունը երբեք չի անտեսում նրա գոյության փաստը: Այսպիսով, հայոց ազգային գաղափարախոսությունը չի տեղավորվում ազգային գաղափարախոսությունների վերը նշված պատմական տիպերից ու նրանց դրսևորման կոնկրետ խմբերից և ո՛չ մեկի շրջագծում: Սակայն իր էությամբ ու դրսևորման ձևով այն ամենից ավելի մոտ է արևելաքրիստոնեական քաղաքակրթության բեկորները հանդիսացող ազգերի գաղափարախոսություններին: Այդ հոգեհարազատությունը հստակորեն դրսևորվում է նույնպես համադրական բնույթ ունեցող ռուսական ազգային գաղափարախոսության հետ համեմատելու պարագայում, որը թեև հստակորեն մեծապետական ազգի գաղափարախոսություն է, բայց իր հիմքում պարունակում է նույն խնդիրը՝ Եվրոպայի ու Ասիայի, ռացիոնալիզմի ու իռացիոնալիզմի հաշտեցման գաղափարը: Տարբերությունը միայն այն է, որ ռուսական ազգային գաղափարախոսությունն այդ հաշտեցումն ու սինթեզը փորձել է ծավալել լայնությամբ, իսկ հայկականը, ընդհակառակը՝ խորությամբ: Պատճառն այն է, որ հայոց ազգային գաղափարախոսությունը արտացոլել է հայ ժողովրդի ճակատագրին բնորոշ ոչ միայն պետականության, այլ հաճախ նաև հայրենիքի ժամանակավոր կորստյան փաստը: Նման պայմաններում նա չի փորձել ողջ աշխարհը դարձնել իր իդեալների հայրենիքը, այլ ողջ աշխարհում փնտրել է ի՛ր իդեալ-հայրենիքը: Ուստի նոր ժամանակներում ձևավորված հայոց ազգային գաղափարախոսությունը կենտրոնացել է ազգի գոյատևման անհրաժեշտ պայմանների փնտրտուքի վրա՝ ի վերջո հանգելով նրանց հստակեցմանը՝ որպես հայրենիքի գաղափար:

Այդ պատճառով, այլ ժողովուրդների ազգային գաղափարախոսություններին բնորոշ արժեքային համակարգերի մեխանիկական պատճենման միջոցով ազգի ու հայրենիքի գաղափարների կողքին՝ անկախ պետականության, ազգային մշակույթի, կրոնի և այլ հիմնադրույթների տեղադրումը, շաբլոն ու միակողմանի «գրադացիա» է ստեղծում հայոց ազգային գաղափարախոսության ներսում, քանի որ մեզանում վերջիններս



միայն ու միայն ածանցյալ են՝ ազգի ու հայրենիքի գաղափարների համեմատ[19]: Անգամ անկախ պետականության գաղափարը, որը թվում է, թե պետք է դիտվեր որպես ազգ ու հայրենիք հասկացություններին համարժեք մեծություն, իրականում, հայոց ազգային գաղափարախոսության ողջ համակարգի ներսում նույնպես չի վերածվել բացարձակ արժեքի՝ մնալով նպատակի ու միջոցի դիալեկտիկական կապի շրջագծում:

**Այսպիսով, հայոց ազգային գաղափարախոսության հիմնական առանձնահատկությունն այն է, որ նա արտացոլում է ընդամենը երկու բացարձակ արժեքների՝ ազգի ու հայրենիքի՝ իրար կորցնելու, վերագտնելու և մասամբ նորից կորցնելով՝ իդեալի և իրականության ողբերգական հակաթեզի մեջ սեփական ինքնության խորհուրդը փնտրելու ձգտումը:**

## *2. Ազգային գաղափարախոսության քաղաքական նպատակները*

Որպես հայ ժողովրդի ու Հայաստանի միմյանցից օտարման ու խորթացման փաստի գաղափարական արտացոլում և այն հաղթահարելու անհրաժեշտության հիմնավորում, հայոց ազգային գաղափարախոսությունը իր համար ստեղծել է միաժամանակ մի քանի «Հայրենիքներ», որոնց հաջորդական հերթափոխը պայմանավորված է ազգի կեցությունից բխող և լուծման կարոտ խնդիրների առաջադրման հերթականությամբ: Դրանք են. հոգևոր Հայրենիքը, պատմական Հայրենիքը, բնաաշխարհագրական Հայրենիքը, մշակութային Հայրենիքը, քաղաքական Հայրենիքը: Դրա հետևանքով, ի վերջո, հայոց ազգային գաղափարախոսությունը Հայրենիք կամ Հայաստան հասկացությունը տեղայնացրել է որպես Արևմտյան Հայաստան, իսկ հետագայում՝ նրա կորստից հետո, որպես Արևմտյան Հայաստանով ամբողջացող Միացյալ Հայաստան: Այս ելակետային գաղափարը եղել և մնում է ազգային գաղափարախոսության անկյունաքարը՝ պայմանավորելով նրա վերաբերմունքը Հայրենիքի ազատագրության ու պետականության վերականգման խնդիրների հանդեպ: Հիմնվելով Արևմտյան Հայաստանով ամբողջացվող Հայրենիքի՝ որպես անանց արժեքի անվերապահ գերակայության սկզբունքի վրա, ազ-

19 Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, էջ 14:

գային գաղափարախոսություն պետականության վերականգման խնդիրը դիտարկում է միաժամանակ որպես և՛ նպատակ, և՛ միջոց: Այն նպատակ է որպես միասնական ազգի և ամբողջական Հայրենիքի օրգանական միասնությունն ապահովող առաջադրանք, այսինքն որպես սկզբունք: Սակայն, միաժամանակ, պետականությունը սոսկ միջոց է, եթե այն չի ներառում ազգային գաղափարախոսության կողմից որպես Հայրենիք ընկալվող տարածքը՝ Արևմտյան Հայաստանը: Նման պայմաններում միանգամայն բնական է և օրինաչափ, որ ազգային գաղափարախոսությունը Հայաստանի անկախ /1918-1920թթ./ և /1991-2002թթ./ ու կիսանկախ /1920-1991թթ./ պետական բոլոր կազմավորումները, որոնք ձևավորվել են Արևելյան Հայաստանի տարածքում, դիտարկում է որպես իր վերջնական նպատակի իրականացման հանգրվաններ ու միաժամանակ նաև միջոցներ՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրի լուծման համար:

Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրին՝ Հայկական հարցին, իսկ Մեծ եղեռնից ու Հայրենիքի նշանակալից մասի կորստից հետո՝ Հայ Դատին ու պահանջատիրությանը հավատարմության սկզբունքը եղել ու մնում է հայոց ազգային գաղափարախոսության առանցքային գաղափարը՝ նրա սևեռուն նպատակը:

Այսպիսով, եթե մինչև Մեծ եղեռնը և Հայաստանի անկախացումը ազգային գաղափարախոսությունը Հայրենիք կամ Հայաստան ասելով նկատի էր առնում փաստորեն միայն Արևմտյան Հայաստանը, ապա դրանից հետո ընդունելով հանդերձ՝ մյուս Հայրենիքի ու նրա տարածքում ձևավորված պետականության գոյության փաստը, միաժամանակ, շարունակել ու շարունակում է իր հիմնական նպատակը համարել Արևմտյան Հայաստանի ազատագրության, Սփյուռքի հայության իրավունքների վերականգման ու հայոց պետականության ամբողջացման՝ Միացյալ Հայաստանի ստեղծման խնդիրը:

### *3. Ազգային գաղափարախոսության փիլիսոփայական-աշխարհայացքային հիմքերը*

Դարերի ընթացքում հայկական քաղաքակրթությունը կառուցվածքայնացրել է ինքն իրեն ոչ միայն որպես քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային արժեքների ստեղծման հաջորդական պրոցես, այլև նրանց իմաստավորմանն ուղղված գաղափարախոսություն ու փիլիսոփայություն: Նոր ժամանակներում այդ գործընթացն ընդունել է եվրոպական լուսավորականության և նրա միջոցով տարածվող ռացիոնալիզմի ընկալման և միջնադարի խոնարհ ու հնազանդ հային բնորոշ՝ Աստծո կողմից սահմանված ճակատագրի հետ հաշտվելու և սեփական դժբախտությունը Աստծո հանդեպ գործած մեղքերի ծանրությամբ բացատրելու ավանդապաշտական պատկերացումների հաղթահարման տեսք: Սակայն հայ ազատամարտի առջև կանգնած առարկայական բնույթի խոչընդոտների և մանավանդ՝ զանգվածային ջարդերի առաջ բերած հուսալքության ազդեցության հետևանքով, հայոց ազգային գաղափարախոսության ներսում սկիզբ է առել նրա մեջ ուժեղացած, ամրապնդված ու գերիշխող դիրքեր ձեռք բերած եվրոպական ռացիոնալիզմի ճգնաժամը, որին նպաստել է նաև ռուսական /հեղափոխական նարոդնիկություն/, գերմանական /նիցշեականություն/ փիլիսոփայական մտքի ազդեցությունը: Դրա հետևանքով տեղի է ունեցել նոր ժամանակներին բնորոշ ռացիոնալիզմի համադրում ու լրացում՝ ավանդապաշտական (տրադիցիոնալիստական) աշխարհայեցողությունից բխող այնպիսի գաղափարների հետ, ինչպիսիք են դրական հերոսի, արյան ու հողի միասնության, իրականության անհաղթահարելի խոչընդոտներին դիմակայելու համար անհրաժեշտ ինտուիցիայի ու կամքի դաստիարակման, երկրային կյանքի իմաստը կասկածի տակ դնելու և հայրենիքի համար նահատակությունը երկնային կյանքի սկիզբ համարելու՝ ամենևին էլ ոչ ռացիոնալիստական պատկերացումներով: Դրա հետևանքով ազգային գաղափարախոսության ներսում տեղի է ունեցել քաղաքակրթական տարբեր ազդակներից բխող արժեքային կողմնորոշիչների բախում ու պայքար, որի արդյունքում գտնվել է նրանց համադրության բանաձևը: Այն իր արտահայտությունն է գտել ինչպես անցյալ-ներկա-ապագա հակասության հաղթահարման ինտուիտիվ փորձերի /Ռաֆֆու «Վարդանի երազը»/, այնպես էլ ներկայից բխող անմիջական խնդիրների լուծման պրագմատիկ /գործնապաշտական/ փիլիսոփայության որդեգրման մեջ: Այդ առումով ազգային գաղափարախոսության փիլիսոփայական-աշխարհայացքային հիմնավորման լավագույն փորձը, աշխարհի ճանաչողության և միաժամանակ՝ նրա վերափոխման ժամանակին ՀՅԴ որդեգրած պրագմատիկ /գործնապաշտական/ մեթոդն է, որի համար որպես փիլիսոփայական ելակետ է

ծառայել Օգյուստ Կոնտի տեսությունը:

Արժեքային կողմնորոշման հակադիր վեկտորները՝ եվրոպական լուսավորականությունից բխող ռացիոնալիզմը և ավանդապաշտական աշխարհընկալման ծնունդ հանդիսացող դրական հերոսի՝ առաքյալի, նահատակի, ֆիդայու կերպարները, միմյանց համադրելու համար ՀՅԴ հիմնադիրները օգտագործեցին հենց այդ մեթոդը և խուսափելով «հեռավոր անցյալի» ու «իդեալական ապագայի» որոգայթներում ինքնության կորստի կամ աղճատման վտանգավոր հեռանկարից, բարձրացրին պատմության սուբյեկտի և նրան շրջապատող միջավայրի համապատասխանության ու անբաժանելության հիմնահարցը՝ նպատակ ունենալով «ղեկավարուել երկրի կուլտուրայով եւ նրա ազգային ու պատմական առանձնայատկութիւններով»[20] և «իբրեւ հիմք, վերցնել ժամանակին ու տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրութեան պահանջներին, նաեւ ընդհանուր կերպով որոշում են մօտիկ ապագան»[21]: Այդ համադրական աշխարհընկալումը, որը բարձրացնում էր մարդու և միջավայրի համապատասխանությունն ապահովելու խնդիրը, դարձավ ազգի ու հայրենիքի խախտված միասնության վերականգնման հիմնավորումը: Համադրական մոնիզմի կամ պատմական ռեալիզմի փիլիսոփայության միջոցով հիմնավորված այդ աշխարհայեցողությունը որպես միասնական ազգի կողմից իր ամբողջական հայրենիքին վերատիրանալու խնդրի փիլիսոփայական հիմնավորում, մեկ նպատակի շուրջ միավորեց իրականությունը ճանաչելու և նրանում տեղ գտած արգելքներն ու խոչընդոտները հաղթահարելու ձգտումները:

Այսպիսով, ազգային գաղափարախոսությանը բնորոշ փիլիսոփայական աշխարհընկալումը ռացիոնալիստական է ճանաչողության ոլորտում, բայց միաժամանակ չի բացարձակացնում վերջինիս նշանակությունը՝ այն սահմանափակելով սեփական ազգի ու հայրենիքի առջև դրված խնդիրների շրջագծով: Այստեղ արդեն նա վերցնում է հայկական ավանդապաշտական աշխարհընկալման տարրերը՝ երկրային կյանքի ժամանակավոր բնույթի, հավատի համար նահատակվելը որպես բարձրագույն առաքինություն դիտարկելու սկզբունքները՝ դրանք վերափոխելով ու դարձնելով ոչ թե քրիստոնեական, այլ ազգային առաքյալների, նահատակների, ֆիդայիների՝ ինտուիցիայի ու կամքի միջոցով ինքնահաստատելու փիլիսոփայություն: Դրանով իսկ ազգային գաղափարախոսությունը մերժում է «պատմության իմաստի» բացարձակացված մեկնաբանությունները, որոնք ի վերջո հանգում են «պատմության ավարտի» գաղափարին: Ինքնանպատակ պրոգրեսի գաղափարին գալիս է փոխարինելու պրոգրեսի՝ որպես ազգի ու հայրենիքի ազատագրության ու զարգացման միջոց լինելու մասին համոզմունքը: Այստեղից էլ բխում է այն գաղափարը, որ եթե այդ պրոգրեսը խախտում է ազգի դիմագիծը կամ նրա իդեալի անաղարտությունը, ապա այն վերածվում է չարիքի, որից պաշտպանվելու համար ազգը պարտավոր է գտնել գոյատևման անոթ՝ պետություն կամ համայնք և «դիրքավորվել» նրա շրջագծի ներսում, քանի որ ազգը կամ հայրենիքը ավելի բարձր արժեքներ են, քան առաջադիմությունը կամ բարեկեցությունը:

Այսպիսով, ազգային գաղափարախոսությունը պետությունը դիտում է որպես ինքնապահպանման միջոց, գործիք, մնալով այն ելակետի վրա, որ ազգը բարձր է պետությունից: Նա չի հանգում «ազգը դա հենց ինքը՝ պետությունն է» ժամանակակից աշխարհայացքային ընդհանրացմանը, քանի որ արտացոլում է ազգային-ազատագրական շարժման անավարտության փաստից բխող ազգային-քաղաքական իրողությունները: Այսպիսով, ազգային գաղափարախոսության փիլիսոփայական հիմքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանում առկա է ռացիոնալիստական և ավանդապաշտական /տրադիցիոնալիստական/ աշխարհայեցողության առանձին տարրերի համադրության ու սինթեզի համարձակ փորձը, որն իր ավարտին չի հասել՝ անհաղթահարելի խոչընդոտների բախվելու հետևանքով:

Ազգային գաղափարախոսության հիմքում առկա փիլիսոփայությունը շարունակել ու շարունակում է մնալ պետական կեցության ձգտող, բայց դեռևս նրան ամբողջովին չհասած ազգին բնորոշ փիլիսոփայական ընդհանրացումների շրջագծում, որը ըմբռնում և ընդունում է առաջադիմության իմաստն ու նշանակությունը, բայց գիտակցաբար սահմանափակում է սեփական ռացիոնալիստական աշխարհընկալման շրջագիծը՝ նրա «բացումը» թողնելով «ապագա ազատ Հայաստանին»: Դա կոտորակված ազգի, ինքնության պահպանման խնդիր ունեցող համայնքի,

[20] «Դրօշակ», «Հայ Յեղափոխական Դաշակցութեան» օրգան,1891, թիվ 1, էջ 1:
[21] Նույն տեղում, 1892, թիվ 3, էջ 1:

ինքնամոռաց կռիվ մղող գաղափարական փոքրամասնության անմիջական գործը չէ: Վերջիններիս համար որպես իդեալ ազգային գաղափարախոսությունն առաջադրում է կամքի և ինքնազոհության միջոցով ինքնահաստատվող դրական հերոսի՝ նահատակի, ֆիդայու կերպարի փիլիսոփայական ընկալումը, որը հանդիսանում է հայկական քաղաքակրթության մեջ ի սկզբանե առկա տրադիցիոնալիստական աշխարհընկալման տեղափոխումը վաղ և ուշ միջնադարից դեպի նոր ժամանակներ: Երկրային կյանքի ժամանակավոր և անցողիկ բնույթից բխող «մահ իմացյալ անմահություն է» բանաձևի վերաիմաստավորման հիման վրա ազգային գաղափարախոսությունը ստեղծում է ազգային հիշողության մեջ՝ երկնային կյանքում հավերժացվող ազգի նահատակի՝ դրական հերոսի, ֆիդայու կերպարը, հավատի նահատակների հանգստավայր հանդիսացող Թորգոմյանց Տան միջնադարյան ըմբռնումը փոխարինելով Հայ Դատի նահատակների՝ ֆիդայիների հանգստավայրի՝ Երկրի, Արևմտյան Հայաստանի սրբազնագործված գաղափարով: Հայրենի հողի և նրա վրա թափված արյան սրբազնագործումը և դրա հիման վրա նահատակների նոր՝ ազգային-ազատագրական պանթեոնի ստեղծումը արտացոլում է ազգային գաղափարախոսության հիմքում առկա տրադիցիոնալիստական շերտի ամրությունը՝ որպես հայրենի միջավայրից դուրս մղված «բնության զավակի» բնական հակազդեցություն՝ հայրենազուրկ մարդ-բանականի ռացիոնալիստական աշխարհընկալմանը՝ օտար ափերում հարստանալու և ազգային նպատակներն ու դիմագիծը կորցնելու գայթակղությանը:

Այսպիսով, ազգային գաղափարախոսությունը նոր ու նորագույն ժամանակներին բնորոշ հայկական գոյամարտերի փիլիսոփայությունն է՝ ազգն ու հայրենիքը որպես պետություն միասնականացնելու և զարգացման ճանապարհի վրա դնելու ռացիոնալիստական ձգտումների և հանուն դրանց իրականացման երկրային կյանքից հրաժարվելու ու «հավերժի ճամփորդը» դառնալու տրադիցիոնալիստական պատկերացումների համադրությունը:

### *4. Ազգային գաղափարախոսության արժեքային համակարգը.*



### *ազգային արժեքների դրսևորման մակարդակները և նրանց պաշտպանության ուղիները*

Որպես պետականազուրկ ազգի արմատական շահերն արտահայտող քաղաքական գաղափարախոսություն, ազգային գաղափարախոսությունը հիմնված է հայկականության արժեքային համակարգին բնորոշ բաղադրիչներից մեկի՝ սեփականի, առանձնահատուկի ընկալման ու մատուցման որոշակի աշխատակարգերի վրա: Այս երևույթն արտացոլում է պետականազուրկ ազգի մոտ ինքնապահպանման քաղաքական անոթի՝ պետության բացակայության պատճառով ազգապահպանման խնդրի ձեռք բերած գերակայությունը: Այն ոչ թե օտարների վրա իշխելու, սեփական բացառիկությունը հիմնավորելու, այլ նրանց քաղաքական ու հոգևոր իշխանությունը թոթափելու կամ այդ իշխանությունից խուսափելու համար անհրաժեշտ՝ առանձնանալու, բյուրեղանալու բնական ձգտումների արտահայտությունն է: Այդ պատճառով ազգային գաղափարախոսության համար արժեք է այն ամենը, ինչը հայկական է իր ձևով: Ըստ այդմ, ազգային գաղափարախոսությունը ձևավորել է այդ առանձնահատուկի, սեփականի ընկալման մի քանի մակարդակներ, որոնց ամբողջությունը կազմում է ազգի ու հայրենիքի՝ որպես բացարձակ արժեքների, փոխգործակցության ու փոխլրացման ողջ համակարգը: Դրանք են.

ա/ հոգևոր Հայրենիքը՝ ազգապահպանման ավանդական անոթի՝ եկեղեցու գլխավորությամբ, որը այլևս նախկինի նման չի դիտվում որպես բացարձակ արժեք, այլ համարվում է ազգապահպանման միջոցներից մեկը,

բ/ պատմական Հայրենիքը՝ հիշողությունը, պատմությունը, նյութական ու հոգևոր ժառանգությունը, որպես ազգապահպանման, նախնիների թողած ժառանգությանը վերատիրանալու պատգամ,

գ/ բնաաշխարհագրական Հայրենիքը՝ որպես Հայկական լեռնաշխարհի գոյության փաստի գիտական հիմնավորում և նրա հետ սեփական հարազատության ընկալում,

դ/ մշակութային Հայրենիքը՝ որպես աշխարհով մեկ սփռված հայկական «մշակութային կայսրության» ամբողջական ընկալում՝ հիմնվելով լեզվի, արվեստի, գրականության, սովորույթների, բարքերի, հոգեկերտվածքի ընդհանրության վրա,

ե/ ողբի, վրեժի ու հատուցման Հայրենիքը՝ որպես Մեծ եղեռնի վերհուշ և Մեծ Երազին հասնելու պատգամ,

զ/ քաղաքական Հայրենիքը՝ իր երկու մակարդակներով.

I. ազգի կենսագործունեությունն ապահովող ոչ պետական կառույցներով ղեկավարվող համայնքի «տեսլականների» համակարգը,

II. պետությունը՝ որպես ազգի ու հայրենիքի միաձուլման նպատակով ստեղծված քաղաքական անոթ:

Ազգային գաղափարախոսությանը բնորոշ վերը նշված արժեքների այս ողջ համակարգում ցայսօր իրականացված բոլոր դասակարգումները անհրաժեշտ է վերադասավորել երկու հարթությունների վրա.

ա/ բացարձակ արժեքներ, որոնք ներառում են միայն ու միայն ազգ և հայրենիք հասկացությունները,

բ/ արժեքներ, որոնք ծառայում են, նպաստում վերջիններիս գոյատևմանը և հզորացմանը /մնացած բոլորը/:

Նման դասակարգումից կարելի է եզրակացնել, որ ազգային գաղափարախոսությունը ամենևին էլ քարացած պատկերացումների համակարգ չէ, այլ ընդամենը երկու բացարձակ արժեքների պահպանման, ամբողջացման ու հզորացման քաղաքական գաղափարախոսություն, որը ցայսօր դրսևորվել է մի քանի մակարդակների վրա.

ա/ անհատական. յուրաքանչյուր հայ մարդու պատկերացումները այդ բացարձակի և նրան ձգտելու միջոցների՝ ընտանիք, եկեղեցի, մշակույթ, մասնակցություն քաղաքական կյանքին և այլն, մասին,

բ/ հավաքական. հայ մարդկանց խմբերի, ընկերությունների, կուսակցությունների պատկերացումները բացարձակի և նրան ձգտելու միջոցների՝ բարեսիրական գործունեություն, քաղաքական գործունեություն, այդ թվում՝ ազատագրական պայքար և այլն, վերաբերյալ,

գ/ էլիտար. անհատապես կամ այս կամ այն կուսակցության և կազմակերպության գաղափարների պրիզմայի միջով, նեղ-կուսակցական՝ սոցիալ-քաղաքական ընկալումներից ազգային գաղափարախոսության արժեքային համակարգի ամբողջացմանը հասած անհատ մտավորականների ու քաղաքական գործիչների պատկերացումների համակարգը:

Այս մակարդակներից յուրաքանչյուրում բյուրեղացել է ազգային շահի ու նպատակի սեփական պատկերացումը: Սակայն դրանք ամբողջացվել՝ իդեալի ու եւ անգամ՝ առաքելության ընկալման են վերածվել միայն ու



միայն երրորդ՝ էլիտար մակարդակի վրա: Այդ պատճառով, ազգային շահ ու նպատակ հասկացությունների ընթացիկ-քաղաքական և ազգային-գաղափարախոսական ընկալումների ջրբաժանը որոշելու համար առաջինները պետք է տեղափոխել ազգային իդեալի և ընկալման դաշտ: Դրանց մեջ բեկվելուց հետո միայն պարզ կդառնա, թե ո՞րն է նրանց անցողիկ՝ ընթացիկ-քաղաքական մեկնաբանությունը և որը՝ հավերժական, անփոփոխ, բայց անընդհատ հարստացող ազգային արժեքների վրա հիմնված՝ ազգային շահի ու նպատակի գաղափարախոսական ընկալումը, այսինքն՝ ո՞րն է ճշմարտության և բացարձակ ճշմարտության տարբերակիչը: Իդեալից չբխող ազգային շահն ու նպատակը անընդհատ փոփոխվող, հարաբերական հասկացությունների համակարգ է, որոնք ենթակա են ամբողջական կամ մասնակի վերանայման՝ ելնելով նրանից, թե ովքե՞ր են այդ շահի ու նպատակի կրողները: Ըստ այդմ, ազգային գաղափարախոսությունը սահմանել է այդ հասկացությունների սեփական, յուրահատուկ դասակարգումը՝ դրանք անցկացնելով ազգային իդեալի, այսինքն՝ բացարձակ արժեքներ հանդիսացող ազգի ու հայրենիքի միասնականացման ու միաձուլման խնդրի միջով: Ազգային շահն ու նպատակը այդ արժեքներին հասնելու ամենաօպտիմալ ճանապարհն է, որի վերջնամասում ուրվագծվում է ազգային իդեալը՝ որպես ազգի ու հայրենիքի միասնացում՝ Միացյալ Հայաստան:

Այսպիսով, ազգային շահ և նպատակ հասկացությունները ազգային գաղափարախոսության մեջ հանդես են գալիս որպես ազգային արժեքների պաշտպանության միջոցով՝ ազգային իդեալին՝ ազգի ու հայրենիքի միաձուլման վրա հիմնված Միացյալ Հայաստանին հասնելու ուղիների, միջոցների ու եղանակների տարամիտված, բայց նույն նպատակին ձգտող ամբողջություն:

Դրանց շարքում ազգային գաղափարախոսությունը հաճախ հարկադրաբար, հաճախ էլ միտումնավոր ձևով շրջանցել է միայն ազգային առաքելության խնդիրը: Առանձին էլիտար գաղափարախոսներ տվել են նրա ուրվագծերը, սակայն չեն ամբողջացրել այն: Դա պայմանավորված էր նրանով, որ ազգը դեռևս ձեռք չէր բերել պետական անկախություն, առավել ևս չէր հասել իր իդեալին՝ չէր կերտել սեփական ամբողջական հայրենիքը: Նման պայմաններում ազգային գաղափարախոսությունը լավագույն դեպքում կարող էր բացահայտել մեր ազգային առաքելությունը՝

որպես անցյալ, պատմություն, բայց ոչ որպես ներկա ու ապագա: Ուրեմն, **ազգային առաքելության խնդիրն ազգային գաղափարախոսության մեջ դրսևորվել է իր սաղմնային վիճակով, նախնական ուրվագծերով, ուստի նրա ամբողջացումը նոր՝ ազգային- պետական գաղափարախոսության հիմնական գործն է**:

### *5. Ազգային գաղափարախոսության գործառույթները պետականության պայմաններում*

Սխալվում են բոլոր այն տեսաբանները, որոնք կարծում են, թե ազգային գաղափարախոսությունը ինչպես նախկինում, այնպես էլ այսօր ունի ունիվերսալ-ինտեգրող գործառույթ, այսինքն՝ մի յուրահատուկ «ազգային» գիտկոմ է, որից բխում է ամեն ինչ: Ազգային գաղափարախոսությունն իր միակն ու անփոխարինելին լինելու գործառույթները կորցնում է այն պահին, երբ ազգը ստեղծում է պետություն: Բայց միաժամանակ, ազգային գաղափարախոսությունն իր գործառական նշանակությունը պահպանում է այնքան ժամանակ, քանի դեռ այդ պետությունը չի նույնացել ազգի հետ: Մենք՝ հայերս, ներկայումս և տեսանելի ապագայում գտնվում ու գտնվելու ենք հենց այդ «անցումային» շրջափուլում, ուստի բնական է, որ նման պայմաններում մեր առջև ծառանում է ոչ թե ազգայինի ու պետականի նույնացման կամ հակադրման, այլ ազգային գաղափարախոսության գործառական նշանակության փոփոխության խնդիրը: Այդ առումով ակնհայտ է դառնում, որ խիստ պարզունակ ու միակողմանի է մեզանում բավականին լայն տարածում գտած «Ազգային գաղափարախոսությունը ռազմավարություն է, պետականը՝ մարտավարություն»[22] թեզը: Իրականում երկու գաղափարախոսություններն էլ ներկայումս, այսպես թե այնպես, հիմնվում են այն ռազմավարական նպատակների իմաստավորման վրա, որոնք բնորոշ են պետություն ստեղծած, բայց դեռևս իր ազգային կյանքով ապրող համայնքներ ունեցող ազգերին: Ուրեմն նոր պայմաններում ազգային գաղափարախոսությունը կորցնում է միակն ու անփոխարինելին լինելու իր իրավունքները, սակայն պահպանում է ցանկացած գաղափարախոսության համար բնորոշ հիմնական գործառույթները՝ Միավորման կամ համախմբման, Ճանաչողական, Գնահատողական և Կանխատեսման: Սակայն այդ գործառույթները սահմանափակվում են իրենց կիրառման սպեցիֆիկ ոլորտների շրջագծում՝ այնտեղ ուր նրանց կարիքը զգացվում է: Այդ ոլորտները կապված են մի կողմից՝ ազգային պետականության գոյության վաղ շրջաններին բնորոշ գոյատևման խնդիրների լուծման և դրանց հետ կապված՝ ազգի դիմադրողականության բարձրացման և մյուս կողմից՝ դեռևս պետական կեցությամբ չապրող հայության առանձին հատվածների գաղափարախոսական պահանջմունքների «սպասարկման» հետ:

[22] Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, էջ 39-40:



Պետականության շրջանակներում գոյատևման խնդիրներ լուծող բոլոր կառույցները և առաջին հերթին բանակը չեն կարող չառաջնորդվել ազգային գաղափարախոսությամբ, որը հիմնավորում է կորուսյալ հայրենիքին վերատիրանալու սրբազան պատգամը:

Նույն պատգամը պարտադիր է նաև նոր սերնդի դաստիարակության խնդիրը լուծելու համար:

Ազգի պետական կեցությամբ չապրող բոլոր հատվածների ՝ Սփյուռքի համար ազգային գաղափարախոսությունը գրեթե ամբողջությամբ պահպանել ու պահպանում է իր նախկին գործառույթները: Այդ պատճառով, ներկայումս ազգային գաղափարախոսությունն ունի.

**1. Միավորման, համախմբման ֆունկցիա՝** աշխարհացրիվ ողջ հայության համար, որը դրսևորվում է երկու մակարդակների վրա.

ա/ իր անցյալին, սովորույթներին ու ավանդույթներին, իր իդեալին՝ Հայ Դատին հավատարմության դաստիարակում,

բ/ իր հայրենիքի մի հատվածում ստեղծված պետությանը օգնելու և օժանդակելու ու միաժամանակ՝ նրանից օգնություն և օժանդակություն ստանալու պատրաստակամություն:

**2. Ճանաչողական ֆունկցիա.** ազգի ողջ՝ և՛ համայնքային, և՛ պետական կեցությամբ ապրող նոր սերնդին մեր անցած ուղին և ազգային իդեալը ճանաչել տալու գործառույթ:

**3. Գնահատողական ֆունկցիա.** ազգի գոյատևմանը սպառնացող բոլոր գործոններն արձանագրելու, գնահատելու և նրանց դիմակայելու համար անհրաժեշտ պատմական փորձի, դիմադրական ոգու, իսկ հարկ եղած դեպքում նաև՝ թշնամու կերպարի ներարկում՝ ողջ ազգին և առաջին հերթին կոնկրետ սպառնալիքներին դիմակայող բանակին:

**4. Կանխատեսման ֆունկցիա.** այստեղ ազգային գաղափարախոսության գործառական նշանակությունը սահմանափակվում է այն պատճառով, որ նա չի կարող գտնել ազգերի մրցակցության նոր արժեչափերի առկայության պայմաններում աշխարհի հետ մեր հարաբերությունների ճշտման համապարփակ մեթոդը, քանի որ, ի վերջո, ազգային գաղափարախոսությունը ձևավորվել է քանակական ռեսուրսների և ռազմատեխնիկական մրցակցության սկզբունքների գերակայության դարաշրջանում: Բայց այստեղ էլ ազգային գաղափարախոսությունն ունի իր որոշակի, թեև սահմանափակ դերը: Նա խաղում է պրոգրեսի և ազգային ինքնատիպության պահպանման ու հարստացման խնդրի միջև առաջ եկող անխուսափելի ճեղքվածքը լցնողի, ինքնանպատակ առաջադիմության թեզին դիմակայողի և միաժամանակ՝ մրցակցային նոր միջավայրում պետականորեն գործելու միջոցով ձեռք բերված արդյունքներն ու ցուցանիշները հավերժի ու բացարձակի՝ ազգի ու հայրենիքի արժեչափերով գնահատելու գործառույթներ:



# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## Հայաստանի ու հայության քաղաքակրթական առաքելությունը

### *1. Արդիականությունը և ազգային գաղափարախոսությունը*

Ազգային գաղափարախոսությունը որպես պետականազուրկ և ցեղասպանության ենթարկված հայության գոյատևման ճիգերի գաղափարախոսական հիմնավորում, հայոց անկախ պետականության ձևավորման և արդիականության նոր մարտահրավերների առկայության պայմաններում թեև պահպանում է իր ֆունկցիոնալ-կիրառական նշանակությունը, բայց դադարում է ունիվերսալ-ինտեգրողի դեր խաղալ ողջ ազգի, մանավանդ՝ նրա պետականորեն կազմակերպված հատվածի համար:

Պատճառն ակնհայտ է. Հայաստանի անկախության վերականգնումից հետո էլ ազգային գաղափարախոսության համար բացարձակ արժեքներ հանդիսացող ազգն ու հայրենիքը չեն միասնականացել, միաձուլվել որպես ազգ-պետություն, ուստի մեզանում օբյեկտիվորեն ձևավորվել ու բյուրեղացել է և՛ ազգային-ազատագրական շարժման անավարտ խնդիրները հետապնդելու և՛ պետություն կառուցելու երկմիասնական առաջադրանքը: Նրա ներսում առկա ճեղքվածքը «փակելու» զուտ ազգային մոտեցումը՝ պետության վերածումը միայն ազգային-ազատագրական պայքարի խնդիրների սպասարկուի, բախվում է արդիականության մարտահրավերներին, որոնց առանցքում զարգացման խնդիրների լուծումն է՝ որպես մրցակցային նոր միջավայրում կայացած ազգ-պետությունների վերապրելու վճռորոշ պայման: Առաջ եկած ճեղքվածքը «փակելու» զուտ պետական մոտեցման հիմքում պետության, որպես ազգի կազմակերպման բարձրագույն ձևի բացարձակ արժեք լինելու նոր իրողության ընդունումն է, որը հակասում է ազգային գաղափարախոսության մեջ նրան տրվող «և՛ նպատակ, և՛ միջոց» դերակատարությանը: Նման պայմաններում ակնհայտ է դառնում մի բան՝ ազգի և պետության միջև նոր համադրություն ստեղծելու փորձերի ձախողման հիմքում ընկած է այն իրողությունը, որ այդ փորձերը մինչև այժմ արվել են և՛ մեկի, և՛ երկրորդի առջև

կանգնած ընթացիկ-քաղաքական նպատակների՝ ազգային-ազատագրական պայքարի ու պետականության կառուցման խնդրի մեխանիկական հակադրության կամ մեխանիկական համադրության տիրույթում: Մինչդեռ, անգամ իր մեկ մասի՝ հայրենաբնակ հատվածի պետականորեն կազմակերպվելու փաստը հնարավորություն է տալիս մեր հանրույթին այս խնդիրը դիտարկել նոր հարթության վրա՝ վերագտնել աշխարհում ի սկզբանե իր ունեցած քաղաքակրթական առաքելությունը և դրա հիման վրա՝ առաջադրել այն պոզիտիվ խնդիրները, որոնք կարող են միավորել ոչ միայն պետության քաղաքացիներին, այլև ողջ ազգին: Դա պայմանավորված է նրանով, որ մենք այլևս միայն ճակատագրի հարվածներ ստացող և դրանց հարվածներով պատասխանող ազգ չենք, այլ իր մի կարևոր մասով նորմալ պետական գոյավիճակի հասած հանրույթ, որը կրկին բարձրացնելով «ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք եկել և ու՞ր ենք գնում» հավերժական հարցը, փորձում է հասկանալ, թե ո՞րն է իր դրական դերակատարությունը աշխարհում, ի՞նչ արժեքներ պետք է նա տա մարդկությանը, որպեսզի նրանից ակնկալի իր հանդեպ համիմաստ վերաբերմունք այսինքն՝ կարողանա արդիականության պայմաններում մրցել այլ ազգերի հետ և հաղթող դուրս գալ այդ մրցակցությունից: Այս իրավիճակում պետականորեն կազմակերպված հայությունը իրեն տալիս է շատ բնական ու տրամաբանական հարց՝ արդյոք մենք սովորակա՞ն ազգ ենք, որի լինելչլինելը միևնույն է ողջ մարդկային քաղաքակրթության համար, թե՞ մեր լինելիության ձգտումը, որի համար այսքան զոհեր ենք տվել, ամենևին էլ ինքնանպատակ չէ և պայմանավորված չէ միայն որպես հայ ծնվելու և որպես հայ ապրելու ցանկությամբ: Նույն հարցը ներկայումս իրեն տալիս է ոչ միայն ՀՀ քաղաքացին, այլև հայ մնալու խնդիրը լուծելու համար մաքառող սփյուռքահայը, որն ամեն պահի դիմում է զոհողության և ինքնասահմանափակման՝ հանուն այդ նպատակի:

Ուրեմն, ներկա պայմաններում առաջ է եկել հայկականության արժեքային համակարգի պոզիտիվ բաղադրիչների բացահայտման և դրա հիման վրա՝ գոյատևման համար մղված օրհասական պայքարի թոհուբոհում ժամանակավորապես մի կողմ դրված՝ սեփական քաղաքակրթական առաքելությունը վերստանձնելու խնդիրը, որը կարող է նոր մակարդակի բարձրացնել և իմաստավորել ինչպես պետություն կառուցելու ջանքերը, այնպես էլ հայ մնալու մաքառումները: Ազգային գաղափարախոսությունը



այս խնդիրը լուծելու հնարավորություն չի ունեցել ոչ թե այն պատճառով, որ վատ է ճանաչել սեփական ազգի պատմությունն ու մշակույթը, այլ որովհետև չի ունեցել համապատասխան ենթահող և միջոց՝ պետություն: Վերջինիս ձևավորումը ոչ միայն ազգի ինքնակազմակերպման, այլև ինքնագիտակցության բարձրագույն մակարդակի ձեռքբերումն է, ուրեմն նաև՝ աշխարհում ունեցած սեփական առաքելությունը վերհիշելու և նրան տեր կանգնելու գործի սկիզբը:

Ազգային գաղափարախոսությունն անցյալում չի փորձել և այսօր էլ չի կարող ստանձնել նման առաքելության ամբողջական բացահայտման գործառույթը, քանի որ նա չի լուծել իր սեփական խնդիրը՝ ազգի ու հայրենիքի միասնականացման հարցը: Սակայն, զուտ պետական կամ նեղպետական գաղափարախոսությունը ևս չի կարող բարձրանալ հայկականության արժեքային համակարգի ընկալման և Հայաստանի ու հայության քաղաքակրթական առաքելության բացահայտման մակարդակին, քանի որ նորաստեղծ պետությունը նույնպես ունի իր սպեցիֆիկ խնդիրները: Ուստի հայկականության արժեքային համակարգի էության ընկալման, մեր քաղաքակրթական առաքելության բացահայտման և արդիականության պայմաններում այն կրկին վերստանձնելու խնդիրը կարելի է լուծել միայն սկզբունքորեն նոր գաղափարախոսության որդեգրման միջոցով:

## *2. Հայկական ինքնատիպ քաղաքակրթության էությունը*

Որպես պետականազուրկ ազգ գոյատևելու մոտ 1000-ամյա պատմության ընթացքում ձևավորվել և ազգային-ազատագրական շարժումների դարաշրջանում սրբազնագործվել է հայկականության այն ըմբռնումը, որը մեր դիմադրողականությունն ապահովող սպեցիֆիկ յուրահատկությունները նույնացնում է մեր էության հետ: Մինչդեռ, այդ յուրահատկությունները, որպես հայոց գոյամարտերի հիմնական կռվաններ, ապահովել և ապահովում են միայն ու միայն արտաքին աշխարհին հակադրվելով՝ որպես հայ ապրելու խնդրի լուծումը, այսինքն՝ հանդիսանում են հայկականության պահպանման միջոցը, զենքն ու զրահը: Նրանք ցույց են տալիս ոչ թե այն, ինչը բնորոշ է մեր բուն էությանը, այլ այն, ինչի միջոցով սեփական պատյանի մեջ ներփակված մեր խորքային էությունը հարյուրամյակներ շարունակ դիմադրել է արտաքին մարտահրավերնե-

րին: Ուստի պետականության ձևավորումով ստեղծելով ազգի դիմադրողականության ապահովման քաղաքական պատյանը, մենք այսօր պետության ներսում նման ձեռքբերովի էության կարիքը չունենք, քանզի հնարավորություն ենք ստացել բացահայտելու մեր բուն էությունը, որը հիմնված է ոչ թե աշխարհից մեզ տարբերող կամ աշխարհի հետ մեզ նույնացնող արժեքների, այլ դրանց որպես մեկ ամբողջական բնույթն ըմբռնելու և նրանց միջոցով՝ ողջ աշխարհի հետ հարաբերվելու կերպի ընկալման վրա: Ուրեմն հայկականությունը հայության քաղաքակրթական տիպի և նրան բնորոշ դրական առաքելության ընկալումն է՝ որպես աշխարհի հետ հարաբերվելու, նրանով հարստանալու և նրան հարստացնելու համար անհրաժեշտ՝ սեփական նպատակի, գործի, առաքելության մարմնավորում: Այդ պատճառով հայկականությունը զուտ ազգայինը կամ նեղ ազգայինը չէ, այլ ազգայինի ու համամարդկայինի այն սինթեզը, որը մեզ բնորոշ է եղել ի սկզբանե, բայց խաթարվել է պետականության կորստի, սեփական պատյանի մեջ պարփակվելու և այդ պատյանը պահպանելու համար մղված օրհասական գոյամարտերի արդյունքում: Հայկականությունը նորմալ, բնական վիճակում մեր հանրույթի մեջ արթնացող դրական, ստեղծագործ ազդակների հանրագումարն է, որը մեր քաղաքակրթական այցեքարտն է՝ մարդկության մեծ ընտանիքում: Այդ առումով հայ հանրույթը որպես հնդեվրոպական կամ արիական ժողովուրդների ընտանիքի անդամ, սկզբունքորեն տարբերվում է ինչպես սովորական ժողովուրդներից, այնպես էլ մարդության փրկության համար որևէ նոր մեսիայի, առաքելության կրողը դարձած ազգերից առաջին հերթին նրանով, որ հանդիսացել ու հանդիսանում է ոչ թե որևէ ժամանակավոր մեսիայի՝ նոր առաքելության դրոշակակիրը՝ ինչպես ռուսները, գերմանացիները և վերջապես ամերիկացիները, որոնց նորագույն առաքելությունը, ի դեմս լիբերալիզմի գաղափարախոսության վրա հիմնված նյութական բարեկեցության երազանքի, արդեն փակուղի է մտնում, այլ ողջ մարդկային քաղաքակրթության համար ամենամեծ ներդրումն ունեցած ժողովուրդների մեծ ընտանիքին՝ հնդեվրոպացիներին կամ արիացիներին բնորոշ՝ հին, նախնական և այդ առումով ոչ թե անցողիկ, այլ հավերժական առաքելության կրողը: Դա պայմանավորված է նրանով, որ հանդիսանալով հնդեվրոպացիների նախահայրենիքը և այդ նախահայրենիքում ձևավորված ու հազարամյակներ գոյատևած քաղաքակրթական տիպը, հայ հանրույթը



սաղմնային վիճակում պահպանել է արիացիներին ի սկզբանե բնորոշ մարդ-բանականի ու բնության զավակի նախնական հարմոնիան, միասնությունը և նրանց ներսում առկա հակադիր տարերքների անբաժանելիությունը: Այդ երկու տարերքների հետագա տարանջատումը, հակադրությունն ու պայքարը ձևավորվել են Եվրոպան ու Ասիան, ռացիոնալիզմն ու իռացիոնալիզմը, «առևտրականի» ձեռներեցությունն ու ստեղծագործ ոգին և «հերոսի» կամքն ու վճռականությունը, որոնցից որևէ մեկի գերակայությունից էլ բխել են փաստորեն բոլոր ազգերի բոլոր առաքելությունները: Մինչդեռ իրենց նախնական ու անաղարտ տեսքով նրանք ունեցել են ընդամենը մեկ առաքելություն՝ ոչ թե միայն իշխել բնության վրա /ռացիոնալիզմ/ կամ միայն ու միայն ենթարկվել նրա անմեկնելի տարերքին /իռացիոնալիզմ/, այլ ապրել նրա հետ անխզելի միասնության ու փոխգործակցության մեջ:

Դա է պատճառը, որ նորագույն ժամանակների մեծագույն մտածողներից շատերը մեզ համարել են նախնական, անգամ՝ արխայիկ տիպ:

Դա է պատճառը, որ մեր ինքնության ընկալման բոլոր ժամանակներում ինքներս մեզ գնահատել ենք որպես ամենահին երկրում ապրող ժողովուրդ, նախահայրենիք, Երկիր Դրախտավայր,մարդկության օրրան և այլն, և այլն:

Դա է պատճառը նաև այն ակնհայտ իրողության, որ բոլոր հիմնական դարաշրջաններում մեր ոգու ծառը միշտ էլ երկու մեծ, բայց անբաժանելի ճյուղեր է ունեցել, ուստիև մյուս արևելաքրիստոնեական ժողովուրդների նման չենք փորձել մինչև վերջ բյուրեղացնել մեր ազգային ոգու քաղաքակրթական կողմնորոշումն ու միշտ էլ Ասիայի համար եղել ենք Եվրոպա, Եվրոպայի համար՝ Ասիա: Նման նախնական տիպը չի կարող ազատվել իր ներքին բաղադրիչներից, չի կարող դառնալ միայն «հերոս» կամ միայն «առևտրական», միայն «Մամիկոնյան» կամ միայն «Բագրատունի»: Այդպիսի նախնական տիպը հավասարակշռված է իր էության մեջ հանդիսանալով մարդկային ողջ քաղաքակրթության արժեքային համակարգի ընդհանուր հավասարակշռության առանցքը, նրա բոլոր նոր առաքելությունների ձախողման անխուսափելիության ապացույցը և հին առաքելությանը՝ Երկիր Դրախտավայրին վերադառնալու համար անհրաժեշտ բնօրինակը: Այդ պատճառով որպես հայ ցեղի ու հայրենիքի միասնության ընկալում, որպես հնդեվրոպական նախահայրենիքի գաղա-

փար և որպես մարդկության փրկության համար անհրաժեշտ Երկիր Դրախտավայրի քրիստոնեական ընկալում, Հայաստանը միշտ էլ ինքն իրեն համարել է մարդկային քաղաքակրթության նախահայրենիք, այսինքն՝ այն վայրը, ուր մարդ-բանականը ապրում էր մարդ-բնության զավակի հետ հաշտության և հարմոնիայի մեջ և որից հեռանալով, ճյուղավորվելով՝ հակասության մեջ մտավ և՛ ինքն իրեն, և՛ աշխարհի հետ: Այդ պատճառով է, որ հետագայում, երբ քրիստոնեական գրեթե ողջ աշխարհն ընկավ իր դուալիստական մտածողության խորխորատը, Հայաստանն ու հայությունը պարզեցին միաբնակության՝ մոնոֆիզիտիզմի դրոշը, որն իր կրոնական պատյանի կամ կաղապարի մեջ արտացոլում էր հայկականության արժեքային համակարգը՝ հային բնորոշ ազգային աշխարհընկալման սկզբունքները: Ուստի միաբնակության խնդիրը ոչ թե միայն կրոնական որոշակի դոգմա էր, այլ հայկական քաղաքակրթության արժեքային համակարգի տեղափոխումը քրիստոնեական աշխարհընկալման պատյանի մեջ, այսինքն՝ քրիստոնեության «հայացման» մեր սեփական փիլիսոփայությունը:

Հայկականության արժեքային համակարգի ներսում նման սկզբնական համադրության պահմանումը հանգեցրել է նրան, որ հետագա դարերում Հայաստանը վերելք է ապրել քաղաքակրթական հակադիր ազդակների՝ իր վրա ունեցած միաժամանակյա ազդեցության դարաշրջաններում և ընդհակառակը՝ անկում ապրել ու պարփակվել իր ներսում, երբ թուլացել է այդ ազդակներից մեկի ներգործությունը: Վերելքի փուլերը եղել են հելլենիզմի դարաշրջանում, արևելաքրիստոնեական մշակույթի ծաղկման շրջանում, նոր ժամանակների ռացիոնալիզմի ծնունդը հանդիսացող եվրոպական կամ արդիական ըմբռնումով՝ արևմտյան քաղաքակրթության թափանցման դարաշրջանում՝ 19-20-րդ դարերում: Ուստի, հայկականության արժեքային համակարգի և նրա վրա հիմնված՝ մեր քաղաքակրթական տիպի այս ընկալումից կարելի է եզրակացնել, որ մարդկության հանդեպ մեր ունեցած առաքելությունը ոչ թե նրան հերթական նոր մեսիայի իրականացման մեջ ներքաշելն է, այլ մարդկությանն ի սկզբանե բնորոշ համադրական-համամարդկային կենսաձևին վերադարձնելը՝ որպես միշտ էլ նրանով ապրած և նրան երբեք չդավաճանած նախնական համադրության դասական օրինակ, նախատիպ: Իսկ դրան հասնելու համար և դրան հասնելուց առաջ, Հայաստանը պետք է ստեղծի իր քաղաքակրթական առաքելության իրականացման համար անհրաժեշտ բաղադրիչների համապատասխանությունը՝ արդիականությանը և նրան բնորոշ նոր մարտահրավերներին:



### *3. Արդիականությունը և Հայաստանի ու հայության քաղաքակրթական առաքելությունը*

Արդիականությունը որպես հետսառըպատերազմյան դարաշրջանին բնորոշ քաղաքական, տնտեսական ու մշակութային նոր արժեքների ու չափանիշների վրա հիմնված ազգ-պետությունների մրցակցության ու համագործակցության միասնական դաշտ, առաջին հերթին բնորոշվում է նրանով, որ իր ջրապտույտի մեջ ներքաշելով փաստորեն ողջ Երկիր մոլորակի բոլոր ազգերին ու ժողովուրդներին, նրանց պարտադրում է «խաղի» բոլորովին նոր կանոններ: Դրանցից ամենահատկանշականը համաշխարհային առումով ընթացող մրցակցության մեջ ուժի գործոնի անվերապահ տեղաշարժն է՝ ռազմաքաղաքական հարթությունից դեպի տնտեսական-տեխնոլոգիական ոլորտ, որն իր հերթին բնութագրվում է ոչ թե քանակական, այլ որակական արժեչափերով: Դա պայմանավորված է նրանով, որ համաշխարհայնացումը մի կողմից հանգեցնում է շուկայի ընդլայնման, իսկ մյուս կողմից՝ նաև սահմանափակման, որի հետևանքով քանակը որակի չփոխարկվելու պարագայում կորցնում է իր մրցունակությունը: Նման պայմաններում տարածքների մեծության, ազգերի բազմաքանակ կամ փոքրաթիվ լինելու գործոնները մղվում են հետին պլան՝ իրենց տեղը զիջելով որակական ռեսուրսների /նորագույն տեխնոլոգիաներ և մարդկային-ինտելեկտուալ ներուժ/ առկայության գործոնին: Յուրաքանչյուր ազգին բնորոշ ներուժ կարողականության մեծությունը սկսում է չափվել որակական ռեսուրսների կուտակման համար անհրաժեշտ ինքնակազմակերպման գործուն աշխատակարգերի ձևավորման և դրանց հիման վրա ստեղծվող նյութական ու հոգևոր արժեքները մարդկությանը մատուցելու միջոցով՝ մի կողմից՝ շրջապատի վրա սեփական ներգործությունն ուժեղացնելու և մյուս կողմից՝ շրջապատի ներգործությունը թուլացնելու կարողականությամբ: Դրա հետևանքով զարգացման դինամիզմը վերածվում է հզորության կուտակման հիմնական չափանիշ-

ի: Դինամիկ կերպով զարգացող երկրները դառնում են «ժողովուրդների մեծ գաղթը» դեպի իրենց քաշող ձգողականության դաշտեր, որի հետևանքով ամայանում են ամբողջ երկրներ ու երկրամասեր: Արդիականությունը մի կողմից համահարթեցնում է առանձին ազգերի քաղաքակրթական ինքնատիպությունը պայմանավորող հիմնական տարբերությունները, բայց մյուս կողմից՝ ընդհակառակը, նոր հնարավորություններ է բացում այն ազգերի համար, որոնք իրենց քաղաքակրթական-մշակութային ներուժը բացահայտում են որպես սեփական որակական ռեսուրսներ: Նման պայմաններում աշխարհի ցանկացած ռեգիոնում արդիականությունը որոնում ու գտնում է իր ծավալման համար անհրաժեշտ պայմաններ ապահովող քաղաքակրթական մեծ ներուժ և դրանով պայմանավորվող՝ մարդկային-ինտելեկտուալ հնարավորություններ ունեցող ազգերին՝ նրանց վերապահելով արդիականության ծավալման տարածաշրջանային հենակետերի դերակատարությունը: Թափանցումների այդ գոտիները դառնում են աշխարհի ամենադինամիկ կերպով զարգացող կենտրոնները՝ ապահովելով բնակչության ներհոսքը: Եվ ընդհակառակը, զարգացման դինամիզմը կորցնող երկրներն ու տարածաշրջանները դատապարտվում են մի յուրահատուկ «միգրացիոն գենոցիդի», ուր մարդկանց ֆիզիկական ոչնչացման փոխարեն ի հայտ է գալիս արտագաղթի ու բնակչության աստիճանական ծերացման միտումը:

Մեր տարածաշրջանը, ուր հայ ժողովուրդը հռչակել է իր պետական անկախությունը, նույնպես աննկատ կերպով ներքաշվել է այդ գործընթացների մեջ, որի հետևանքով առնվազն վերջին 30 տարվա ընթացքում Հայաստանն ունեցել է մոտ 2 միլիոնի հասնող արտագաղթ՝ դեպի ԱՄՆ, Ռուսաստան, Եվրոպա, այլ երկրներ ու տարածաշրջաններ, այն դեպքում, երբ Ղարաբաղյան պատերազմում տվել է ընդամենը մոտ 7 հազար զոհ: Սա նշանակում է, որ մեր երկրի ռազմաքաղաքական հզորության մեծացումը կամ հզոր դաշնակիցների պաշտպանական վահանի տակ գտնվելը անցած տարիների ընթացքում մեզ ընձեռել է սոսկ մարտավարական առավելություններ: Իսկ ահա ռազմավարական առումով նման ձեռքբերումներն ամենևին էլ չեն փրկում հայությանը «միգրացիոն գենոցիդից»: Ներկայումս փաստորեն կրկնվում է այն նույն գործընթացը, ինչը ծավալվեց միջնադարում՝ Անիի թագավորության անկումից հետո: Քոչվորական կենսաձևով ապրող ժողովուրդների թափանցման հետևանքով քաղաքակրթական ավելի բարձր հատկանիշներով բնութագրվող հայությունը արտագաղթեց դեպի Ղրիմ, Կիլիկիա, Լեհաստան, հետագայում էլ՝ Կ. Պոլիս, Զմյուռնիա, Ռուսաստան /XIX դարի ռուս-թուրքական պատերազմների արդյունքում/ և այլն: Դրա հետևանքով բուն Արևմտյան Հայաստանը մինչև Հայոց ցեղասպանությունն արդեն իսկ հայտնվել էր դեմոգրաֆիական ուժասպառության եզրին և կորցրել իր դիմադրողականության համար անհրաժեշտ հնարավորությունների մեծ մասը: Ներկայումս ղարաբաղյան պատերազմում հաղթանակած Հայաստանը կարող է ևս 10 նման պատերազմներ շահել, բայց ի վերջո պարտվել ու անհետանալ պատմության ասպարեզից, եթե չդառնա տարածաշրջանի ամենադինամիկ կերպով զարգացող երկիրը: Պատճառն այն է, որ Հայաստանը քանակական ռեսուրսներով ու կոմունիկացիոն հնարավորություններով զիջում է իր բոլոր հարևաններին, ուստի կանգնած է կա՛մ որակապես նրանց գերազանցելու, կա՛մ էլ պարտվելու երկընտրանքի առաջ: Նման պարտության հեռանկարն ուրվագծվում է ոչ այնքան անմիջական ռազմական սպառնալիքների տիրույթում, որքան արդիականության թափանցումների հարթության վրա: Այդ առումով ակնհայտ է դառնում, որ մոտակա 10-20 տարիների ընթացքում մեր տարածաշրջանում և նրա շուրջ կձևավորվեն տնտեսական թափանցումների մի քանի դինամիկ կերպով զարգացող օջախներ՝ առաջավորասիական, իսկ հնարավոր է նաև կովկասյան հոնկկոնգներ, որոնք կապահովեն բնակչության բարձր կենսամակարդակ և որպես դրա արդյունք՝ տեղի կունենա հայության վերջին ու ամենակործանարար արտագաղթը: Կարտագաղթի ոչ թե վերջին 3 տասնամյակում լոսանջելեսներ, մոսկվաներ մեկնած բնակչության ամենաակտիվ մասը և գործազուրկ դարձած ավելցուկը, այլ ինքնաթիռի 1-2 ժամվա թռիչքի հեռավորության վրա 5-10 անգամ ավելի բարձր աշխատավարձ ստանալու հնարավորությունից չխորշող յուրաքանչյուր ոք: Նյութական շահագրգռություններին կգումարվեն նաև հայ տեսակին բնորոշ ձգտումը դեպի դինամիկ կերպով զարգացող կենտրոններ, դեպի լույս, դեպի առաջադիմություն: Նման պայմաններում այսօրվանից արդեն կարող ենք եզրակացնել, որ քանակական բոլոր հիմնական արժեչափերով իր հարևաններին զիջող Հայաստանը կա՛մ հենց ինքը կդառնա տնտեսական թափանցումների հիմնական օջախը մեր տարածաշրջանում, կա՛մ էլ հենց ինքը կդառնա այդ օջախների քաղաքակրթական ձգողականության զոհը: Սա գոյու-

թյան կռվի նոր, բայց հիմնական մարտահրավերն է, որի լուծումը գտնվում է զարգացման խնդիրների տիրույթում: Նման մարտահրավերի գոյությունը պահանջում է աշխարհայացքային-գաղափարախոսական ուղենիշների լուրջ փոփոխություն, քանզի ակնհայտ է դառնում, որ պրոգրեսը կարող է փոշիացնելու միջոցով ոչնչացնել մեզ՝ առանց յաթաղանի կամ թնդանոթի օգտագործման:

Նման պայմաններում ակնհայտ է դառնում նաև, որ գոյատևման խնդիրների ու առաջին հերթին ազգի ու հայրենիքի միասնականացման գերնպատակի վրա հիմնված ազգային գաղափարախոսությունը և քաղաքակիրթ աշխարհի մեջ ինտեգրվելու խնդիրը հիմնավորելու համար նրանից հրաժարվելու և նոր, զուտ պետական գաղափարախոսություն ստեղծելու ծանոթ մտասևեռումը չեն կարող մեզ տալ առաջ եկած նոր մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ գաղափարախոսական լուծումներ: Չեն կարող, որովհետև ընթացիկ խնդիրների լուծումը չեն դիտարկում մեր տեսակին ի սկզբանե բնորոշ դրական քաղաքակրթական առաքելության իրականացման տիրույթում և չեն նշմարում այդ առաքելության ու արդիականության նոր մարտահրավերների միջև նշմարվող կապի ու փոխպայմանավորվածության «գաղափարախոսական պորտալարը»: Մինչդեռ ներկայումս ավելի քան ակնհայտ է դառնում, որ արդիականությունը Հայաստանի առջև բացում է իր ավանդական քաղաքակրթական առաքելության իրականացման նոր, ավելի բարձր շրջափուլի մեջ մտնելու եզակի հնարավորություն՝ դառնալով «ոգու սով» ապրող արևմտյան և 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո նրան հակադրվելու սպոնտան փորձերի ծավալման շրջափուլը մտած արևելյան քաղաքակրթության նոր համադրությունը, որի ներսում մարդ-բանականը կրկին կհաշտվի «բնության զավակի» հետ՝ այնպես, ինչպես դա գոյություն է ունեցել հնդեվրոպացիների նախահայրենիք Հայկական լեռնաշխարհում և որպես քաղաքակրթական անանց ավանդույթ փոխանցվել է մեզ՝ այդ նախահայրենիքի տերերին: Նման համադրության ստեղծման համար ունենալով և՛ ինտելեկտուալ անհրաժեշտ ներուժ, և՛ մշակութային-քաղաքակրթական հսկայական ժառանգություն, մենք պարտավոր ենք աստիճանաբար, փուլ առ փուլ տեր կանգնել հենց մեզ պատկանող առաքելությանը:

Ներկա հանգրվանում տեր կանգնել մեր առաքելությանը նշանակում է



առաջադրել և լուծել երեք խումբ խնդիրներ.

ա/ բացահայտել մեր թռիչքաձև զարգացման հնարավորությունները՝ ողջ մարդկության առաջընթացը պայմանավորող նորագույն տեխնոլոգիաների կիրառման այն ոլորտներում, որոնք ոչ թե քանակական, այլ որակական ռեսուրսների կարիք են զգում,

բ/ բացահայտել մեր համադրական, հարմոնիկ քաղաքակրթությանը բնորոշ անցյալի ու ներկայի, բնության և մարդու, հոգևորի ու նյութականի անխզելի միասնությունը, ստեղծելով մի հասարակություն, որը շարունակական երկխոսության մեջ է գտնվում իր պատմության ու նրա հուշարձանների, մարդու ձեռքով չաղճատված բնության, իր մշակութային հարուստ ժառանգության, և վերջապես, իր նախնական՝ հետագայի դոգմատիկ մեկնաբանություններով չծանրաբեռնված քրիստոնեական հավատի հետ:

գ/ հստակեցնել Հայաստանի ու հայության գործառույթը՝ արմատական հեղաբեկումների շրջափուլ թևակոխող մեր տարածաշրջանում այն դիտարկելով որպես մեր անցյալի ու ապագայի մեծ առաքելության իրականացման առաջին հանգրվան:

Այսպիսով, մեր առաքելությանը տեր կանգնելու հրամայականը պահանջում է այս երեք փոխլրացնող խնդիրների լուծման միջոցով հեռանկարում դառնալ Երկիր մոլորակի այն կետը, որը մի կողմից հագեցնում է Արևմուտքի «ոգու սովը», քանի որ հաղթահարում է ժամանակակից տեխնոկրատ հասարակության միակողմանիությունը, այդ հասարակության առջև բացահայտելով իր նախահայրենիքը որպես պատմություն, բնություն, մշակույթ ու հավատ և մյուս կողմից՝ հագեցնում է Արևելքի ձգտումը դեպի արդիականացում, նորագույն տեխնոլոգիաներ և կյանքի նոր չափանիշներ:

Այսօր քաղաքակրթությունների հավասարակշռության վերականգման նման կենտրոն կամ առանցք դառնալու փորձեր են անում շատ երկրներ, մանավանդ նրանք, որոնք գտնվում են նախկին Բյուզանդական կայսրության տարածքում: Սակայն չպետք է մոռանալ, որ նրանց մի մասի համար այն պարզապես նվաճված, խորթ տարածք է, որի հուշարձաններն օգտագործվում են որպես եկամտի աղբյուրներ /Թուրքիա/, մյուսները գտնվում են այդ տարածքից դուրս, իսկ երրորդները իրենց սահմանափակ հնարավորությունների պատճառով կարողանում են դառնալ միայն միջնորդա-

կան առևտրի օջախներ՝ կամրջելով Արևմուտքն ու Արևելքը: Մինչդեռ ամբողջ Մերձավոր և Միջին արևելքում, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ հարավային գոտում չկա Հայաստանի նման մեկ այլ երկիր, որն ունի նման դերակատարության համար անհրաժեշտ բոլոր հնարավորությունները՝ միասին վերցրած, այսինքն՝ և՛ որակյալ մարդկային-ինտելեկտուալ ներուժ, և՛ հարուստ մշակույթ ու պատմական ժառանգություն, և՛ համաքրիստոնեական նշանակություն ունեցող նախնական ու անաղարտ արժեքներ, և՛ երկու քաղաքակրթությունների սահմանագծի վրա գտնվող հարմար դիրք:

Սա նշանակում է, որ ճակատագիրը մեզ վերապահել է նոր հնարավորություն՝ դառնալ այնպիսին, ինչպիսին եղել ենք ի սկզբանե, տեր կանգնել նախախնամությամբ մեզ վերապահված առաքելությանը՝ դրանով իսկ կանխելով ու բացառելով Հայաստանն աշխարհի քարտեզից ջնջելու բոլոր նկրտումները: Ավելին, աստիճանաբար սեփական քաղաքակրթական առաքելությանը տեր կանգնելու պարագայում մեր այն հարևանները, որոնք ունեն նման նկրտումներ, կարող են հայտնվել քաղաքակրթական առումով օտար տարրերի, անոմալիաների վիճակում: Հայաստանի այդ դերակատարության վերականգնումը խաղից դուրս է թողնելու առաջին հերթին Թուրքիային, որը ներկայումս անհաջող ձևով փորձում է ստանձնել քաղաքակրթությունների կամրջի դեր: Սակայն այսօր Թուրքիային իրենց գիրկը չեն ընդունում ոչ՛ Արևմուտքը , ոչ՛ Արևելքը՝ դրանով իսկ մերժելով քաղաքակրթությունների հավասարակշռության առանցք դառնալու նրա հավակնությունները: Ավելին, իր ներսում առկա քաղաքակրթական հակադիր ազդակների կոլիզիայի ու բախման արդյունքում Թուրքիան ներքնապես ճեղքվում է, որը դրսևորվում է Եվրամիություն մուտք գործելու ձգտումների և Թուրքիայի ներսում իսլամական արմատականության վերելքի փոխբացասող միտումների տեսքով:

Ի տարբերություն Թուրքիայի, Հայաստանը քաղաքակրթական առումով հարազատ է եվրոպական ընտանիքին, ավելին՝ և՛ ցեղային առումով՝ որպես հնդեվրոպացիների նախահայրենիք, և՛ կրոնական առումով՝ որպես քրիստոնեական հավատի նախնական, անաղարտ դրսևորում, հիշեցնում է նրան իր ակունքները: Հայաստանը խնդիր չունի նաև ավանդական՝ անաղարտ իսլամը դավանող երկրների՝ արաբական աշխարհի ու մանավանդ Իրանի հետ, որոնցով միջնորդավորված Արևելքը՝ որպես



ինքնատիպ մշակույթ ու քաղաքակրթություն, Հայաստանը համադրում է ռացիոնալիստական Արևմուտքի հետ: Դրանով իսկ, այն ժամանակ, երբ Թուրքիան վերածվելու է քաղաքակրթությունների հակադրության ու բախման թատերաբեմի, վերջիններս պետք է փնտրեն իրենց համադրության ու սինթեզի տարածաշրջանային օջախը և փորձեն նրա միջոցով կապվել միմյանց հետ՝ խաղից դուրս թողնելով Թուրքիային: Խաղից դուրս մնացած և անոմալիայի վերածված նման երկրները, վաղ թե ուշ կանգնելու են տրոհման սպառնալիքի առաջ և՛ ներքին և՛ արտաքին ազդակների միաժամանակյա ներգործության արդյունքում:

Ուրեմն մեր քաղաքակրթական առաքելությանը տեր կանգնելու անհրաժեշտությունը նոր ուղիներ է բացում ոչ միայն Հայաստանի զարգացման և աշխարհում իրեն արժանի տեղ գրավելու, այլև հայ ժողովրդի ազգային խնդիրների լուծման համար:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# Ազգային-պետական գաղափարախոսություն

### *1. Նոր գաղափարախոսության անհրաժեշտությունը*

Արդիականության նոր մարտահրավերներին դիմակայելու և սեփական քաղաքակրթական առաքելությունը վերստանձնելու հրամայականները պահանջում են մշակել Հայոց պետականության և հայ ազգի համար ունիվերսալ-ինտեգրող գործառույթներ իրականացնող մի այնպիսի գաղափարախոսություն, որը կներառի.

ա/ ազգային գաղափարախոսության ազգապահպան գործառույթների՝ ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրներին առնչվող մասը,

բ/ հայկականության արժեքային համակարգի ամբողջական ընկալումը և նրանից բխող՝ աշխարհում մեր տեղի ու դերի սահմանումը որպես գոյատևման ու զարգացման խնդիրների միաժամանակյա լուծման լավագույն տարբերակ,

գ/ Հայաստանի ու հայության ավանդական քաղաքակրթական առաքելության ընկալումը և նրանից բխող անմիջական ֆունկցիայի հստակեցումը՝ արդիականության նոր արժեչափերի և նրանցից բխող մարտահրավերների դաշտում:

Ներկայումս նման դերակատարություն ստանձնելու հավակնություն կարող է ունենալ նոր՝ ազգային-պետական գաղափարախոսությունը, որը չի կարող լինել ոչ զուտ ազգային և ոչ էլ՝ նեղ պետական, չի կարող նաև մեխանիկորեն համադրել նրանց գործառույթները, այլ առաջինին թողնելով իր ավանդական խնդիրների իրականացումը, նա երկրորդի գործառույթները դուրս կբերի սովորական ազգի ստեղծած սովորական պետության առջև կանգնած խնդիրների անձուկ շրջագծից՝ դրանք վերածելով արդիականության պայմաններում պետության ու ազգի կողմից սեփական առաքելությունը վերստանձնելու բանաձևի:

Նման գաղափարախոսության ստեղծման բանալին գտնվում է արդիականության կողմից մեկ ամբողջության վերածվող արդի աշխարհում պետությունն ու ազգը մեկ ամբողջություն և արդիականության անքակտելի մաս դարձնելու հնարավորության առկայության մեջ: Աշխարհի միասնականացումը կարող է «տեխնիկապես» լուծել պետության ու ազգի միասնականացման խնդիրը, եթե վերջիններս այդ աշխարհի հանդեպ մշակեն սեփական առաքելության ընկալման վրա հիմնված՝ գաղափարախոսական-աշխարհայացքային վերաբերմունքի միասնական հայեցակարգ: Նման հայեցակարգի առկայությունը կարող է հետին պլան մղել պետության և ազգի շարունակվող տարանջատման փաստից բխող դժվարությունները և հայկականության արժեքային համակարգը դարձնել պետական և ազգային կենսաձևերի անքակտելի զոդման՝ Հայաստանի ու հայության միասնականացման բանաձև:

### *2. Ազգային անվտանգության համադրույթը որպես «ունիվերսալ զսպաշապիկ»*

Արդիականության նոր մարտահրավերներին դիմակայելու և նրանց համատեքստում՝ սեփական քաղաքակրթական առաքելությունն իրականացնելու խնդիրը կարող է դառնալ մեր պետական և ազգային կյանքի հրամայականը, եթե այն հակասության մեջ չմտնի Հայաստանի ազգային անվտանգության համադրույթի հետ: Ազգային անվտանգության համադրույթը պետք է վերածվի «ունիվերսալ զսպաշապիկի» ոչ միայն ավանդական՝ ազգային, այլև ազգային-պետական գաղափարախոսության համար, քանզի առանձին վերցրած նրանցից և ոչ մեկը ներկայումս չեն ապահովում ազգային անվտանգության հետ կապված բոլոր խնդիրների լուծումը: Պատճառն այն է, որ արդի աշխարհում ոչ միայն պահպանվում, այլև ավելանում, անգամ բազմապատկվում են ինչպես ազգի գոյատևման, այնպես էլ զարգացման խնդիրների միակողմանի լուծումներից առաջ եկող վտանգները: Նման պայմաններում ցանկացած երկրի համար ազգային անվտանգության համադրույթը վերածվում է բոլոր վտանգների ու սպառնալիքների հաշվառման ու դասակարգման ունիվերսալ բանաձևի և նրա կիրարկման մեթոդի, որը դառնում է պարտադիր պայման ոչ միայն պետության, այլև յուրաքանչյուր ազգային կառույցի ու անհատի համար:

Մեզանում նման ունիվերսալ բանաձևի և նրա իրականացման մեթոդի

մշակմանը խանգարող հիմնական դժվարությունը «ազգային անվտանգություն» հասկացության մեկնաբանության մեջ պահպանվող ներքին հակասությունն է՝ նրանում առկա «պետական անվտանգություն» և «պետության սահմաններից դուրս բնակվող ազգի անվտանգություն» հասկացությունների մեխանիկական համատեղման կամ նույնացման անհնարինության փաստի տեսքով: Այս հանգամանքի գոյությունը ստիպում է մեզ «Ազգային անվտանգության համադրույթ» հասկացությունը մեխանիկորեն չնույնացնել այդ դաշտերից որևէ մեկի հետ, բայց միաժամանակ սահմանել նրա կիրարկման բանականորեն հնարավոր սահմանագիծը: Դա Հայաստանի՝ որպես Հայրենիքի անվտանգության ապահովման գերակայությունն է, որն առայժմ ներառում է Հայաստանի Հանրապետության, ԼՂՀ-ի, Ջավախքի և մեզ համար Հայրենիք հանդիսացող այն բոլոր տարածքների սահմանները, որոնցում ներկայումս բնակվում են հայեր: Այսինքն՝ մեր ազգային անվտանգության համադրույթը խարսխվում է այդ բոլոր տարածքների հայության անվտանգության ապահովման խնդրի՝ որպես Հայրենիքի հարատևման անհրաժեշտության բացարձակ գերակայության սկզբունքի վրա:

Ոչ հայրենաբնակ հայության անվտանգության ապահովման խնդիրը կարող է Հայաստանի, որպես պետության, արտաքին-քաղաքական առաջնահերթությունների կարևոր մասը կազմել, բայց որպես ցանկության ու հնարավորության հակաթեզի բանական լուծում, նա չի կարող դիտարկվել որպես Ազգային անվտանգության համադրույթի կիրարկման ոլորտ:

Ուրեմն, հայերիս համար ազգային անվտանգությունը Անհատի, Հասարակության, Պետության ու Հայրենիքի կենսականորեն անհրաժեշտ շահերի պաշտպանվածությունն է: Կենսականորեն անհրաժեշտ շահեր ասելով նկատի ունենք պահանջմունքների այն ողջ հանրագումարը, որոնց բավարարումը հուսալիորեն ապահովում է Անհատի, Հասարակության, Պետության և Հայրենիքի գոյատևման ու պրոգրեսիվ զարգացման հնարավորությունները:

Ելնելով դրանից, կարելի է սահմանել, որ Հայաստանի Ազգային անվտանգության համադրույթը Անհատի, Հասարակության, Պետության ու Հայրենիքի կենսագործունեության բոլոր ոլորտներն արտաքին ու ներքին սպառնալիքներից պաշտպանելու միջոցով՝ նրանց անվտանգության



ապահովմանն ուղղված հայացքների ու գործնական մոտեցումների համակարգ է:

Ըստ այդմ, Հայաստանի Ազգային անվտանգության համադրույթն իրականացնում է ազգային անվտանգության ապահովման խնդիրների ողջ համալիրի դասակարգումը: Դրանք տարանջատվում են երեք ոլորտների.

ա/ ըստ սպառնալիքների հնարավոր աղբյուրների.

I արտաքին անվտանգություն, II ներքին անվտանգություն,

բ/ ըստ սեփական անվտանգության ապահովման կարիքը զգացող օբյեկտների

I անհատ, II հասարակություն, III պետություն, IV Հայրենիք, այսինքն՝ Հայաստան + Անդրկովկասի հայաբնակ ու հայապատկան հողեր,

գ/ ըստ կենսագործունեության ոլորտների.

I ռազմական, II քաղաքական, III տնտեսական, IV դեմոգրաֆիական, V սոցիալական, VI տեղեկատվական, VII բնապահպանական, VIII ազգային անվտանգության ապահովման այլ ոլորտներ:

Այս դասակարգումը, որն իր հիմնական գծերով համընկնում է Հայաստանի անվտանգությունը երաշխավորող տերության՝ Ռուսաստանի Ազգային անվտանգության համադրույթի հետ[23], հնարավորություն է տալիս իրականացնել արտաքին ու ներքին սպառնալիքների կանխատեսման ու դրանք ժամանակին չեզոքացնելու համար անհրաժեշտ այն միջոցառումները, որոնք կարող են ժամանակավորապես /մինչև առկա վտանգների չեզոքացումը/, խախտել կամ սահմանափակել պետության գոյատևման ու անկաշկանդ զարգացման համար անհրաժեշտ հիմնական համամասնությունները կարգավորող ազգային-պետական գաղափարախոսության՝ պետական-քաղաքական, տնտեսական, կառուցվածքային և այլ առանցքների դինամիկ հավասարակշռությունը: Օրինակ, պետության վրա կախված արտաքին սպառնալիքների գոյության պարագայում անխուսափելի է ազգային-պետական գաղափարախոսության միջոցով կարգավորվող Միասնության սկզբունքի /արտաքին ճակատ/ և Համաձայնու-

[23] Նման «ընդօրինակումը» անհրաժեշտ է այն պարզ պատճառով, որ Հայաստանի Ազգային անվտանգության համադրույթն առայժմ անմիջականորեն չի կարող տեղավորվել գլոբալ անվտանգության ապահովման որևէ կոնցեպցիայի շրջագծում, քանզի հանդես է գալիս որպես երկկողմ Ռուսաստան-Հայաստան, ինչպես նաև, ԱՊՀ շրջանակներում ձեռք բերված՝ փոխադարձ անվտանգության ապահովման պարտավորություններից բխող կոնցեպտուալ լուծումների համակարգ:

թյան սկզբունքի /ներքին ճակատ/ հարաբերակցության փոփոխությունը՝ հօգուտ առաջինի և վերջինիս հիմքը կազմող ժողովրդավարության որոշակի սահմանափակումը: Կամ՝ եթե որևէ լուրջ սպառնալիք է կախվում երկրի տնտեսական անվտանգության վրա, ապա անհրաժեշտություն է զգացվում ժամանակավորապես խախտել պետության տնտեսական համակարգի առանցքը կազմող դինամիկ հավասարակշռությունը՝ ուժեղացնելով տնտեսության պետական կարգավորման գործառույթները: Մնացած բոլոր դեպքերում նման միջամտությունը բացառելու և զարգացման խնդիրներից բխող համամասնությունների անվերապահ գերակայությունն ապահովելու համար Ազգային անվտանգության համադրույթը պարտավոր է սահմանել պետության ու հայրենիքի վրա կախված սպառնալիքները ճշտող շեմային ցուցանիշների այնպիսի սանդղակ, որի հաշվառումը պարտադիր պայման է պետական բոլոր ինստիտուտների գործունեության համար: Նման ցուցանիշները խախտվելու պարագայում գործում են Ազգային անվտանգության համադրույթից բխող առաջնահերթությունները: Այդ ցուցանիշներից ավելի նվազ վտանգների առկայության դեպքում ազգային պետականության բոլոր գործառույթները կարգավորվում են ազգային-պետական գաղափարախոսությամբ սահմանող առաջնահերթությունների հիման վրա:

### *3. Ազգային շահերի ընկալումը մրցակցային նոր միջավայրում*

Արդիականությունը, որպես ազգ-պետությունների մրցակցության ու համագործակցության սկզբունքորեն նոր դաշտ, այն մրցակցային միջավայրն է, ուր հայ ժողովուրդն իր ստեղծած Հայաստան պետության միջոցով կարող է և պարտավոր է հանդես գալ ոչ թե իր ծեռքբերովի էությունից բխող՝ աշխարհին հակադրվելով, սեփական առանձնահատկությունները պահպանելու գործառույթներով, այլ իր բուն էությանը՝ հայկականության արժեքային համակարգին բնորոշ և սեփական քաղաքակրթական տիպին ի սկզբանե ներհատուկ՝ դրական առաքելությամբ: Նման խնդրի լուծումը պահանջում է աշխարհայացքային մոտեցումների արմատական հեղաբեկում՝ հիմնվելով այն գաղափարի վրա, որ պետականության անոթի ձևավորումով այդ անոթի ներսում ազգի՝ որպես բացարձակ արժեքի, գործառույթային համակարգը բնորոշող հասկացությունների /ազգային



շահ, նպատակ, իդեալ և այլն/ իրական բովանդակությունը չափվում է տվյալ համակարգի պրոգրեսիվ ինքնավերարտադրության հնարավորությունների ապահովման աստիճանով, իսկ այդ անոթից դուրս՝ արդիականության հանդեպ մեր դիմադրողականության և ձգողականության ամենաօպտիմալ ուղեծրի հստակեցումով: Այն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.




Գրաֆիկը ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը վերջին հազարամյակի իր կրոնական համայնքի և պետականազուրկ ազգի կեցությամբ գոյատևել է չորրորդ՝ մարգինալների դաշտում, քանզի հնարավորություն ունենալով ձևավորել իր ինքնապահպանման քաղաքական անոթը՝ պետությունը, երկրորդ՝ կոսմոպոլիտների դաշտում հայտնվելու պարագայում արագորեն կորցրել է իր ազգային Ես-ը և ուծացվել: Պետականության ձևավորումով սկզբունքորեն փոխված նոր կացության հիմնական առանձնահատկությունն այն է, որ այս հակադիր ծայրահեղությունների մեկուսացնող կամ ուծացնող ազդեցությունը փոխարինվում է համադրության, այսինքն՝ ազգային ու համամարդկային արժեքների մեկտեղման հնարավորությամբ, որը գտնվում է մարդկային քաղաքակրթության

«արեգակի» հանդեպ մեր պետականության «մոլորակի» պտույտների ուղեծիրը հստակեցնելու միջանկյալ տիրույթում՝ երրորդ դաշտում: Դա նշանակում է, որ պետականության պայմաններում դարերով արմատավորված ազգային-ապազգային հակաթեզը ներկայումս կիրառելի է միայն արտաքին ագրեսիայի զանազան, խիստ պարզունակ ձևերին դիմակայելու առումով, այսինքն՝ հանդես է գալիս սոսկ որպես ազգային անվտանգության խնդրի գաղափարախոսական հիմնավորման միջոց: Մնացած բոլոր պարագաներում գործում է **«առաջադիմության մարտահրավերներին դիմակայելու միակ դեղատոմսն առաջադիմության առաջանցիկ տեմպերի հասնելու ունակությունն է»,** -աշխարհայացքային սկզբունքը: Քանի որ ժամանակակից աշխարհում առաջադիմության սուբյեկտը ազգ-պետությունն է, ապա զարգացման առաջանցիկ տեմպերի ձեռքբերման վճռական պայմանը հավասարակշռության բանաձևի որոնումն է՝ ինչպես մարդկային քաղաքակրթության հետ սեփական հարաբերությունների կարգավորման, այնպես էլ այդ հարաբերությունների սուբյեկտի՝ պետականության ներքին համամասնությունների ապահովման համար: Արտաքին ու ներքին գործելաոդաշտերում հաստատվող հավասարակշռության բանաձևը դինամիկ կերպով զարգացող աշխարհում կարող է հանդես գալ միայն ու միայն որպես միասնական՝ Դինամիկ հավասարակշռության բանաձև: **Դինամիկ հավասարակշռության բանաձևը ազգի պետական կեցությունը ողջ աշխարհին և սեփական էությանը ներդաշնակեցնելու հարատև գործընթացի յուրաքանչյուր կոնկրետ հանգրվանում հստակեցվող քաղաքական, տնտեսական, հոգևոր-մշակութային և այլ արժեչափերի որոշակի համակարգ է, որն անփոփոխ է որպես անընդհատ հարստացվող էություն, բայց փոփոխական է՝ որպես փոխլրացման ու փոխհարստացման հավերժական գործընթաց:** Նման ստատիկ ու դինամիկ գոյավիճակների զուգորդման մարտավարությունն ապահովում է պետականության գոյատևման ու զարգացման խնդիրների միաժամանակյա լուծումը: Սակայն, դրանով հանդերձ, այն չի բացահայտում տվյալ համակարգի գոյատևման ու զարգացման բուն իմաստը, ի սկզբանե նրան տրված առաքելությունը:

Ուրեմն, ներկայումս մեր ազգային շահերի պաշտպանությունը մի անվերջ մրցավազք է մեծ բանաստեղծի մատնանշած՝ «անիմաստ մի կյանքի համար», եթե նրա խորքում բացակայում է «մարելու» և մարած աստղերը «վառելու», այսինքն՝ սեփական առաքելությունն իրականացնելու գաղափարը: Բայց դա ոչ թե նոր «համաշխարհային հեղափոխությանը» զոհ դառնալու ուղի է, այլ արդեն իսկ «համաշխարհային» դարձած աշխարհում ապրելու պատգամ: Քանզի, ի վերջո, ազգային շահի ավանդական ընկալումը /տարածքների ընդարձակման միջոցով հայրենիքի ամբողջացում/ և արդիական մեկնաբանությունը /զարգացման առաջանցիկ տեմպերի ձեռքբերման միջոցով՝ ավելի մեծաքանակ նյութական ու հոգևոր արժեքների կուտակում/ դեռևս չեն պատասխանում այն հարցին, թե ո՞րն է նման իդեալների պաշտպանության, այսինքն՝ մի կողմից՝ շրջապատող աշխարհի ու մեր միջև գոյություն ունեցող հակասության հաղթահարման և մյուս կողմից՝ մեր ներքին զարգացման հնարավորությունների մեծացման պրագմատիկ հաշվարկի բուն իմաստը: Նման իմաստի բացակայությունը հայկական ազգային պետության աշխարհում ունեցած դերակատարությունը նույնացնում է մյուս բոլոր պետությունների դերակատարությունների հետ, որովհետև նրանցից յուրաքանչյուրը ձգտում է այդ նույն նպատակներին: Այս պայմաններում ինքնանպատակ դարձող հայկական դիմադրությունը կամ «ընկալողականությունը» վերածվում է մարգինալների և կոսմոպոլիտների բանավեճի, բայց ոչ հայկական Ես-ի, այսինքն՝ մեր բուն էության դրսևորման: Ուստի բնական է, որ ներկայումս անգամ մեր մեծագույն ողբերգությունը՝ Մեծ եղեռնը և դրա արդյունքում ազգային չլուծված խնդիրներ ունենալու փաստը, այսինքն՝ հողերի միասնականացման խնդիրը, ողջ աշխարհի կողմից դիտարկվում է որպես անցյալից մնացած «հին հաշիվ», **այսինքն՝ ավելորդ բեռ ներկա աշխարհակարգի ու մարդկային ողջ քաղաքակրթության համար՝ ընդհանրապես և անգամ, նրան մաս կազմող երկրի՝ Հայաստանի համար՝ մասնավորապես:**

Ուրեմն ստացվում է, որ լինելով սովորական պետություն և անգամ՝ պահանջատեր ազգ, հայ ժողովուրդն ու Հայաստանը ներկա աշխահակարգում գործնական-քաղաքական գետնի վրա չեն կարող որևէ «պարտք ու պահանջ» ունենալ ինչպես իրենց հարևաններից, այնպես էլ ողջ մարդկությունից, բացի զոհին տրվող բարոյական փոխհատուցումից: Նման ցավալի իրողությունը արձանագրում ենք Հայոց ցեղասպանության ճանաչման ներկա գործընթացի արդյունքում, երբ մեզ թվում է թե ճանաչմանը կարող է հետևել իրական փոխհատուցումը՝ հողերի վերադարձը, բայց

փաստորեն Հայոց ցեղասպանությունը ճանաչող որևէ երկիր նման խնդիր չի դնում ո՛չ իր և ո՛չ էլ Թուրքիայի առաջ: Եվ դրա պատճառը ոչ թե մարդկության անտարբերությունն է մեր հանդեպ, այլ նրա նկատմամբ մեր ունեցած դրական առաքելությունը և արդարության մեր իդեալը մոռացության տալը: Իր ապագայի մտասևեռումով ապրող մարդկության համար պատմական արդարության վերականգնման խնդիրը սրտամոտ է այնքանով, որքանով այն հանդիսանում է ապագայի մեծ արդարությանը հասնելու միջոցը և պատգամը: Ուրեմն, եթե Հայաստան պետությունն առաջնորդվի միայն մարդկության զարգացման ընթացքին հարմարվելով՝ նրանից առավելագույնը վերցնելու և այդ վերցրածը «ազգայնացնելու» օգտապաշտական հաշվարկով, նա երբեք չի կարող համոզել աշխարհին, որ հանուն իր իսկ նպատակների պետք է բավարարել Հայաստանի ազգային շահերը: Մինչդեռ վերածվելով մարդկության ապագայի մեծ իդեալն իրականություն դարձնող և դրանով նրա ձգտումներն ու երազանքներն իր վրա սևեռող որևէ առաքելական դերակատարության կրողը, Հայաստանը սեփական շահերը հետապնդելու գործը կտեղափոխի մարդկության ձգտումների ու երազանքների կիզակետ, այսինքն՝ այն կդարձնի **ոչ թե իրավազրկված ազգի կողմից շարունակաբար պահանջվող պատմական արդարության վերականգնման խնդիր, այլ ավելի լայն՝ համամարդկային արդարության հաստատման պայման:** Այստեղից էլ բխում է մրցակցային նոր միջավայրում ազգային շահերի և նրանց իմաստավորումը հանդիսացող ազգային իդեալների իրականացման հիմնական բանաձևը: Կա՛մ մենք սահմանափակվում ենք աշխարհի մեկ մասնիկը դառնալով՝ նրա զարգացման մակարդակին հասնելու և մարդկային մեր պահանջմունքները բավարարելու խնդրով /որը ներկա հայոց պետականության համար հանդիսանում է անժխտելի մարտավարական առաջնահերթություն/, կա՛մ էլ աշխարհի հետ Հայաստանի դինամիկ հավասարակշռության հաստատումն ու փոխհարստացումը համարում ենք սոսկ հանգրվան կամ միջոց՝ աշխարհում մեր սեփական «գույնը» ունենալու, այդ «գույնի» տարածման ու ընդարձակման խնդրով ողջ մարդկությանը շահագրգռելու, ուստիև մեր իրավունքների վերականգնման գործը մարդկության ապագան որոշող արդարության հաստատման պայմանը դարձնելու առաքելական դերակատարությամբ: Այս երկու խնդիրները գրեթե չեն հակասում միմյանց՝ ընթացիկ ու հեռանկարային քաղաքականության



գետնի վրա: Հակասությունն առաջ է գալիս նրանց արտացոլման գաղափարախոսական հարթության վրա:

Առաջին խնդրի լուծումը պահանջում է առաջնորդվել միայն ու միայն պետական գաղափարախոսությամբ: Մինչդեռ երկրորդ խնդրի լուծումն անհնար է իրականացնել ինչպես պետականազուրկ ազգին բնորոշ ավանդական՝ ազգային գաղափարախոսության, այնպես էլ միայն պետական գաղափարախոսության միջոցով, քանի որ այն պահանջում է սեփական ազգային առաքելությունն իմաստավորող նոր՝ **ձևով պետական, բնույթով ազգային՝ ազգային-պետական գաղափարախոսության ձևավորում:**

Իսկ սա նշանակում է, որ մրցակցային նոր միջավայրում մեր ազգային շահերի և պետական կեցության հաշտեցման բանաձևը միայն մեկ լուծում ունի. ինտեգրվել մարդկային ընտանիքի մեջ՝ որպես նրա հանդեպ սեփական գործառույթ և քաղաքակրթական առաքելություն ունեցող ազգ-պետություն և սկզբում այդ գործառույթի, իսկ հետագայում նաև առաքելության իրականացումով սեփական ազգային իդեալը դարձնել համամարդկային արդարության վերականգնման խնդրի բաղկացուցիչ տարրը, այսինքն՝ ոչ միայն մեր, այլև ողջ մարդկության առաջադրանքը:

### *4. Ազգային-պետական գաղափարախոսության քաղաքական նպատակները*

Մրցակցային նոր միջավայրում ազգային շահերի հետապնդման նոր ռազմավարության և նրանից բխող ազգային-պետական գաղափարախոսության ռազմավարական նպատակը Հին աշխարհում ու Միջնադարում Հայաստան պետության ու հայ ժողովրդի ողջ մարդկության առջև ունեցած ավանդական առաքելությունը վերհիշելու և այն աստիճանաբար վերստանձնելու միջոցով՝ համաշխարհային քաղաքակրթությանն անհրաժեշտ, սակայն ներկայումս բացակայող այն օղակի վերականգնումն է, որը նա կորցրել է քաղաքակրթությունների տարանջատումը բախման վերածվելու արդյունքում: Հայաստանը որպես այդ բախման մեծագույն զոհ, վերստանձնելով իր ավանդական դերակատարությունը, դրանով իր ամբողջության վերականգնման՝ Հայ Դատի խնդիրը կարող է դարձնել ողջ

մարդկային քաղաքակրթության հարմոնիկ հավասարակշռության վերահաստատման պայմաններից մեկը: Դա նշանակում է, որ ազգային-պետական գաղափարախոսության քաղաքական նպատակները միաժամանակ և՛ ազգային են, և՛ համամարդկային: Ազգային են այնքանով, որքանով Հայաստան պետությունը նպատակ է հետապնդում.

ա/ հաղթահարել աշխարհից իր մեկուսացվածությունը և դրանից բխող հետամնացությունը,

բ/ վերականգնել հազարամյակներ շարունակ իրականացրած իր դերակատարությունը, կրկին հանդես գալով որպես մարդկային քաղաքակրթությանն անհրաժեշտ մի օղակ, որի բացակայության փաստը ի վերջո կարող է կործանարար լինել ողջ մարդկության համար,

գ/ դրանով իսկ որոշակի տարածքի վրա ձևավորված սեփական քաղաքակրթության ամբողջացման խնդիրը՝ Հայ Դատը դարձնել Հայաստանով խորհրդանշվող համամարդկային իդեալի իրականացման պայման:

Այսպիսով, ազգային-պետական գաղափարախոսությունը հետապնդում է ազգային գաղափարախոսության՝ իր բնույթով խորապես ազգային նպատակ՝ մրցակցային նոր միջավայրում: Միաժամանակ, ազգային-պետական գաղափարախոսության նպատակները նաև համամարդկային են այնքանով, որքանով ներկա տարանջատված մարդկային քաղաքակրթությունը դեռևս չունի իր նախնական հարմոնիայի վերականգման միջոցով՝ բովանդակ մարդկության ապագան կերտելու համար անհրաժեշտ կամուրջ ու միաժամանակ՝ այդ հարմոնիայի բնօրինակ, ուստի զարգանում է որպես քաղաքակրթական մեկ՝ բանական-ռացիոնալիստական ազդակի կողմից մյուսին՝ բնությանը, մշակութային ավանդույթին ու մարդ արարածին՝ «բնության զավակին» ոչնչացնելու գործընթաց, որը արտաքուստ ընդունում է Արևմուտքի կողմից Արևելքի ու Հարավի դեմ ուղղված աշխարհաքաղաքական ծավալապաշտության տեսք: Նման ծավալումը գալիք տարիների ընթացքում լուրջ հաջողություններ է արձանագրելու, սակայն որպես ռազմավարություն, փաստորեն, ապագա չունի, քանի որ դրա արդյունքում աստիճանաբար ոչնչացվում է մարդկային բուն էության մի կարևոր մասը՝ «բնության զավակը»: Ուրեմն, ինչ-որ մի հանգրվանից հետո նա ուժասպառ է լինելու՝ բազում փորձություններ բերելով մարդկությանը: Եվ այդ պահին կրկին առաջ է գալու համադրության բանաձևի որոնման խնդիրը:



Ուստի ներկա աշխարհակարգում հայոց պետականության գոյատևման ու զարգացման փիլիսոփայությունը՝ ազգային-պետական գաղափարախոսությունը, հիմնավորելով Հայաստանին ու հայ տեսակին ի սկզբանե ներհատուկ համադրության բանաձևը և այն դարձնելով ազգային պետականության կենսագործունեության առանցքը, նպատակ է հետապնդում Հայաստանը ներկայացնել որպես մարդկային քաղաքակրթության ներքին հակադրության վերացման բնօրինակ՝ ինչպիսին նա եղել է դարերի ընթացքում: Նման ազգային ու համամարդկային նպատակների հետապնդման համար ազգային-պետական գաղափարախոսությունն առաջադրում է.

ա/ համաշխարհային քաղաքակրթության ներկա ճգնաժամի սեփական ախտորոշումը և նրանից բխող լուծումների առանձնահատուկ համակարգը,

բ/ հայկական քաղաքակրթության համադրական, հարմոնիկ բնույթի պատմա-համեմատական վերլուծությունը և նրանից բխող՝ ներդաշնակ, հարմոնիկ մարդկության ստեղծման բանաձևը՝ իր և ողջ աշխարհի համար,

գ/ հայկական քաղաքակրթության ավանդույթներին հավատարիմ՝ աշխարհի և ինքն իր ազգային բուն էության՝ հայկականության հետ հավասարակշռության մեջ գտնվող Երկիր Դրախտավայրի փիլիսոփայությունը և այն աստիճանաբար կյանքի կոչելու գործի՝ հայոց պետականության գործառույթի ընկալումը,

դ/ իր գործառույթին ու առաքելությանը համապատասխանող պետականության բնորդի կառուցվածքային համամասնությունների սահմանումը՝ Դինամիկ հավասարակշռության բանաձևը, որը կարող է դառնալ ընթացիկ և ռազմավարական խնդիրների համադրության հիմք:

## *5. Համաշխարհային քաղաքակրթության ճգնաժամը և նրա հաղթահարման ուղիները*

Համաշխարհային քաղաքակրթության ներկա ճգնաժամի արտաքին դրսևորման պատմահամեմատական բանաձևը մեկ նախադասությամբ, պայմանականորեն կարելի է սահմանել որպես «Նոր Հռոմի ճգնաժամ և

Նոր Բյուզանդիայի փնտրտուք»: Հենց միջնադարյան Բյուզանդիայի քաղաքակրթությունն էր այն մեծ կամուրջը, որն ապահովեց Արևմուտքի անտիկ /Հռոմ/ և նոր ժամանակների /Արևմտյան Եվրոպա/ հիմնական քաղաքակրթությունների տրանսֆորմացիայի էվոլյուցիոն բնույթը և նրանց ժառանգորդական կապը: Միաժամանակ, բյուզանդական քաղաքակրթությունն իր մեջ խտացրեց Արևելքի քաղաքակրթական ավանդույթը և այն փոխանցեց Արևմուտքին:

Այս երկու խնդիրների լուծումն ուժասպառ արեց միջնադարյան Բյուզանդիային և տրոհված մարդկային քաղաքակրթության հակադիր ազդակների բախումը ոչնչացրեց նրան, որպեսզի դարավոր պայքարում ուժասպառվելով՝ ի վերջո ողջ մարդկությունն ինքը դառնա Նոր Բյուզանդիա:

Նույնը տեղի ունեցավ նաև տիպաբանական առումով բյուզանդական քաղաքակրթության հետ նույն խմբի մեջ մտնող Հայաստանի ու հայ ժողովրդի ինքնատիպ քաղաքակրթության հետ: Վերջինս իր գերակշռող մասով ոչնչացվեց հենց որպես «Ասիայում բնակվող եվրոպացիների» քաղաքակրթություն: Մոտ 1 հազարամյակ տևած այս շարունակական պրոցեսի հետևանքը եղավ այն, որ ոչ միայն փլուզվեց Արևմուտքի ու Արևելքի մեծ կամուրջը՝ Բյուզանդիան, այլև բնաջնջվեցին նրա բեկորները կազմող ժողովուրդների մեծ մասը, բռնազավթվեցին նրանց հայրենիքները: Տվյալ գործընթացը ի վերջո բերելու էր ու բերեց նրան, որ մարդկությունը ստիպված էր գործ ունենալ Նոր Բյուզանդիայի ստեղծման առաջին խոշոր փորձի հետ՝ ի դեմս Ռուսաստանի, որն իր հովանու տակ վերցրեց հին Բյուզանդիայի բեկորների մի մասը, ինչպես նաև քաղաքակրթական առումով նրան հարազատ, բայց արդեն բզկտված ու կոտորակված Հայաստանը: Բայց Նոր Բյուզանդիայի ստեղծման փորձը տվյալ հանգրվանում չդարձավ համաշխարհային առումով քաղաքակրթությունների հաշտեցման ու համադրության սկիզբ, քանի որ Արևմուտքը և նրա խանձարուրում հզորացած Նոր Հռոմն ի դեմս ԱՄՆ-ի, նրան ներքաշեց երկուսի համար էլ անիմաստ ու կործանարար դիմակայության մեջ: Ուստի Նոր Բյուզանդիայի ստեղծման գործընթացի ժամանակավոր կասեցումը դարձավ նաև Նոր Հռոմի խոր ճգնաժամի նախերգանքը:

Ուստի ԱՄՆ-ի համաշխարհային գերակայության հաստատման դարաշրջանը մարդկային քաղաքակրթության նոր ճգնաժամի սկիզբն է, ճգնաժամ, որի հիմնական դրսևորումը մարդ-բանականի ստեղծած աշխարհի գոյության իմաստի՝ «պատմության իմաստի» ընկալումն էր որպես



«պատմության ավարտ» /Ֆրենսիս Ֆուկույամա/: Բայց շուտով ակնհայտ դարձավ, որ իրականում դա ոչ թե ողջ մարդկության պատմության ավարտն է, այլ ողջ աշխարհը ռացիոնալիզմի սանրիչով համահարթեցնելու /գլոբալացման/ գործընթացի սկիզբը, որը հանգեցնում է հակադիր քաղաքակրթական ազդակների ուժեղացմանը և նրանց գլոբալ դիմակայությանը՝ մարդկության համար հիրավի կործանարար հետևանքներով: Դրա վկայությունն են 2001 թվականի սեպտեմբերի 11-ից հետո աշխարհում սկիզբ առնող զարգացումները: Նրանց հիմնական իմաստը Արևմուտքի ռացիոնալիստական քաղաքակրթության պարտադրումն է ողջ աշխարհին՝ ահաբեկչության դեմ պայքարի և այլ հանրահայտ պատրվակների միջոցով: Նման պարտադրանքը գլոբալացման գործընթացը վերածում է մարդու ներքին էության մեջ ի սկզբանե առկա երկու հիմնական բաղադրիչների մարդ-բանականի ու «բնության զավակի» կործանարար, ինքնաոչնչացնող բախման: Արդյունքում ստացվում է, որ ներկայումս մարդկությունն ունի ընդամենը երկու ճանապարհ: Մարդկությունն ուղղակի հարկադրված է ոչնչացնել ինքն իրեն, կամ վերածվել հարմոնիկ, փոխլրացնող քաղաքակրթության՝ Բյուզանդիայի քաղաքակրթական մեծ ժառանգությունն ընկալելով ոչ թե որպես լոկալ, այլ գլոբալ երևույթ և ողջ երկիր մոլորակը դարձնելով մի նոր՝ համաշխարհային Բյուզանդիա:

Ներկայումս մարդկային ողջ քաղաքակրթությունը ներքնապես ոչնչացնող ազդակները դրսևորվում են Արևմուտքի և առաջին հերթին ԱՄՆ-ի ներքին /ֆինանսա-տնտեսական/ և արտաքին /ակտիվ ծավալապաշտություն/ ճգնաժամերի և որպես դրանց հակաթեզ՝ իր բանական նախասկիզբը մերժող «բնության զավակի» հակազդեցության մասին վկայող հակագլոբալիստական շարժման և մեկ ծայրահեղության պարտադրանքից ծնունդ առնող դիմադրության նույնպես ծայրահեղական դրսևորումների՝ արմատականության, ահաբեկչություն տեսքով: Նրանց բախումը հավասարապես կործանարար է և՛ մեկի, և՛ մյուսի համար: Ուստի այն առաջ է բերում համաշխարհային առումով հարմոնիկ, համադրական քաղաքակրթության՝ Նոր Բյուզանդիայի ձևավորման հրատապ ու սուր պահանջը և այդ առաքելության իրականացման գործին պատրաստ հարմոնիկ, համադրական բնույթ ունեցող լոկալ քաղաքակրթությունների հանդեպ բնական հետաքրքրության մեծացումը՝ նրանց ընդօրինակելու ձգտումը:

Մարդկային քաղաքակրթության ներկա ճգնաժամի հիմքում ընկած է

կյանքի իմաստի երկու հակադիր ընկալումների բախումը՝ նյութականի ու հոգևորի մասին խիստ ծայրահեղացված, աղճատված պատկերացումների տեսքով: Այդ պատկերացումների հեղինակները շեղվել են ինչպես քրիստոնեական ողջ քաղաքակրթության հումանիստական և հարմոնիկ էությունից, այնպես էլ արժեքային առումով նրան արտաքուստ միայն հակադրվող իսլամի ըստ էության՝ նույն հարմոնիկ արժեքային համակարգի ամբողջական ընկալումից: Նման շեղումը գալիս է նրանից, որ քաղաքակրթությունների բախման սպառնալիքը գործնական-քաղաքական գետնի վրա դրսևորվում է որպես «ոսկե միլիարդի» և մնացած աշխարհի հակադրություն՝ հարուստների ու աղքատների մեծ պատերազմ՝ այս անգամ ոչ թե դասական՝ Արևմուտք-Արևելք, այլ նոր, արդիական՝ Արևմուտք + Հյուսիս և Արևելք + Հարավ հարթությունների վրա: Բաժանման սահմանագիծն ինչպես 2000 կամ 1000 տարի առաջ, այնպես էլ այսօր, անցնում է Հայաստանն իր մեջ առնող տարածաշրջանով: Ստացվում է, որ այդ ինքնաոչնչացնող ազդակների բախումն ունի քաղաքակրթական, աշխարհաքաղաքական, տնտեսական,սոցիալական ու հոգևոր բաղադրիչներ, որոնցից յուրաքանչյուրն առանձին-առանձին ներկայումս աստիճանաբար բյուրեղանում է՝ փակելով հարմոնիկ մարդկության բանաձևի ստեղծման ճանապարհը: Մտածել այն մասին, որ երբևէ Արևմուտքը կարող է վերջապես հաղթել Արևելքին, հարուստները՝ աղքատներին կամ քրիստոնեությունը կարող է ոչնչացնել իսլամին, նշանակում է է՛լ ավելի խորացնել մարդկության ինքնաոչնչացման ներկա գործընթացը, քանզի նման հաղթանակը կարող է դառնալ «պատմության ավարտ»: Դրանով մարդկությունը որպես մեկ ամբողջություն կհաղթի, այսինքն՝ կոչնչացնի հենց ինքն իրեն: Ուրեմն, սեփական նյութական ու հոգևոր կեցության հարմոնիկ հավասարակշռության հաստատման խնդիրը մարդկության փրկության միակ ճանապարհն է: Նման հարմոնիայի ստեղծման կարիքը գնալով մեծանում է նաև տեխնոլոգիական առաջընթացի ու նրան ուղեկցող էկոլոգիական աղետի սպառնալիքի մեծացմանը զուգահեռ, երբ առաջընթացը մեխանիկորեն դառնում է հետընթաց՝ աղճատելով առաջինի իմաստն ու նշանակությունը:

Այստեղից է առաջ եկել համաշխարհային կառավարության ստեղծման պահանջը, որը նրա հեղինակների կարծիքով ի վիճակի կլինի կարգավորել օբյեկտիվորեն ձևավորվող անհամամասնությունները: Սակայն այդ խնդիրը լուծելու համար քաղաքական գետնի վրա ներկայումս որդեգրված մեթոդը՝ քաղաքակրթական ազդակներից մեկի կրողը հանդիսացող ուժի՝ Արևմուտքի, մյուսին հաղթելու և իր պայմանները պարտադրելու ձգտումը ինքնին անլուծելի է դարձնում նման անհամամասնությունների կարգավորման խնդիրը: Ուստի անկախ նրանից, թե մոտ ապագայում ինչպես կդրսևորվի համաշխարհային կառավարության ստեղծման պարտադրանքը, նա չի կարող իր մեջ բյուրեղացնել հարմոնիկ մարդկության՝ Նոր Բյուզանդիայի բանաձևը:

Այդ բանաձևը չի կարող ստեղծվել նաև *համաշխարհային կոնսենսուսի* միջոցով, որովհետև ուժի առայժմ միակ բևեռը՝ Արևմուտքը, դեռ երկար է շարունակելու և՛ դիմացինին, և՛ ինքն իրեն ոչնչացնելու գործընթացը՝ մինչև լիակատար ուժասպառություն:

Նման պայմաններում այդ փոխլրացման ու փոխհարստացման օբյեկտիվ պահանջմունքը իր ճանապարհը հարթելու է *բնական ընտրության* ճանապարհով, այսինքն՝ այն պետությունները, որոնք ի վիճակի կլինեն ստեղծել սեփական պատմության ու նրանով միջնորդավորված՝ ազգային ավանդույթի, մշակույթի ու գիտության միջոցով կուտակվող որակական ռեսուրսների վրա հիմնված ներդաշնակ հասարակություններ, ոչ միայն կարող են վերապրել մրցակցային նոր միջավայրում, այլև դառնալ քաղաքակրթական ձգողականության տարածաշրջանային, իսկ հետագայում էլ նույնիսկ՝ համաշխարհային նշանակության օջախներ: Հենց վերջիններիս է վերապահված մոտ ապագայում մարդկության հանդեպ սեփական առաքելությունը իրականացնելու գործը: Քանզի պարտադրանքի ու կոնսենսուսի ձևավորման հեռանկարների բացառումն անխուսափելի է դարձնում գոյության այդ կռվի մեջ ներդաշնակ քաղաքակրթությունների հաղթանակը՝ միմյանց ոչնչացնող հակադիր բևեռների հանդեպ: Նրանք միայն կարող են համադրել և հաշտեցնել՝ մարդ-բանականի անվերջ ձգտումը հասկանալ իրեն շրջապատող աշխարհը՝ «բնության զավակի» վերջինիս հետ ունեցած ներքին անմեկնելի հարմոնիայի հետ և վերապրելով՝ դառնալ ընդօրինակման բնորդներ:

Որպես նման համադրական քաղաքակրթության նախնական բնորդ, Հայաստանն այդ ինքնաոչնչացման բանաձևի հաղթահարման գործում ունի մեծ առաքելություն՝ ողջ մարդկության հանդեպ, քանի որ նա հանդիսանում է այն քաղաքակրթական տիպը, որն իր ներսում պահպանել է հարմոնիկ, համադրական աշխարհի բանաձևը: Եթե ժամանակակից Արևմուտքը՝ ԱՄՆ-ը և ողջ Արևմտյան Եվրոպան առաջին, իսկ Արևելքը՝ իս-

լամական աշխարհը, առաջին հերթին Իրանը, ինչպես նաև Հնդկաստանն ու Չինաստանն այդ ազդակներից երկրորդի կրողն են հանդիսանում, ապա Հայաստանն այդ երկու ազդակների պատրաստի համադրություն է՝ որպես պատմություն, մշակույթ ու քաղաքակրթություն: Այսինքն, նա իր մեջ ներառել է մարդկության պատմական զարգացման մի ամբողջական ցիկլի սկիզբը՝ քաղաքակրթական ազդակների նախնական՝ արիական համադրությունը, ուստի այդ ցիկլի ավարտը, որը ներկայումս հանդես է գալիս որպես նոր հարմոնիայի ծգտում, մարդկությանը վերադարձնում է հենց այն կետին, որի վրա կանգնած է մնացել Հայաստանը:

Սակայն, որպես հարմոնիկ մարդկության պատրաստի բանաձևի կրող, որպես Արևմուտքի ու Արևելքի հաշտեցման բնօրինակ, որպես արիացիների ներքնապես չտարանջատված քաղաքակրթության նախահայրենիք, որպես հետագա դարերի համադրական քաղաքակրթությունների /հելլենիզմ, արևելաքրիստոնեական՝ քաղաքակրթության մարմնավորում/ Հայաստանը արխայիկ, նախնական բնորդ է, ուստի նա կարող է վերստանձնել իրեն վերապահված առաքելությունը, եթե մի կողմից՝ վերադառնա իր ակունքներին, մյուս կողմից՝ առաջ շարժվի դեպի ողջ մարդկության զարգացման ներկա բնագծերը: Նման արտաքուստ հակադիր, բայց խորքում՝ փոխլրացնող շարժումների հիմնավորումը պետք է դառնա ազգային-պետական գաղափարախոսության առաջադրանքը՝ իր մեջ ներառելով ներկայումս փոխադարձաբար միմյանց բացասող գաղափարախոսությունների այն տարրերը, որոնք նպաստում են դեպի համադրություն ձգտող ներկա աշխարհի՝ որպես միասնական ու անբաժանելի օրգանիզմի ընկալմանը:

### *6. Երկիր Դրախտավայրի փիլիսոփայությունը*

Նախ և առաջ քաղաքակրթական ձգողականության տարածաշրջանային օջախ դառնալու և ապա հարմոնիկ մարդկության պատրաստի բնօրինակի իր նախնական դերակատարությունը վերականգնելու համար Հայաստանը ոչ միայն պետք է փորձի հնարավորինս արագ յուրացնել ժամանակակից տեխնոլոգիական հասարակության նվաճումները, այլև այդ հասարակությանը առաջարկել վերջինիս հոգևոր-մշակութային ճգնաժամի հաղթահարման սեփական դեղատոմսը: Դա ժամանակակից տեխնոլոգիական հասարակության հոգևոր առողջացման համար անհրաժեշտ՝ սեփական ակունքներին վերադառնալու, իր նախնական հարմոնիան ընկալելու ու յուրացնելու առաջադրանքն է: Մեր կարծիքով, դրա լավագույն գաղափարական հիմնավորումը Երկիր Դրախտավայրի փիլիսոփայությունն է, որին պետք է ձգտի ժամանակակից տեխնոլոգիական հասարակությունը՝ ազատվելու միակողմանի առաջադիմության ինքնաոչնչացնող ընթացքից: Այդ փիլիսոփայությունը ոչ միայն Հայաստանը՝ Արևմուտքի երկրների համար պատմության, մշակույթի, բնության ու հոգևոր արժեքների անաղարտության խորհրդանիշի վերածելու և այդ ճանապարհով նրանց հոգածության առարկան դարձնելու, այլև հենց Հայաստանի ներսում այդ ամենին համապատասխանող պետություն ու հասարակություն ստեղծելու վճռական պայմանն է: Դրախտավայրը հաշտեցնում է մարդուն ինքն իրեն ու իր շրջապատի հետ, ապահովում է նյութական ու հոգևոր պահանջմունքների հավասարակշռությունը: Ուստի բնական է, որ նման հարմոնիայի ձգտող մարդն այնտեղ պետք է փորձի ներդնել իր նյութականը՝ ստանալու հոգևոր փոխհատուցում: Երկիր Դրախտավայրի փիլիսոփայությունն աշխարհում մեր հանդեպ հետաքրքրության մեծացման միջոցը դարձնելու համար պետք է ոչ միայն քարոզվի ողջ քաղաքակիրթ աշխարհում, այլև դառնա մեր ներքին կեցության ներդաշնակությունն ապահովելու բանալին, ազգային կենսաձևի հիմքը, պետականության մոդելի ներքին հավասարակշռության հիմնական համամասնությունների ապահովման պայմանը: Երկիր Դրախտավայրը աշխարհի և մեզ համար կարող է հանդես գալ որպես մեկ ամբողջություն, եթե այն դառնա ազգային-պետական գաղափարախոսության փիլիսոփայական-աշխարհայացքային հիմքը: Ներքին առումով դա ներդաշնակ հասարակության կառուցման փիլիսոփայություն ու գաղափարախոսություն է, արտաքին առումով՝ այդ ներդաշնակությանը ձգտելու համամարդկային պահանջմունքի արտացոլում: Ուստի ազգային-պետական գաղափարախոսության առանցքը հայկական ներդաշնակ, համադրական քաղաքակրթության ընկալումն է իբրև Երկիր Դրախտավայր՝ այն իմաստավորելով և՛ որպես հոգևոր-պատմական ավանդույթ, և՛ որպես այդ ավանդույթի ժամանակակից կերպավորման հնարավորություն: Առաջինի հիմնավորումը հայի էության մեջ ներդաշնակված՝ մարդկային ողջ քաղաքակրթության երկու հիմնական տարերքների անխզելի միասնության գաղափարն է՝ իր արիական, հելլենիստական, աստվածաշնչյան, արևելաքրիստոնեական

ավանդույթներով և «Ասիայում ապրող եվրոպացիների» կուլտուրտրեգերական դերի մասին եվրոպացի և հայ գիտնականների ու հրապարակախոսների աշխատություններից հայտնի պատկերացումներով: Երկրորդի հիմնավորման գաղափարախոսական առանցքը Դինամիկ հավասարակշռության բանաձևն է՝ որպես արդիական, բայց միաժամանակ՝ հայի էությանը ներդաշնակ հայոց պետականությանն անհրաժեշտ բնորդի գաղափարախոսական հիմնավորում: Այն ներառում է մի կողմից՝ ի սկզբանե մեր ազգին բնորոշ առաքելությունը վերստանձնելու ռազմավարական նպատակը, մյուս կողմից՝ պետականության վերականգնումով այն շարունակելու համար մեզ տրված հնարավորության իրացման մեխանիզմների ամբողջությունը՝ որպես պետության ներքին ու արտաքին ֆունկցիաների ճշգրիտ համադրություն: Դրանով իսկ, Երկիր Դրախտավայրի փիլիսոփայությունը դառնում է քաղաքակրթությունների բախման՝ մարդկության համար կործանարար ճանապարհից հրաժարվելու և ողջ երկիր մոլորակը ներդաշնակ մարդկության օրրան՝ Դրախտավայր դարձնելու Հայաստանի ու հայության քաղաքակրթական առաքելության հիմնավորումը, իսկ Դինամիկ հավասարակշռության բանաձևը՝ այդ առաքելությունը վերստանձնելու ուղիների ու մեթոդների ամբողջությունը:

Ներկայումս, նախնական փուլում, այս երկմիասնական առաջադրանքն իր մեջ ներառում է հետևյալ խնդիրների լուծումը.

ա) Երկիր Դրախտավայրի անանց գաղափարի կրողը դառնալու Հայաստանի իրավունքների պատմական, փիլիսոփայական-աշխարհայացքային և քաղաքական-քարոզչական հիմնավորումները,

բ) Հայաստանին ու հայկական կենսաձևին բնորոշ այն արժեքների վերհանումը, որոնք ապահովում են ներդաշնակ մարդկության ձևավորումը.

I աշխարհի միասնության ու անբաժանելիության վրա հիմնված հայկական հոգևոր-կրոնական ավանդույթի քարոզչությունը,

II Հայաստանի պատմության մարմնավորումը հանդիսացող արժեքների ողջ համալիրի մատուցումը աշխարհին՝ որպես նախնական, չաղճատված, հարմոնիկ քաղաքակրթություն՝քարե դարից մինչև մեր օրերը,

III մեր մշակութային հարուստ ժառանգության մեջ առկա արևմտյան և արևելյան ավանդույթի հարմոնիկ ներդաշնակության քաղաքակրթական արժեքի ու նշանակության քարոզչությունը,

IV Հայաստանի բնության աննախադեպ ձգողական ուժի և նրա բարիքների որակական բաղադրիչների ներկայացումը՝ որպես Երկիր Դրախտավայրին բնորոշ նախնական մաքրության ու անաղարտության խորհրդանիշ,

V Հայաստանում ժամանակակից տեխնոլոգիական հասարակության հիմնական արժեչափերն ընկալելու համար անհրաժեշտ որակական ռեսուրսների առկայության մասին խոսակցությունների փոխարինումը նրանց բացահայտմանն ուղղված տարածաշրջանային գիտական ու գիտակրթական կենտրոնների ձևավորման և դրանց հիման վրա՝ որակապես նոր արտադրությունների ստեղծման գործնական քաղաքականությամբ:

*Ամփոփենք.* համաշխարհային քաղաքակրթության ներկա ճգնաժամի հիմքում առկա «Նոր Հռոմի ճգնաժամ և Նոր Բյուզանդիայի փնտրտուք» բանաձևից բխող՝ մարդկությունը մեկ միասնական, ներդաշնակ քաղաքակրթություն՝ Նոր Բյուզանդիա դարձնելու հրատապ պահանջմունքն իրականություն դարձնելու գործընթացն առաջ է բերում *պարտադրանքի* միջոցով այդ նպատակին հասնելու մեթոդների ճգնաժամ: Մյուս կողմից՝ անհնար է դառնում *կոնսենսուսի* ձեռքբերումը այդ հակադիր տարերքների միջև, քանզի նրանց հակադրությունը հանդես է գալիս առաջին հերթին ոչ թե որպես քաղաքական կամքի կենտրոնների, այլ հստակորեն բյուրեղացած արժեքների անլուծելի հակասություն /կոլիզիա/: Ուստի, ակնհայտ է դառնում, որ ներդաշնակ մարդկության ձևավորման գործընթացն իր ճանապարհը հարթելու է *բնական ընտրության* միջոցով: Մրցակցային նոր միջավայրում, ուր շարունակվելու է 2001թ. սեպտեմբերից հետո ուժեղացող դիմակայությունը, վերապրելու են ներդաշնակ քաղաքակրթությունները,որոնք դառնալու են տարածաշրջանային և ապա՝ համաշխարհային ձգողականության օջախներ, իսկ հակադիր բևեռները մեկը մյուսին ոչնչացնելու նպատակադրումով՝ ուժասպառ են անելու միմյանց: Նման օջախներից մեկը դառնալու և սեփական քաղաքակրթական առաքելությունը վերստանձնելու համար Հայաստանն իր ազգային-պետական գաղափարախոսությունը պետք է կառուցի Երկիր Դրախտավայրի փիլիսոփայության ու նրանից բխող՝ աշխարհի և ինքն իր հետ ներդաշնակ պետականության ձևավորման բանաձևի՝ Դինամիկ հավասարակշռության բանաձևի վրա:

## *7. Ազգային-պետական գաղափարախոսության էությունն ու բովանդակությունը*

Հայոց նախնական, անաղարտ ինքնության վերականգման, այսինքն՝ մեր բուն էությանը բնորոշ հատկանիշները բացահայտելու և միաժամանակ՝ աշխարհի հետ նրանց դինամիկ կապը վերականգնելու համար ազգային-պետական գաղափարախոսությունն առաջադրում է ոչ միայն համամարդկային տարողություն ունեցող սեփական, հայկական իդեալը՝ Երկիր Դրախտավայրի գաղափարը, այլև ներկա աշխարհակարգում այն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ երկու, արտաքուստ հակադիր շարժումների կարգավորման ունիվերսալ մեթոդը՝ Դինամիկ հավասարակշռության բանաձևը: Այդ շարժումներից առաջինը պրոգրեսի անկասելի ձգտումն է, որն ի սկզբանե բնորոշ է հայ տեսակին, իսկ երկրորդը՝ սեփական ակունքներին վերադառնալու և նրանց անաղարտությունը վերականգնելու ու պահպանելու ցանկությունն է: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ ազգային պետական գաղափարախոսությունն առաջադիմական է որպես պետության զարգացման դինամիզմն ապահովող մեթոդ և միաժամանակ պահպանողական և անգամ՝ «հետադիմական» որպես սեփական ակունքներին վերադառնալու ճանապարհ: Նա փորձում է պրոգրեսը ծառայեցնել մարդուն և նրա միջոցով՝ ազգին ու պետությանը: Ուրեմն նա պրոգրեսը համարում է *սեփական ինքնության վերականգնման, ամբողջացման ու պահպանման գիտատեխնոլոգիական բաղադրիչի հզորացում:* Երկիր Դրախտավայրի համամարդկային իդեալը և այն իրականություն դարձնելու ներկա հանգրվանում անհրաժեշտ առաջադիմական-պահպանողական մեթոդը՝ Դինամիկ հավասարակշռության բանաձևը, ապահովում են արդիականության պայմաններում հայոց պետականության անվտանգ գոյատևման և անկաշկանդ զարգացման համար պարտադիր հիմնական, առանցքային արժեչափերը: Համամարդկային իդեալի և այն իրականություն դարձնելու սեփական՝ զուտ հայկական մեթոդի առաջադրումով ողջ **պետության և նրա քաղաքացիների՝ միմյանց և արտաքին աշխարհի հետ հարաբերությունների գաղափարախոսական արտացոլումն ու հիմնավորումը՝ ազգային-պետական գաղափարախոսությունը** Հայաստանի ու հայության միասնականացման դարավոր երազանքին հասնելու նոր ճանապարհ է բացում Հայոց պետականության ու հայ ժողովրդի առջև: Դրանով Հայաստան պետությունը սահմանում է իր տեղն ու դերը ողջ մարդկային քաղաքակրթության զարգացման հոլովույթում ու միաժամանակ փորձում քայլ առ քայլ մեծացնել ու ընդարձակել այն, մի կողմից՝ մարդկությանն առաջարկելով սեփական դրական իդեալը, մյուս կողմից՝ ինքն իր համար ստեղծելով նման իդեալին համապատասխանող պետություն ու հասարակություն: Այսպիսով, ազգային-պետական գաղափարախոսությունը որպես պետության միջոցով համադրվող ազգային ու համամարդկային նպատակների միասնության ու անխզելի կապի բանաձև, փորձում է Հայաստանն ու հայ ժողովուրդը համաշխարհային պատմաքաղաքական պրոցեսի օբյեկտից՝ պետականազուրկ և գոյատևման խնդիրներ լուծող ազգից, դարձնել այդ պրոցեսի սուբյեկտ՝ պետականաստեղծ ու միաժամանակ՝ որոշակի գործառույթ, իսկ հետագայում նաև առաքելություն իրականացնող ազգ:

Նման արմատական հեղաշրջումը հիմնավորապես փոխում է ազգային շահի, նպատակի և իդեալի մասին մեր ավանդական պատկերացումների ողջ համակարգը: Վերջիններս տեսական հարցադրումների հարթությունից տեղափոխվում են գործնական-քաղաքական գետնի վրա և դրվում իրականանալի դառնալու ճանապարհին՝ որպես մրցակցային նոր միջավայրում Հայաստան պետության հզորացման և իր շրջապատի վրա նրա ազդեցության մեծացման ռազմավարության բաղադրիչներ: Այդ պայմաններում առաջ է գալիս նաև տվյալ հասկացությունների արտաքին ձևի պահպանման, բայց բովանդակության վերափոխման խնդիրը:

Ներկայումս ազգային գերագույն շահը ազգն աշխարհին ներկայացնող և ու նրան աշխարհից պաշտպանող պետության շահն է, որը տարանջատվում է ընթացիկ և հեռանկարային շահերի: *Ընթացիկ շահը* յուրաքանչյուր կոնկրետ պահին ճշտվող անհատի, հասարակության, պետության և Սփյուռքի շահերի հավասարակշռված հանրագումարն է, որը սահմանվում է պետական ինստիտուտների կողմից:

*Հեռանկարային շահը* ազգի ձգտումների արտահայտիչը հանդիսացող պետության քաղաքակրթական ձգողականության և իր շրջապատի վրա ունեցած ազդեցության մեծացումն է, որը թույլ է տալիս ողջ աշխարհի համար ընկալելի ու ընդունելի դարձնել Հայաստան պետության ու հայ ժողովրդի սեփական հայրենիքում ամբողջանալու և այդ Հայրենիքն ամբողջացնելու ազգային իդեալը՝ այն վերածելով ոչ միայն Հայաստանի, այլև ողջ մարդկության ներդաշնակության վերականգնման պայմանի:

## *8. Դինամիկ հավասարակշռության բանաձևը*

Իր իդեալները կյանքի կոչելու այսինքն՝ սեփական արժեքային համակարգի գործառական նշանակությունը հստակեցնելու համար ազգային-պետական գաղափարախոսությունն առաջադրում է ազգային պետականության ձևավորումը, հզորացումը և նրա միջոցով՝ սեփական նպատակների հետապնդումը իրականանալիության հունի մեջ տեղափոխելու գաղափարախոսական մոդելը՝ Դինամիկ հավասարակշռության բանաձևը:

Իրականացնելով պետության ու նրա քաղաքացիների վերաբերմունքի կարգավորումը՝ պետության կենսագործունեության առանձին ոլորտների հանդեպ, և ընթացիկ ու հեռանկարային խնդիրների սահմանազատումը, Դինամիկ հավասարակշռության բանաձևը յուրաքանչյուր կոնկրետ ժամանակահատվածի համար սահմանում է ինչպես պետության, հասարակության, յուրաքանչյուր քաղաքացու և Սփյուռքի ընթացիկ շահերի, այնպես էլ ողջ պետականությանը զարգացման դինամիզմ հաղորդելու համար անհրաժեշտ ընթացիկ ու հեռանկարային՝ ռազմավարական նպատակների ճշգրիտ հաշվեկշիռը /բալանսը/: Նման դինամիկ /փոփոխվող/ և ստատիկ /կայուն/ արժեչափերի համադրությունը ծառայում է մի կողմից՝ պետականության առջև դրված ռազմավարական խնդիրների կայուն համակարգի պահպանմանը և մյուս կողմից՝ պետության, հասարակության, քաղաքացիների և Սփյուռքի շահերի այնպիսի հաշվեկշռի ապահովմանը, որն առավելագույն դինամիզմ է հաղորդում այդ նպատակների իրականացման գործընթացին: Դրանով իսկ, Դինամիկ հավասարակշռության բանաձևը դառնում է ներքին հակադրություններից դեպի ներդաշնակություն ձգտող պետականության համակարգի ձևավորման գաղափարախոսական մոդելը, այսինքն՝ ազգային համաձայնության բանաձևը, ազգի նոր՝ պետական կեցության պայմաններում: Նման գաղափարախոսական մոդելից կոնկրետ քաղաքական-սահմանադրական լուծումների անցնելու խնդիրը դիտարկելով որպես ընթացիկ-քաղաքական հիմնահարց, ազգային-պետական գաղափարախոսությունը սահմանում է ազգային պետականության առավել ընդհանուր խնդիրների գաղափարախոսական լուծումներ: Վերջիններիս կոնկրետացման առաջադրանքը նա թողնում է ազգային անվտանգության ապահովման **խնդիրը** ազգային-պետական գաղափարախոսության **սկզբունքների** հետ համադրելու առաքելություն ունեցող ազգային-քաղաքական ընտրախավին, որը մեզանում դեռևս չի ձևավորվել՝ համապատասխան սելեկցիոն մեխանիզմների բացակայության պատճառով: Վերջինիս բյուրեղացման նպատակով ազգային-պետական գաղափարախոսությունն առաջ է քաշում պրոֆեսիոնալիզմի և բարոյական որակների ճիշտ համադրության միջոցով սելեկցիոն կայուն մեխանիզմների ստեղծման խնդիրը, որոնք հիմնված են լինելու.

ա/ իշխանության երեք ճյուղերի,

բ/ պետական ծառայության և քաղաքական գործունեության,

գ/ պետական ապարատի ու տնտեսական գործունեության,

դ/ քաղաքական գործունեության ու տնտեսության սահմանազատման ու տարանջատման գործուն աշխատակարգերի վրա:

Միայն նշված սահմանազատումների ու տարանջատումների վրա հիմնված սելեկցիոն մեխանիզմների գոյությունը թույլ կտա կյանքի կոչել ազգային-պետական գաղափարախոսության կողմից առաջադրվող ազգային պետականության գաղափարախոսական մոդելը՝ Դինամիկ հավասարակշռության բանաձևը, որի.

ա/ **պետական-քաղաքական առանցքը,**- Միասնության /արտաքին ճակատ/ և Համաձայնության /ներքին ճակատ/ համամասնությունների ապահովման խնդիրն է՝ որպես ազգային-պետական գաղափախոսության բաղկացուցիչ տարրերից առաջինը,

բ/**տնտեսական առանցքը,**- ազատական գաղափարախոսության վրա հիմնված ազատ շուկայի և սոցիալիստական գաղափարախոսության վրա խարսխված սոցիալական արդարության սկզբունքների միջև օպտիմալ համամասնությունների ապահովման խնդիրն է, որը հանդիսանում է ազգային-պետական գաղափարախոսության բաղկացուցիչ տարրերից երկրորդը,

գ/ **սոցիալական առանցքը,**- հարստության և աղքատության չափի կարգավորման խնդիրն է՝ որպես զարգացման առավել բարձր տեմպերի ապահովման համար անհրաժեշտ առողջ շերտակազմավորման այնպիսի բանաձև, որը միտված է հասարակության ներսում միջին խավի գերակշռության հաստատմանը. այս հարցադրումը ազգային-պետական գաղափարախոսության երրորդ բաղկացուցիչն է,

դ/ **հոգևոր-մշակութային առանցքը,**- ազգային և համամարդկային արժեքների համադրության ու սինթեզի գաղափարն է՝ որպես արդիականության պայմաններում ազգի հոգևոր-մշակութային ինքնատիպության պահպանման հիմքի վրա համամարդկային արժեքների յուրացման բանաձև, որը ազ-

գային պետական գաղափարախոսության չորրորդ բաղկացուցիչն է,

ե/ **կառուցվածքային առանցքը,**- կենտրոնացված կառավարման և տեղական ինքնակառավարման միջև օպտիմալ հարաբերակցության և գործառույթային համամասնությունների ապահովման խնդիրն է, որը ազգային պետական գաղափարախոսության հինգերորդ բաղադրիչն է,

զ/ **ազգային-քաղաքական առանցքը,**- Հայրենիքի և Սփյուռքի տարբերությունների հաղթահարման և միասնական ազգային-պետական օրգանիզմի մեջ նրանց աստիճանական ինտեգրման հնարավորությունների մեծացման բանաձևն է, որը ազգային պետական գաղափախոսության վեցերորդ բաղադրիչն է:

Այս հիմնական բաղադրիչներից կամ բաղկացուցիչ տարրերից զատ, գոյություն ունեն նաև ազգային-պետական գաղափախոսության մեջ ներառվող բազմաթիվ այլ խնդիրներ ու նպատակներ, բայց հենց նման առանցքային խնդիրների կարգավորումն է հանդիսանում Դինամիկ հավասարակշռության ընդհանուր բանաձևի բուն նպատակը: Ահա նրա գրաֆիկական պատկերը.

**ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐԸ**






# ՎԵՐՋԱԲԱՆ

*Եզրակացություններ և առաջարկություններ*

Վերջին հազարամյակի համայնքային և ազգային կեցության արդյունքում բյուրեղացած մեր ձեռքբերովի էությունը և նրանից բխող ազգային գաղափարախոսությունը մարմնավորում են այն հսկայական ազգապահպան իներցիան, որը հայությունը կուտակել է դարերի ընթացքում, ուստի նրանց դեմ ճակատ հարդարելու ցանկացած փորձ ոչ միայն անօգուտ, այլև վնասակար զբաղմունք է: Այդ ազգապահպան իներցիան թեև մեզ շարունակում է վերապահել համաշխարհային պատմական պրոցեսի օբյեկտի նվաստացուցիչ դերը, սակայն միաժամանակ ցեմենտում է մեր ազգային օրգանիզմի դիմադրողականության հիմնական կռվանները: Ուստի պետական անկախության ձեռքբերումը ոչ թե համայնքային ու ազգային կեցությունից բխող նախկին արժեքային համակարգի ոչնչացման, այլ նրա գործառական նշանակության ընկալման ու յուրացման հիման վրա՝ որակապես նոր գաղափարախոսության ձևավորման նախապայմանն է, որը պետք է հաստատվի ոչ թե մեր ձեռքբերովի ազգային էության, այլ մեր բուն էությունը կազմող հայկականության արժեքային համակարգի ամբողջական, համադրական ընկալման վրա: Այդ ամբողջականությունը մեզանում խախտվել է պետականության կորստի արդյունքում, ուստի Հայաստանի անկախության վերականգնումով պայմաններ են ստեղծվել ինքներս մեզ որպես ողջ մարդկության հարմոնիկ մասնիկն ընկալելու միջոցով՝ մեր բուն էությունը վերականգնելու և այդ էությանը բնորոշ գործառույթներն իրականացնելու համար: Նման պայմաններում Հայաստանը վերածվելով հայ ժողովրդի հազարամյակներ շարունակ ստեղծած քաղաքակրթության պահպանման ու ամբողջացման հիմնական կռվանի, պարտավոր է վերստանձնել իր ավանդաբար ունեցած դերակատարությունը համաշխարհային պատմաքաղաքական պրոցեսում: Այդ դերակատարության վերստանձնումով Հայաստանը կրկին կդառնա հազարամյակների պատմություն ունեցող իր քաղաքակրթական մեծ առաքելության շարունակողը՝ երրորդ հազարամյակ մուտք գործող մարդկության ընտանիքում հանդես գալով սկզբում որպես քաղաքակրթական ձգողականության տարածաշրջանային, իսկ ապա նաև՝ համաշխարհային նշանակության օջախ: Նման գործառույթների իրականացման միջոցով Հա-

յաստան պետությունն իրենով մարմնավորվող հայկական քաղաքակրթության պահպանման ու ամբողջացման խնդիրը դուրս կբերի խիստ անձուկ, օտարի կողմից հավերժորեն մերժվող ազգային դատի շրջագծից՝ Հայ Դատը դարձնելով ողջ մարդկության դեպի ապագան միտված արդարության մեծ իդեալի անքակտելի մասը:

Հայկական քաղաքակրթության համադրական բնույթից բխող՝ քաղաքակրթությունների հաշտեցման ու ներդաշնակման գործառույթների իրականացումը մարդկության անցյալից դեպի ապագան միտված երազանքի՝ Երկիր Դրախտավայրի գաղափարի և այն կյանքի կոչելու գործնական աշխատակարգերի մարմնավորումն է: Հայաստան պետության միջոցով նման խնդրի առաջադրումն ու լուծումը կարող է Հայաստանը դարձնել համաշխարհային քաղաքակրթության խորացող ճգնաժամի հաղթահարման՝ սկզբում լոկալ-տեղային, իսկ հետո ավելի լայն՝ համաշխարհային նշանակություն ունեցող այն բնորդը, որի ամրապնդումը կդառնա մարդկային քաղաքակրթության որակական նոր թռիչքի համար անհրաժեշտ հիմքի, ատաղձի, թթխմորի պահպանման ու ընդարձակման առաջադրանք: Ի սկզբանե իրեն բնորոշ, բայց ճակատագրի դաժան հարվածների արդյունքում կորցրած այդ առաքելական դերակատարության վերստանձնումով Հայաստան պետությունը հայ ժողովրդին կրկին կդարձնի համաշխարհային պատմաքաղաքական պրոցեսի գործուն սուբյեկտը՝ ապահովելով ոչ միայն նրա գոյատևման հավերժությունը, այլև զարգացման, առաջընթացի նոր և աննախադեպ հնարավորությունները:

Հիմնվելով այս եզրակացությունների վրա, անհրաժեշտ ենք համարում մեր կողմից առաջարկվող նոր՝ ազգային-պետական գաղափարախոսության ընդհանուր ուրվագծերն ամբողջացնելու համար ներկա հանգրվանում լուծել հետևյալ խնդիրները.

ա/ **Հայաստան-Երկիր Դրախտավայրի պետական դոկտրինայի** մշակումը իր.

I **պատմական հիմնավորմամբ՝** որպես քարե դարից սկսած մարդկային քաղաքակրթության օրրանը հանդիսացող և այդ քաղաքակրթությանը բնորոշ ներքին հարմոնիան անաղարտորեն պահպանող երկրի ու ազգի մասին պատկերացումների հիմնավորված, կայուն համակարգ՝ արիական նախահիմքի մասին տեսությանը գումարելով հայկական քաղաքակրթության ներքին ներդաշնակության փաստն ապացուցող հետագայի բոլոր հիմնական իրողությունները, որոնք հանդես են եկել անտիկ աշխարհում, միջնադարում, նոր ժամանակներում՝ ընդհուպ մինչև մեր օրերը,

II **հոգևոր-կրոնական հիմնավորմամբ՝** ուշ միջնադարի հայկական գաղափարախոսության միջոցով աշխարհին մատուցված Երկիր Դրախտավայրի գաղափարով և հայկական միաբնակ եկեղեցու՝ մի կողմից ողջ քրիստոնեական հավատքի ու եկեղեցու դուալիստական հակադրության /քաղկեդոնականության/ և մյուս կողմից՝ քրիստոնեության և իսլամի փոխբացասող դիմակայության հանդեպ միաբնակության սկզբունքից բխող՝ իր փոխզիջման ու փոխհաշտեցման առաքելությամբ,

III **Հայկական պետա-քաղաքական ավանդույթի** հիմքում առկա՝ Արևմուտքի և Արևելքի միջև խաչմերուկային դերից բխող նոր գործառույթի՝ տարածաշրջանում Արևմուտքի ու Հյուսիսի թափանցումները վերջիններիս հակադրվող քաղաքակրթական ու աշխարհաքաղաքական ազդակների հետ հաշտեցնելու ու համադրելով՝ հզորանալու ունակության գաղափարաքաղաքական հիմնավորմամբ,

IV **Հայաստանի մշակութային մեծ ժառանգության** և նրա ժամանակակից դրսևորումների մեջ Արևմուտքի և Արևելքի արժեքային համակարգերի պատրաստի ու չաղճատված սինթեզի առկայության անժխտելի փաստն ապացուցող կոնկրետ բնագավառների ներկայացումով՝ ողջ աշխարհին,

V **Հայոց տնտեսական հանճարի** խաղացած դերի վերհանումը՝ Եվրոպայի ու Ասիայի տնտեսական շփումների ու փոխգործակցության առնվազն վերջին 2 հազարամյա պատմության մեջ և այն շարունակելու անհրաժեշտության հիմնավորումը,

VI **Համաշխարհային քաղաքակրթության ներկա ճգնաժամի** և նրանից բխող սպառնալիքների հաղթահարման համար անհրաժեշտ համադրական, հարմոնիկ մարդկության գաղափարի իրականացնողը դառնալու՝ Հայաստանի առաքելության հռչակումը երկու քաղաքակրթությունների ու կրոնների շփման հանգույցի վրա,

բ/ **Հայաստան-Երկիր Դրախտավայրի** պետական դոկտրինային համապատասխան՝ արտաքին աշխարհի հետ մեր հարաբերությունները և պետականության քաղաքական, տնտեսական, հոգևոր-մշակութային և այլ

համամասնությունները կարգավորող՝ Դինամիկ հավասարակշռության բանաձևի կիրարկմանն ուղղված սահմանադրական, քաղաքական ու մանավանդ՝ տնտեսական բարեփոխումների համալիր ծրագրի մշակում՝ նկատի ունենալով քաղաքակրթական, քաղաքական ու տնտեսական ձգողականության տարածաշրջանային օջախը դառնալու առաջադրանքի իրականացմանը խոչընդոտող՝ արտաքին ու ներքին արգելքների ու անհամամասնությունների հետևողական հաղթահարման անհրաժեշտությունը,

գ/ **առաջանցիկ բնույթ ունեցող** նախաձեռնությունների համալիր ծրագրի մշակում, որոնք պետք է ուղղված լինեն **Հայաստան- Երկիր Դրախտավայրի պետական դոկտրինան** արտաքին աշխարհում քարոզելու և նրա գաղափարաքաղաքական նպատակներով շահագրգիռ օտարերկրյա քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլ շրջանակների նույնիմաստ ջանքերը մեր երկրում կենտրոնացնելու միջոցով՝ Հայաստանի քաղաքական կշիռը, ներդրումային գրավչությունը և դրանից բխող՝ տնտեսական հնարավորությունները, ինչպես նաև հոգևոր-մշակութային կամրջի դերակատարությունը կտրուկ կերպով մեծացնելու առաջադրանքների իրականացմանը:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1.Ե՞րբ է ձևավորվել ազգային գաղափարախոսությունը ..... 8

2.Ազգային գաղափարախոսության բյուրեղացման գործընթացը.....11

3.Հայ գաղափարախոսական մտքի արհեստական երկփեղկումը.....15

4. Ազգային գաղափարախոսությունը որպես Հայրենիք-Սփյուռք գաղափարական կամրջի հիմք .....19

5. «Ազգային գաղափարախոսություն» հասկացության ծագումը. նրա նենգափոխման փորձերն ու ձևախեղման աշխատակարգերը..... 22

6.Հաստատումներ ու նախնական եզրակացություններ..... 29

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1. Հայոց ազգային գաղափարախոսության առանձնահատկությունները..... 32

2.Ազգային գաղափարախոսության քաղաքական նպատակները..... 35

3. Ազգային գաղափարախոսության փիլիսոփայական-աշխարհայացքային հիմքերը..... 36

4. Ազգային գաղափարախոսության արժեքային համակարգը. ազգային արժեքների դրսևորման մակարդակները և նրանց պաշտպանության ուղիները..... 41

5. Ազգային գաղափարախոսության գործառույթները պետականության պայմաններում ..... 44

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ
1.Արդիականությունը և ազգային գաղափարախոսությունը ..... 47
2.Հայկական ինքնատիպ քաղաքակրթության էությունը..... 49
3.Արդիականությունը և Հայաստանի ու հայության
քաղաքակրթական առաքելությունը..... 53

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
1. Նոր գաղափարախոսության անհրաժեշտությունը..... 60
2. Ազգային անվտանգության համադրույթը որպես «ունիվերսալ
զսպաշապիկ»..... 61
3.Ազգային շահերի ընկալումը մրցակցային
նոր միջավայրում..... 64
4.Ազգային-պետական գաղափարախոսության քաղաքական
նպատակները..... 69
5.Համաշխարհային քաղաքակրթության ճգնաժամը և նրա
հաղթահարման ուղիները..... 71
6. Երկիր Դրախտավայրի փիլիսոփայությունը..... 76
7. Ազգային-պետական գաղափարախոսության էությունն ու
բովանդակությունը..... 80
8. Դինամիկ հավասարակշռության բանաձևը..... 82

ՎԵՐՋԱԲԱՆ
Եզրակացություններ և առաջարկություններ..... 85



# «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառացած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, Ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոխում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսևորվում քաղաքակրթությունների շփման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գենոֆոնդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

## *ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ*

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,
- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

**ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝**

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

**բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝**

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

**գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝**

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,
- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,
- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

**դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում՝**

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,
- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,
- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,
- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,
- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,
- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,
- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,
- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

## *ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով մի շարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտություն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում

բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

*«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝*

- արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառույթները,
- ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. էություն, բովանդակություն,
- հայկական շարունակականության հայեցակարգը,
- ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,
- ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,
- ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

- Հայոց Ցեղասպանության ճանաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,
- Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,
- Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառույթները,
- ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,
- ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,
- գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,
- անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

*«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.*

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հագևոր-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,
- մշակութային անվտանգության հիմնադրույթներ,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:



«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

**Անդրանիկ Մարգարյան** - ՀՀ Վարչապետ
**Մանուկ Թոփուզյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
**Կարինե Կիրակոսյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ
**Լևոն Մկրտչյան** - ՀՀ Կրթության և գիտության նախարար
**Տիգրան Սարգսյան** – ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ
**Արա Ավետիսյան** – ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝
Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝
Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73
Ֆաքս (374 1) 44-04-73
E-mail: noravank@arminco.com